



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




L6n

1571, 2341







1999

2281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒԹԻՒՆ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ

ԱԴՐԱԳԻԱԿԱՆ ԾՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԿՈՅՑ

ՅԱԳՈՅՈՅ Հ. Հ.

Ա. ՁՎԱԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Պետրոսի Ա. Շանչեանց

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՊԱԳԵԼԱԿԱՆ ԱԹԱՋՈՅՑ,

ՄՐՅՈՑ ՑԱԿՈՎՐԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

1873



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷջՄԻԱՃԱՆԻ

S. S. Գ Ե Ո Ր Գ Ա Յ

ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԴԻ

ՊԱՏՐԻԱՐքԻ ՄՐԲՈՅ ԵՐՈԽԱԴԱԿԵՄԻ

S. Ե Ս Ա Յ Ե Ա Յ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼԱԽՈՅ

S. Մ Կ Ր Տ Զ Ի


ՄՐԲԱՋԱՆ ԱՐքԵՊԻՍԿՈՊՈՍԻ

41521-60

ՀԲ. 1576 ՀՀՀ

“Հաւատագի վասն որոյ եւ, խօսեցայ”  
Բ. Կողմ. Դ. 13:

Ըստ -



Եթէ ոք կամի զինի իմ դալ՝ ուրասցի  
զանձն, եւ առցէ զլսաչ իւր՝ Եւ եկոցէ  
զինի իմ. Առ Փ. 24:

# ՀԱՄԱՌԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

—  
—  
—

Կրօնի վերաց առ հասարակ :

**Կ**րօնն է ճանաչել, սիրել զԱստուած և ծառայել նմա . վասն զի մարդ, առանց ճանաչելու, սիրելու եւ պաշտելու զԱստուած, կարող չէ հանգիստ և երջանիկ լինիլ <sup>(1)</sup>:

**Կ**րօնն է գործնական գիտութիւն, որ Աստուածմէ հեռացած մարդը կրկնն կը մօտեցնէ, կը կապէ և նորա հետ կը միացընէ <sup>(2)</sup>:

---

(1) Կրօն բառը՝ կիրք բառէնէ կը ծագի, այն նշանակութեամբ որ զԱստուած ճանաչեն մի հզօր ցանկութիւն և անդուլ փափաք է մարդոյ մէջ, որ կը ատիպէ որոնել զԱստուած, ճանաչել, սիրել և ծառայել նմա :

(2) Եւրոպացի աղքաց լեզուուաւ կրօն բառը թէ չիգիս կ'ասուի . թէ՝ է մասնիկ ինչ, որ կրկնումն կը նշանակէ . չիտարէ կը նշանակէ կապել, իսկ կապել՝ կը նշանակէ երիտ հեռաւորը միացնել:

Կրօնը կ'ուսուցանէ թէ մեղքը ո՞ր  
քան հեռացուցած է զմեզ Աստուծմէ ,  
և թէ ի՞նչ հնարքով կամ ճանապարհով  
կարող եմք մօտենալ Աստուծոյ և հաշ-  
տուիլ նորա հետ : Բայց կրօնի լոկ ուսու-  
մըն կամ իմացումն անպատճ կը լինի եւ  
աւելի դատապարտութիւն կը բերէ մեր  
գլխոյն , եթէ գործով եւս ցոյց չը տանք  
մեր իմացածն ու սոլորածը : Միայն կրօն  
իմանալով՝ մէք չեմք միանար Աստուծոյ  
հետ , այլ երբ կը սիրեմք և միանգամայն  
կը հնազանդիմք նմա . “ Եթէ զայս գի-  
տէք , երանելի եւս էք՝ եթէ առնիցէք  
զայս ” : Յովի . ձԳ . 17 :

Ուրեմն՝ անշուշտ պէտք է գործ դր-  
նեմք թէ կրօնի տուած եւ ուսուցած  
հնարքներն , և թէ այն օգնութիւններն ,  
զոր միշտ Աստուծած կը տայ մեղ , մեղքէ  
և դատապարտութենէ ազատուելու հա-  
մար : Պէտք է հնազանդիմք Աստու-  
ծոյ մեր հոգւոյ ամեն զօրութեամք – սի-  
րեմք զԱստուծած սրտով , հաւատանք նո-  
րա ճշմարտութեանց՝ մտքով , և հնա-  
զանդիմք նորա պատուիրանաց՝ կամքով ,  
և կատարեմք յօժարութեամք :

Կրօնն է մարդոյ համար ԱՄԵՆԱԿԱՐԵ-

ԷԱԲ ԳԻՏՈՒԹԻՒՆ . Վասն զի՞ կայ Աստուած  
ամենակարող ամենակատար, արարիչ, Տէր  
մեր եւ մարդո առանց Նորան մօտե-  
նալու կարող է երջանիկ լինիլ : Վասն  
զի՞ միայն Աստուծոյ մէջ կարող եմք գըտ-  
նել հոգւոյ հանդսատութիւն, սրաի խաղա-  
ղութիւն, լուսաւորութիւն, զօրութիւն,  
միսիթարութիւն . օգնութիւն և յօս, ո-  
րոց մէք միշտ կարօտ եմք մեր բովանդակ  
կենաց մէջ . առաւելապէս մեր նեղու-  
թեանց մէջ և մանաւանդ մեր մահուան  
մերձենալու ժամանակ : Ուստի կրօնի ու-  
սումն ամենէն գլխաւոր և ամենէն կարե-  
ւոր գիտութիւնն ու պարտաւորութիւնն  
պէտք է լինի մարդոյ համար :

Կրօնի ուսումն մանկութենէ պէտք է  
սկսուի, վասն զի՞ մարդ ամեն հասակի մէջ  
եւս կատարելու պարտաւորութիւններ  
ունի : Մարդոյ բոլոր կեանքը պէտք է ըն-  
ծայ լինի Աստուծոյ : “ Եւ յիշեա զարա-  
րինքո յաւուր մանկութեանքո ” . Ժող.  
Ժ. 1 : Մարդ օր ըստ օրէ պէտք է աճի  
և զօրանայ սրբութեան մէջ : Օր ըստ օրէ  
պէտք է աւելի մօտենայ Աստուծոյ : “ Ա-  
ճեցէք շնորհօք և գիտութեամք Տեառն  
մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ” : Բ.

Պետ. Գ. 18 :

**Գլխաւոր ՀԽՄՆ ԿՐՕՆԻ Է Աստուած,**  
ոյսինքն գոյութիւնն Աստուածոյ, որ գոյ  
Աստուած, Հոգի յաւիտենական և պատ-  
ճառ ամենայնի, որ ինչ յերկինս և որ ինչ  
յերկրի : Ուրեմն՝ ով որ կը մօտենայ Աս-  
տուածոյ, պէտք է հաւատայ, որ Նա է :  
“Հաւատալ արժան է այնի, որ մերձենոց  
առ Աստուած՝ թէ է Աստուած” :

Աստուած իւր գոյութիւնը տպաւո-  
րած է մարդոց Մարդի մէջ, Խղճմանքի  
մէջ և իւր Խօսքի մէջ :

**ՄԵՏՔԸ կը հաստատէ,** որ կայ մի Ըս-  
կրզբնապատճառ բոլոր արարածոց, վասն  
զի ոչ ոք կարող չէ ինքն իրեն՝ կեանք տալ :  
Կը հաստատէ միտքն, որ այս Սկզբնա-  
պատճառն Հոգի է, վասն զի կան Հոգե-  
ւոր արարածներ : Որովհետեւ ոչ ոք չէ  
կարող տալ ուրիշն այն կատարելութիւ-  
նը, ինչ որ ինքն չունի : Ուրեմն կայ մի հո-  
գեւոր Սկզբնապատճառ ամեն արարածոց  
և ինքն է անակլիպքն և անվախճան, այս-  
ինքն յաւիտենական :

**ՄԻՒՈՔԸ՝ տեսնելով աշխարհի կատա-  
րեալ կարդը,** որ նշան է ամենիմաստու-  
թեան, ամենակարողութեան և ամենա-

բարութեան՝ կը խօստովանի, որ կայ մի  
պատճառ հոգեւոր և ամենակարող, որ  
առեղծած է ամենքը։ Այս դատովութիւ-  
նըն այնշափ պարզ է եւ յայտնի ամենայն  
մարդկան, որ քնառ մեկնութեան կարօտ  
չէ։ Սուրբ Գիլքն եւս կը հաստատէ մըտ-  
քի այս խօստովանութիւնն Աստուծոյ գու-  
յութեան վերայ։ « Գիտութիւնն Աստու-  
ծոյ յայտնի է՝ ՚ի նոսա, այսինքն ՚ի հեթա-  
նոսս։ Քանզի Աստուած իսկ յացանեաց  
նոցա։ Զի աներեւոյթք նորա ՚ի սկզբանէ  
աշխարհի արարածովքս խմացեալ տեսա-  
նին, սցսինքն է մշտնջենաւորութիւնն եւ  
զօրութիւնն և աստուածութիւնն նորա, զի  
ոչ գտանիցեն ամենեւին աալ պատասխա-  
նի»։ Հո.ում. Ա. 19—20։ « Երկնք պատ-  
մեն զիառս Աստուծոյ և զարարածս ձե-  
ռաց Նորա պատմէ հաստատութիւն։ Օր  
աւուր բղիսէ զըան և գիշեր գիշերի ցու-  
յանէ զգիտութիւն։ Ոչ են բանք և ոչ են  
խօսք որոց ոչ լսին ձայնք նոցա։ Ընդ ամե-  
նայն երկիր ել բարբառ նոցա և մինչեւ ՚ի  
ծագս աշխարհի են խօսք նոցա»։ Սադ.  
Ժ. 1—6։

Այսպէս ահա մեր միաքն կ'իմացնէ-  
թէ աշխարհի պատճառն է Հոգի յաւի-

տենական եւ ամենակարող :

+ Խռացաւքն է հոգւոյ մի այնպիսի  
զօրութիւն , որ մեղ կը հասկացնէ մեր  
պարտաւորութիւնն և նովաւ կը զանազա-  
նեմք բարին՝ չարէն : Նա կը տայ մեղ հա-  
ւանութիւն և նեղութիւն , կը լցուցանէ մեր  
սիրալ երկխողով և յուսով , զոջմամբ եւ  
բաւականութեամբ : Հոգւոյ այս ներքին զօ-  
րութիւնը , զոր կ'անուանեմք խղճմտանք ,  
կարող է բացուիլ և լուսաւորուիլ հոգե-  
ւոր մննդով : Բայց մնունդը երբէք չ'է կա-  
րող ստեղծել զայն : Ինչպէս որ մարդոյ  
միտքն ընդունակ է կատարելագործվելու  
և լուսաւորվելու , բայց ինքն պատուղ չ'է  
մննդեան , նոյնպէս և խղճմտանքը : Ասկա  
թէ ոչ , զուր կը խօսէին մարդոյ հետ ձրշ-  
մարտութեան վերայ , եթէ խղճմտանքը  
ծնուած ըլլինէր մարդոյ հետ : Սորա ա-  
պացցցն մեք կը տեսնեմք , որ ամենայն  
հասակի , ամեն աստիճանի , թէ լուսաւու-  
րեալ և թէ կոյր մարդիկ , ամեն աշխար-  
հի եւ ամեն վլաճակի մէջ , միշտ կը լսեն  
խղճմտանքի ձայնն և ոչ մի կերպով չ'են  
կարող լրեցնել և կտրել այս ձայնք :

Խղճմտանքը ծնունդ չ'է նոյնպէս ոչ  
երկխողի եւ ոչ հաւանութեան մարդկան :

Վասն զի , եթէ խղճմուանկը լինէր նոցա  
 ծնունդ , այն ժամանակ միշտ կը համա-  
 ձայնէր մարդկանց ամեն գատաղութեանց  
 հետ . բայց մեք կը աեսնեմք , որ նա կ'ընդ-  
 դիմանայ այն հաւանութեանն ու գատո-  
 ղութեանը , որ համաձայն չէ իւր օրէնքին  
 Ակը կը աեսնեմք , որ նա կը տայ մարդոյն  
 հանդիսա և քաղցր զգացողութիւն այն  
 ժամանակ , երբ իւր պարտաւորութիւնը  
 կտտարելց համար կ'ընկնի մարդկանց ա-  
 տելութեան եւ հալածանաց մէջ : Նա  
 (խիզճը) ցոյց կը տայ իւր ներգործութիւ-  
 նը սրտի և մոքի այն ծածուկ շարժողու-  
 թեան վերայ եւս , զօր մարդիկ չ'են կա-  
 րող ոչ աեսնել և ոչ դատել : Նա ցոյց կը  
 տայ իւր ներգործութիւնը նաեւ այն ժա-  
 մանակ , երբ մեք մեք ամենամեծ իշխա-  
 նութեամբ անվտանդ ենք մարդկանց եր-  
 կիւզէն և չ'ենք կարօտ նոցա հաւանու-  
 թեան : Նա ցոյց կը տայ իւր ներգործու-  
 թիւնն այն ժամանակ եւս , երբ մահը կը  
 մօնենայ մեղաւորին և նա այն դրութեան  
 մէջն է , որ ոչ աշխարհի վերայ յոյս ունի  
 և ոչ մարդիկներէն երկիւղ : Այսպէս կը  
 հաստատուի ահա , որ խղճմուանկը արտա-  
 քին իրողութեանց ծնունդ չ'է , այլ ձայն է

Աստուծոյ, ձայն Արարչի :

Այս խղճմտանքը Աստուծած տուառ  
մարդոյն՝ ինչպէս մի ներքին վկայ իւր գու-  
յութեան համար : Սա կը յայտնէ մեզ,  
որ կախումն ունինք Աստուծմէ : Աս կ'ու-  
սուցանէ մեզ, որ Աստուծած է տուիչ օրի-  
նաց և մի օր պիտի դատի զմեղ այն օրէն-  
քով՝ ՚ի դատաստանի : Սա կը յայտնէ, որ  
կը դատի Աստուծած հեթանոսներն եւս,  
որոնք՝ թէպէտ անծանօթ են Աստուծոյ  
Խօսքին, բայց ունին խղճմտանքի օրէնքն  
իրենց որտին մէջ գրուած : “Հեթանոսք՝  
որք զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրի-  
նացն գործեն . նոքա՝ որք զօրէնս ոչ ունին,  
անձանց իւրեանց իսկ են օրէնք . որք ցու-  
ցանեն պլործս օրինացն գրեալ ՚ի սիրառ  
իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց  
և յանդիմանել զմիմեանս ՚ի խորհրդոց իւ-  
րեանց, կամ պատասխանի իսկ տալ յա-  
ւուրն, յարում դատիցի Աստուծած գդազա-  
նիս մարդկան, ըստ աւետարանիս իմց ՚ի  
ձեռն Յիսուսի Քրիստոսի ։ Հառվիմ . Բ .  
14—16 :

Ամենայն մարդիկ, պանք իւրեանց  
միտքը և խղճմտանքը գործ են դրած բռ  
բութեամբ, խմացած են միշտ, որ կայ մի

գլխաւոր պատճառ ամենայն արարածոց,  
և ինչքան որ միտքը և խղճմտանքը կը  
լուսաւորին, այնքան եւս նոցա վիայու-  
թիւնն Աստուծոյ գոյութեան վերայ՝ ա-  
ւելի և աւելի կը կենդանանայ և կը հառ-  
տասուի։ Ուստի՝ պարզ կ'երեւի որ Աս-  
տուած է տպաւորած այս վիայութիւնն  
ամեն մարդոյ մէջ, և ԱՄԵՆ ԱԶԳԵՐ, ամեն  
ժամանակ, ամեն տեղ ԽՊՍԾՈՎԱՆԱԾ ԵՆ  
և ԿԸ ԽՊՍԾՈՎԱՆԱՏՆ, որ կայ իրենցմէն Գե-  
րազոյն մի Էակ։ Այս աւանդութիւնն  
ունին նոքա տռաջին մարդէն, որ ինքն  
ստացաւ Աստուծմէն եւ աւանդեց իւր  
բոլոր օրդւոց և սերնդոց։

**Ա**ստցինք վերեւ, որ Աստուած իւր  
գոյութիւնն յայտնած է մաքին և խղճմը-  
տանքին, բայց ամենապարզ և հաստատ  
վիայութիւնն իւր գոյութեան վերայ յայտ-  
նած է Աստուած իւր Խօսքով—Աստուա-  
ծաշունչ Գըրբով։

**Ա**ստուածաւունց ԳԻՐՔԸ կը առյ մեղ  
ծանօթութիւն աստուածային կատարե-  
լութեանց վերայ, նորա գործոց եւ խոր-  
հրդոց վերայ, և այնալիսի ծանօթութիւն-  
ներ, որ միտքն ինքնին չ'եր կարող իմանալ  
և լարմացած է նոցա վերայ։ Աիրան եւս

կը գտնեէ Աստուծոյ Յայտնութեան մէջ  
բաւականութիւն իւր ամենայն կարօտու-  
թեանց . վասն զի՞ Աստուածաշունչ Գիր-  
քը գրաւած է Աստուծոյ հոգւով : Նա  
սիրան հրաշալի է , ինչքան արարչագոր-  
ծութիւնը : Արարչագործութեամբ յայտ-  
նեց Աստուած արարածին իւր յաւիտե-  
նականութիւնն , ամենակարողութիւնն և  
աստուածութիւնն , իսկ Սուրբ Գրքով՝ աւ-  
ելի պարզ յայտնեց իւր կատարելութիւնն  
ներն եւ մանաւանդ ամենագերագոյնն —  
Աստուած Մէր է : Եւ որովհետեւ մխաքը ,  
խղճմտանքը և հաւաձայն խոսուվանու ,  
թխնն ամենայն ազգաց կը հաստատեն  
Աստուծոյ գոյութիւնն , ուրեմն անզգաց  
և անմիտ պէտք է լինի այն մարդը , որ չը  
խոստովանիր Աստուծոյ գոյութիւնը . ինչ  
պէս կ'ասէ Գաւիթ մարգարէն . “ Ասաց  
անզգամն ՚ի սրտի իւրում , թէ ոչ գոյ Աս-  
տուած ” : Սաղ . ԺԳ . 1 :

Մարդ այն ժամանակ աւելի հաստատ  
վկայութիւն կ'ունենայ Աստուծոյ գոյու-  
թեան վերայ , երբ անդադար կ'որոնէ զԱս-  
տուած և կը մտածէ նորա օրինոց վերայ ,  
ինչպէս կ'ասէ Գաւիթ մարգարէն . “ Այլ  
յօրէնս Տեառն են կամք նորա՝ յօրէնս նո-

ըստ իսրայելոցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի ու Սահ. Ա. . 2: Այն ժամանակ մարդ կը մօտենաց Աստուծոյն և Աստուած կը մօտենաց մարդոյն, երբ սրտով կ'որոնէ զԱստուած իւր սրտի մէջ, ինչպէս կ'ասէ Յակոբոս Առաքեալն . “ Մերձեցարուք առ Աստուած և մերձեսցի առ ձեզ ”: Յակ, Դ. 8:

**Ուրեմն՝** ամենէն ճշմարիս և հաստատ ճանապարհն ճշմարիս կրօնի ճանազղութեան համար՝ է Աստուծոյ Յայտնութիւնն կամ Սուրբ Գիրքն :

**Աստուածային** Յայտնութիւնն է այն պիսի ճանազղութիւն, որ Աստուած տըւած է մեզ իւր ընտրած մարդիներով ։ Նովաւ կը լուսաւորին և կը հաստատուին այն ճշմարտութիւններն , ինչ որ կ'ուստցանեն մեզ մեր միտքը և խղճմուանքը ։ Նովաւ ( Յայտնութեամբ ) կը հաստատուին այնպիսի բաներ , որ մեր միտքն ինքնին չ'էր կարող գտնել , չ'էր կարող իմանալ . թէ ինչ է հարկաւոր մարդոյն՝ Աստուծոյ մօտենալց համար և ինչպէս կարող է հաշտուիլ Նորա հետ : Պօղոս Առաքեալն կ'ասէ . “ Բազում մասամբ և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստ

ուած ընդ հարսն մեր մարդարէիւք, իսկ  
 ՚ի վախճան աւուրցս այտոցիկ՝ խօսեցաւ  
 ընդ մեզ որդւովն իւրով” . Եբթ . Ա. 1-2:  
 Եթէ մարդ պահէր առաջուան սէրն՝ կա-  
 րող էր ճանաչել այս երկու մեծ ճշմար-  
 տութիւնն , այն է Գոյսթիւն Աստուծոյ և  
 Անմահութիւնն հոգւոյ . Թէպէտ եւ նորա  
 ճանաջութիւնն այնքան կատարեալ չէր  
 լինիլ այս մեծ ճշմարտութեանց վերայ :  
 Վասն զի՞ միտքը հեռանալով Աստուծմէ-  
 խաւարեցաւ եւ դարձաւ անընդունակ  
 գաստիարակ լինելու : Այս պատճառաւ  
 էր որ հեթանոսները չար և խաւար դր-  
 բութեան մէջ էին , որովհետեւ չ'ունէին  
 ասսաւածային Յայտնութիւն , այսինքն  
 Սուրբ Գիրք , ինչպէս և կ'ասէ Պողոս Ա-  
 ռաքեալն . “ Ուր խմաստուն , ուր դր-  
 պիլ , ուր քննիչ աշխարհիս այտրիկ , ոչ  
 ապաքէն յիմարեցոյց Աստուծած զիմաս-  
 տութիւն աշխարհիս այտրիկուն . Կողմ. Ա.  
 20: Միտքը չ'էր կարող խմանալ երբէք ,  
 թէ ինչպէս կարող է մարդ աղաստութիւ-  
 մեղքէ եւ դատապարտութենէ , որոց  
 մէջ ինքը կը գտնուի , և կամ ինչ հնար-  
 քով կարող է աղաստութիւն Ուրեմն՝ մեր մըտ-  
 քի պարտաւորութիւնը կը մնայ միայն

Հաւատատել թէ՝ աստուածային ճշմարտու թիւններն ու յայտնութիւններն ճշմարխուն, տուած են Աստուծմէ, եւ պէտք է քննէ և պահէ ինչ որ կ'ուսուցանէ Աստուածաշունչ Գիրքն, և քննելէն յետոյ խոնարհեցնէ իւր զօրութիւնն Աստուծոյ զօրութեան, հաւատայ ամեն բանի, ինչ որ կ'ուսուցանէ Սուրբ Գիրքը, գործ դնէ և կատարէ Աստուծոյ ամեն հրամաններն և չ'աշխատէ լուծանել այն խորհուրդներն, զօրս Աստուած աւանդեց մեղ խորհուրդ պահելու, ինչպէս ասած է. « Ծածուկիքն Տեառն Աստուծոյ մերում եւ յայտնիքն մեղ և որդւոց մերոց » : Բ. Օրին . Խթ. 29:

Ուրեմն՝ մարդոյ միտքն պէտք է կեն դանի հաւատով բնդունի այն ամենայն խորհուրդներն, զօրս Ս. Գիրքը կը յայտնէ մեղ: Վասն զի՞ այս աստուածային խորհուրդները կը գերազանցեն մարդոյ մրտքէն և Աստուած ինքն պատրաստեց տադ մարդոյն այնպիսի բաներ, որ ոչ աչքով էր տեսած, ոչ մաքէն անցած և ոչ ականջռ վըն լսած, ինչպէս կ'առէ Պօղոս Առաքեալն . « Զոր ակն ոչ ետես, և ունկն մարդոյ ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկառ, զայն պատրաստեաց Աստուած սի»

ըելեաց խրոց . Ա . կորն . Բ . 9 : Մարդ  
սիւտք չէ զարմանայ , որ Ա . Գրքի մէջ կան  
խորհուրդներ : Արարքի և արարածոց մէջ  
սիւտք է լինի խորհուրդ : Խորհրդով է , որ  
մարդ կը զանազանուի Աստուծմե , այսինքն  
Աստուծոյն յայտնի է այն բանն եւ ունի  
այն զօրութիւնն , որ մարդոց համար խորհ  
հուրդ է : Ո՞ւ թէ միայն աստուածային  
ուսումն , այլ և լոլոր մարդկանց ուսմունք  
ներն լի են գաղտնիքներով :

**Ա**ստուածային յայտնութիւնները կը  
բովանդակուին Աստուածաշունչ Գրոց մէջ ,  
որ կը բաժնուի Երկու - չորս Եւ Նոր ԿՏԱ-  
ԿԱՐԱՆ : Առաջինն յայտնուեցաւ Առվիր-  
սով և միւս մարդարէներով , որոնք դաս-  
տիարակ են Նոր Կտակարանի . իսկ Երկ-  
րորդն քարոզուեցաւ առաքեալներով : Եր-  
կուսն միասին կը բովանդակեն իրենց մէջ  
Պատմական , Բարոյական և Մարգարեա-  
կան գրքեր , որոց անունն կ'ասուի Կտա-  
կարան . վասն զի՞ նորա մէջ կը յայտնի  
Աստուած իւր կամքն և նովաւ կը բաժա-  
նէ ամենուն իւր քարութիւնն ու ողոր-  
մութիւնը :

Հին Կտակարանն կը խօսի Աստուծոց  
գործոց վերայ , կրօնի զանազան դրու-

թեան վերայ՝ աշխարհի սկզբէն մինչեւ  
Փրկչի գալուստն , որ խոստացած էր ՚ի  
սկզբաննէ և յայտնած Եքրայեցւոց ազգին  
Այս փրկութեան ակնկալութիւնն և մաս-  
նակցութեան յոյն , այս մեծ երանուաէտ  
Բանն՝ էր հաւատոց նիւթ , մարդարէից  
մսիթարութիւն և Ճմարիտ տաստուածու-  
պաշախից յոյս , ինչպէս կ'ասէ Պուկաս ա-  
ւետարանիջն . “ Եւ էր այր մի յԵրուառա-  
ղէմ , որոյ անունն էր Սիմեօն և էր այրն  
այն արդար և երկիւղած և ակն ունէր մը-  
խիթարութեանն իսրայելի և Հոգին Սուրբ  
էր ՚ի նմա ” : Պուկ . Բ . 25

**Ս**որ Կտակարանն կը խօսի և կը հառ-  
տառէ այն ամենայն , ինչ որ Աստուած  
Հին Կտակարանի մէջ խօսած է իւր գոր-  
ծոց և իւր կամաց վերայ , որ կտակարուե-  
ցաւ խոստացեալ Բանով , այսինքն փրկու-  
թիւն մեր ՚ի ձեռն Քրիստոսի : Նոր Կտա-  
կարանն կ'անուանի Աւետարան , այսինքն  
աւետիք բարութեան :

**Հ**ին և Նոր Կտակարանը կը շնուն մի  
հաւատ , ինչպէս կ'ասէ Օգոստինոս , “ Նո-  
րը Հնոյն մէջ ծածկուած է , Հինը Նորոյն  
մէջ բացուած ” : Հին Կտակարանը դաս-  
տիարակ էր Նորոյն , ինչպէս կ'ասէ Պողոս .

“Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեղ՝ի  
Յիսուս Քրիստոս, զի ՚ի հաւատոցն ար-  
դարասցուք” : Գաղ. Գ. 24: Նոր Կտա-  
կարանը լրիւ տուաւ մեզ այն ամենայն,  
ինչ որ Հինք թողեց մեղ ցանկալու : Հին  
Կտակարանը միայն կը կոչէր մի ազգ, իսկ  
Դորն ամեն ազգեր դէպ ՚ի փրկութիւն :  
Նոր Կտակարանը չը դատեր զմեղ միայն  
մեր գործքով և չ'ասէր միայն –Արա՛ զայս  
եւ իեցցես, այլ Քրիստոսի խաչով կը խոս-  
տանայ ողօրմաւթիւն և շնորհք Քրիստո-  
սին հաւատացողներուն եւ մեզքէ զըդ-  
ջացողներուն : Նոր Կտակարանը չը մատ-  
նէր զմեղ մեր տկարութեան, այլ կը խոս-  
տանայ Հոգւսին Արքյ օգնութիւնը մեր  
սիրտը նորոգելու և աստուածային օրինաց  
սէրք նորա վերայ թագաւորեցնելու, ինչ-  
պէս կ'ասէ Պօղոս Առաքելոյն բերանով .  
“Այս է ուխտն, զոր եղից տանն իսրա-  
յէլի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր,  
տաց զօրէնս իմ ՚ի միտս նոցա, և ՚ի սիրտս  
նոցա գրեցից զնոսա և եղեց նոցա Աստ-  
ուած և նորա եղիցին իմ ժողովուրդ : Եւ  
ոչ ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղա-  
քակից իւր, և իւրաքանչիւր զեղբայր իւր  
եւ ասիցեն ծանմիր զՏէր . զի ամեներեան

Տանիցեն զնա՞ի վորքիանց մինչեւ ՚ի մեծամեծս ։ Եթ. Է. 10—12. Նոր կտակարանը ըլքաւականնար խոստանալով երկրաւոր պատիմներ, այլ ունի յաւիտենական կենաց խօսք . “Պատասխանի ետնմա Սիմոնի Պետրոս, Տէ՛ր, առ ով երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիա” ։ Յով. Զ. 69. :

Ուրեմն մեք եւս կարող եմք ասել Յովհաննէս Աւետարանիցի հետ միասին, որ օրէնքը տրուեցաւ Մովսիսի ձեռամք, իսկ շնորհքն և ճշմարտութիւնը (որոնք են նիւթ օրինաց) ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի : “Զի օրէնքն ՚ի ձեռն Մովսիսի տրան, շնորհք և ճշմարտութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն” ։

Մինչեւ Ս. Գրքի գրուիլն ասուուած պաշտութիւնը կը պահպանուէր Աւանդութեալամբ : Ասուուած խոռած էր առաջին մարդոյ հետ և Նորա խօսքն աւանդութիւն գարձաւ յետագայ սերնդոց համար: Առաջին մարդն աւանդեց Ասուուծոյ խօսքը նոցա, որոնք չեին լսած և այս պատճառաւ Ս. Գիրքը ստացաւ պատմական յատկութիւն, որ մարդիկ միմեանց աւանդելով՝ կարողանային պահպանել աշ-

Խարհիս մէջ աստուածազաշտութիւնը :  
 Աստուած հաստատեց նոյնպէս Զոհ, որոց  
 մէջ կը պարունակուեին աստուածազաշ-  
 տութեան գլխաւոր Ճշմարտութիւններն,  
 այսինքն Աստուծոյ գոյութիւնը, մարդոց  
 մեղաց տակ ընկնիլը և փրկութեան յոցն:  
 Զոհ մատուցանելով կը խոստովանէին, որ  
 կայ Գերազոյն Էակ, որուն կը նուիրէին  
 զոհն . կայ յանցանք, որոց քաւութեան  
 համար կը նուիրէին . կայ յոյս, որ զոհով  
 պէտք էր փրկութիւն լինի, և այն : Այս  
 պէս կը պահպանուէր Աստուծոյ խոստա-  
 ցած փրկութեան աւանդութիւնը : Այս  
 աւանդութիւնը տուառ Աստուած ՚ի ըս-  
 կզբան Եբրայեցւոց ազգին, որոնք ընտր-  
 ուած էին Աստուծմէ, և ապա նոյնպէս  
 աւանդեց եւ Քրիստոնէից փրկութեան  
 խորհրդաւոր աւանդութիւններ, զոր օրիւ-  
 նակ Մկրտութիւնն, Հաղորդութիւնն և  
 այն :

**Ա**ստուածազաշտութիւնը կը պահպան-  
 ուէր աւանդութեամբ մինչեւ յՄալոէս,  
 և այս պատճառաւ մինչեւ ՚ի Մովսէս ա-  
 մեն մարդկանց կեանիքն երկար էր, որ շատ  
 ազրելով աւանդէին միմեանց Աստուծոյ  
 խօսքը անփախոխ : Խակ էրք Մալոէս գրեց

այն խօսքերն , այսինքն աւանդութիւններն , հաստատելով և լուսաւորելով Հոգւսին Սրբոյ ազգեցաւթեամբ , մարդոյ կեանքը կարձացաւ և այնուհետեւ գրով տառածուեցաւ Աստուծոյ խօսքը հեռաւոր մարդկանց :

**Աշխարհիս բոլոր գրքերը կարելի է բաժանել երկու՝ Աստուծային և մարդկային :** Առաջինն Աստուծոյ կամաց եւ մոտաց յայտնութիւնն է , որոյ վերայ տըպաւորուած է Աստուծոյ զօրութիւնը . իսկ երկրորդն է մարդոյ մոտաց յայտնութիւնն , որոյ վերայ տըպաւորուած է մարդոյ տկարութիւնը :

**Թէպէտ զանազան ազգեր ունին ՚ի հնուց սուրբ անուաննեալ գրքեր , ինչպէս՝ Զինացիք – Կինքս անունով , Հնդկացիք – Վեդաս , Պարսիկք – Զենդավեաս , Արաբացիք – Ղուրան . բայց միայն ԱՍՏՈՒԾԱՆՑՈՒԽՆ է ՄԻԱԿ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔ , որ կը պարունակէ իւր մէջ Ճշմարիտ աստուծացաշտութիւն . իսկ վերեւ յիշուած սուրբ անունով գրքերը կը բովանդակեն իրենց մէջ մի քանի Ճշմարտութիւններ , բայց այն ևս առնուած կը համարուի Աստուծացնէն , և ահա պարզ կ'երեւի , որ**

Աստուծոյ Գիրքը մարդկային հանձարի  
գործ չ'է :

Սուրբ Գիրքը պէտք է ունենայ Երեք  
դլսաւոր նշան — Եինողական, Պատմական  
և Մարգարեական : Նախ՝ պէտք է լինի  
Եինողական, այսինքն կանգնեցող և սպայ-  
ծառացնող Երկրի, ինչպէս կը տեսնեմք,  
որ Աւետարանն՝ ուր և տարածուեցաւ,  
այն Երկիրը լուսաւորուեցաւ : Իսկ ընդ-  
հակառակն անիրիստոնէութիւնն անլոյս  
կ'առնէ զազգն և անսկտուղ Երկիրն, ինչ-  
պէս կը տեսնեմք հեթանոսական Երկիր-  
ները : Երկրորդ՝ պէտք է լինի Պատմական,  
այսինքն սպասմութիւնը կամ աւանդու-  
թիւնն է մայր Կրօնի, և այս սպասմական  
անլոյնդհատ կապը պարզ կ'երեւի Աստ-  
ուածաշոնչ Գրոց մէջ: “Եղեւ լցո՞ն խօս-  
քէն մինչև Յովհաննաւ Յայտնութեան այս  
խօսքերը” “Եւ տեսի Երկիննոր և Երկիր  
նոր” մի մեծ շղթայ է, որով կը կապուի  
աշխարհիս սկիզբը միւս նոր աշխարհի ըս-  
կզբան հետ : Երրորդ՝ պէտք է լինի Մար-  
գարեական . — Աստուածաշոնչ Գիրքը  
Մարգարէութիւնն է, որ այսօր եւս մեր  
աչքի առջեւ կը կատարուի : Աստուած  
ընտրեց հնուց մի ագդ, որ պահպանէր

աշխարհիս պատմութիւնն , այսինքն Առ-  
առածոյ ճանաչողութիւնն , Նորա արարչա-  
գործութիւնն , մարդոյ մեղաց մէջ զնկնիչն  
և յոյսք , որով պէտք է համեր փրկու-  
թիւն մարդկային ազգի : Ահա սոքա են  
աշխարհիս պատմութեան նիւթը :

Աստուածաշունչ Գրոց Մարդարէու-  
թեան կենդանի նշանն է Եբրայեցոց ազ-  
գը , որ մինչեւ ցայսօր եւս կը սպասեն  
փրկութեան : Ի՞նչ բանի կը սպասեն , քա-  
նի որ Աստուածաշնչի առաջին խօսքէն մին-  
չեւ վերջինն կատարաւեցաւ Յիսուսի Գր-  
ժիառոսի վերայ : Մինչեւ ցայսօր Եբրայե-  
ցիք ունին տակաւին իրենց ձեռքը բըռ-  
նած այն Գիրքը , որ լի է մարդկային ար-  
գի փրկութեան յուսով : Այս Եբրայեցի  
ազգը քրիստոնէութեան համար նշան է  
անցած ժամանակի մարդարէութեան , և  
քրիստոնեայք նշան են ներկայ և ապառ-  
նի ժամանակաց մարդարէութեան , որոց  
կատարումն կը տեսնեմ մեր աչքով Գր-  
ժիառոսի այն խօսքէն , որ կ'ասէ . « Գնու-  
ցէք , ես ընդ ձեզ եմ » . և թէ « Քաջա-  
լերացարնէք , զի ես յաղթեցի աշխարհի »:  
Յով . ծ 2 . 33 : Այս երկու կենդանի նր-  
շանն , այսինքն Եբրայեցիք եւ Գրիտու-

նեայք, որոնցմէ մինն անցած ժամանակից մարդարէութեան նշան է եւ միւսն ապառնի, կը մնան մինչեւ աշխարհիս վերջն, և երբ անցեալ և ապառնի միանան, այս երկուսն ՚ի միասին կը վկայեն մարդկային վերջն ցեղին եւս մարդարէութեան կատարումն, և ինչպէս հին ազգն, նոյնովէս և նոր ազգը միասին կը տեսնեն աշխարհիս խաղաղութեան քակտումն, այսինքն մարդկութեան վերջը :

**Սուրբ Գիրքը** գրուած է աստուածային հոգւով՝ բովանդակելով իւր մէջ աստուածային ճշմարտութիւններ եւ նորահաստատութիւնն աստուածային է և ոչ մարդկային : Կը տեսնեմք արդարեւ՝ որ Քրիստոնէութիւնը տարածուեցաւ աստուածային զօրութեամք և ոչ մարդկային հնարքներով : Այս աստուածային զօրութիւնն կ'երեւի այնու, որ Քրիստոնէութիւնն ունի Ա. Գերազանցութիւն, Բ. Հրաչք, Գ. Մարգարէութիւն, և Դ. Միջոց տարածութեան :

**Սախ**՝ Գերազանցութիւն . — Քրիստոնէական ուսման գերազանցութիւննե կ'երեւի այն գործոց մէջ, զոր մեզ կը պատմէ Ա. Գիրքը, այն է Աստուծոյ արարչագոր

ծութիւնը , նորա հրաշալի Նախախնաւ-  
մաւթիւնը , որով կը կառավարէ զաջսարհ ,  
իւր ընտրած ազգն , Քրիստոնեաներն , իւր  
Եկեղեցին : Կ'երեւի նոյնպէս այն ճշմար-  
տութեանց մէջ , որոնք կ'ուսուցանեն մեզ  
Աստուծոյ կատարելութիւնները , մարդոց  
պատուիրազանցութիւնն , վրկութեան  
խորհուրդը , մեռելոց յարութիւնը և այն  
Կ'երեւի դարձեալ այս մեծ պատուիրանի  
մէջ .<sup>4</sup> Այրեացես զընկերքս իբրև զանձնքուն  
Մատ . ԺԹ . 19 : Կ'երեւի վերջապէս Առ-  
տուծոյ ամենակարող օվնութեան մէջ , որ  
կը տայ մեղ , որպէս զի կարողանամք ա-  
զատուիլ փորձութենէ , տանիլ չարչարա-  
նաց և ցոյց տալ այնպիսի առաքինութիւն ,  
որ մարդոց կարողութենէն վեր է : Սուրբ  
Գիրքն կ'ուսուցանէ մեզ այնպիսի կրօն , որ  
ոչ թէ միայն գերազանց է ամեն վարդապե-  
տութիւններէն , ինչ որ ուսուցած են աշ-  
խարհիա խմասառներն , այլ բոլորավեն  
նոր և շատ անգամ հակառակ մարդկացին  
ուսման : Ուրեմն պէտք է ասել , որ այս  
պիսի ուսումն չ'է կարող լինիլ մարդոց  
գործ , եւս առաւել աասներկու անու-  
սումն մարդկանց :

Երկրորդ՝ Հքազք . — Որպէս զի հրաշք

կարողանայ գառնալ հաստատութիւն կը  
բնի՝ պէտք է ունենայ նախ՝ այնպիսի գործ-  
քեր, որ յայտնապէս մեծ լինին քան մար-  
դոց զօրութիւնը. զոր օրինակ յարութիւն  
մեռելոց և այն։ Երկրորդ՝ պէտք է լինի  
հաստատող այնպիսի ուսման, որ արժան է  
Աստուծոյ։ Եւ երրորդ՝ պէտք է լինի  
ժողովքի կամ բաղմանթեան մէջ, որ կա-  
րողանայ ունենալ վիայներ։ Այս ամեն  
նշանները մեք կը աեսնեմք Քրիստոսի հը-  
րացից մէջ։

Երրորդ՝ Պարգարեութիւնն. — Պարգա-  
րէութիւնը կրօնի հաստատութիւն դառ-  
նալու համար պէտք է լինի նախ՝ մարգա-  
րէութիւն այնպիսի ապառնի բաներու վի-  
րայ, որ չ' կարելի խմանալ ոչ ժամանա-  
կի հեռաւորութեամբ և ոչ այլ հանգա-  
մանքավ, ինչպէս է գալուստն Քրիստոսի,  
հաստատութիւն Քրիստոնէութեան այս  
խօսքով. “Ես յաղթեցի աշխարհի” . և այնու  
Երկրորդ՝ պէտք է լինի ասած սպազդ խօս-  
քերով, որ չ' ունենայ երկու միաք և կամ  
միմութիւն։ Երրորդ՝ պէտք է լինի սուրբ  
կրօնի, հաստատութեան համար։ և Զոր-  
րորդ՝ պէտք է ունենայ իւր կատաքումն։  
Այս ամեն նշաններնելու մարգարէլոց գոր-

շակածն Քրիստոսի լեռայ և թէ Քրիստոսի ասածն Քրիստոնէութեան լեռայ բոլոն եւս անթերի կատարուեցան :

**Չորրորդ՝** Միջոց կամ հնարք տարածութեան . — Քրիստոնէութեան գործ գլուխ միջոյները բոլորն աստուածային են : Քրիստոնէութիւնը պէտք է յսղթէր հեթանոսաց և Եբրայեցւոց մտաց կուրութեանը , նոցա խստասրտութեանն և անթիւ հալածանաց : Եւ ահա Առաքեալներն , որ պէտք է քարոզէին Քրիստոնէութիւնը , չունեին ոչ մարմնաւոր զօրութիւն , ոչ երեւելի աղդութիւն կամ տոհմականութիւն , ոչ վարկ , ոչ հարստութիւն , ոչ ճարտարաւութիւն , եւ ոչ հոգի կառավարութեան աշխարհի , բայց նոցա ձեռքով հաստատուեցաւ Քրիստոնէութիւնը : Այս գործը անկարելի էր , եթե Առաւած նոցա հետ չը լինէր :

**Չը նոյելավ՝** որ Հին և Նոր Կտակարանը քարոզուած են զանազան ժամանակի եւ զանազան մարդիկներավ , այնու ամենայնիւ նոցա վարդապետութեան հոգին մի է , և ուրեմն աստուածային : Ինչ մարդիկ հաւատով ընդունած են Ա . Գիրքը , միշտ զգացած են նորա աստուածային զօ-

բութիւնը և գտած են նորա մէջ կեանք,  
հոգւսյ կերակուր, խղճի խաղաղութիւն,  
նեղութեանց համբերելց զօրութիւն, կենա  
դանի յոյս յաւիտենական կենաց և ճա-  
շակ, ինչպէս կ'առէ Պօղոս Առաքեալն .  
“Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զԱւե-  
տարանն , քանիզի զօրութիւն Աստուծոյ է  
՚ի փրկութիւն ամենայն հաւատացելոց ”:  
Հովկ. II. 16: Մարդ, մարդկացին գիրը  
կարդալով, երբէք չ'է կարող ստանալ այս  
պիսի հոգեկան վայելչութիւն և զմայլումն:

Որովհետեւ Առւրբ Գիրքն Աստուծոյ  
խօսք է, որով Արարին յայտնած է իւր  
կամքն , ուրեմն՝ ինչ այնպիսի մի լաւ բան  
կարող է լինիլ արարածի համար , ինչպէս  
Ճանաչելն. Աստուծոյ կամքը : Աւստի ՃԱՐ-  
ԿԱՒՈՐ է ամեն մարդոյ անպատճառ ու-  
ստանիլ Ա. Գիրքը , որոյ ուստումն ոչ թէ մի  
այն մի իրաւունք է մարդոյ համար , ոյլ  
անհրաժեշտ պարտաւորութիւն , ինչպէս  
կ'առէ Քրիստո . “Քննեցէք զգիրս , զի  
նոքօք համարիք դուք ունիլ զկեանս յա-  
ւիտենականս ”: Յովկ. Ե. 39: Այլ յօրէնս  
Տեառն են կամք նորա , յօրէնս նորա իոր-  
հեցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի ո: Սադ.  
Ա. 2: Առաքեալները կը գրէին իր՛ից

թղթերն կամ ժողովքի եւ կամ անհատ  
մարդկանց, եւ կը պատուիրէին որ կար-  
գան և այլոց եւս տան կարգալու: Պար-  
տաւոր է ուրեմն Քրիստոնեայն թէ իւր  
գործով եւ թէ իւր խօսքով տարածել  
Աւետարանի ուսումնին:

Ով որ կամի ուսանիլ Աստուծոյ կամբը՝  
նորա համար Աստուածաշունչ Գիրքը շատ  
պարզ է: Նա այնքան պարզ է, որ ամենիքը  
կարող են ուսանիլ եւ գործ դնել, ուղե-  
ցոց ունենալով Եկեղեցւոյ նախնի Սուրբ  
Հարքը իրենց ջերմեռանդն Խորհրդա-  
ծութիւններով: Քաւ լիցի ասել, որ Աս-  
տուած տուած է այնպիսի յայտնութիւն,  
յորմէ կախուած է մարդկային փրկութիւ-  
նը, և ուարդ չ' ամենի համար: « Ամե-  
նայն Գիրք Աստուածաշունչը և օգտա-  
կարք, ՚ի վարդապետութիւն են՝ ՚ի յանդի-  
մանութիւն, յուղղութիւն եւ ՚ի խրատ  
արգարութեան»: Բ. Տիմ. Գ. 16: « Ճը-  
րագ են բանք քո ոսից իմոց և լոյս տան  
շաւղաց իմոց »: Սադ. Ճմկ. 105: « Ա-  
սկա եթէ իցէ ծածկեալ աւետարանն մեր՝  
՚ի մէջ կորուսելոցն է ծածկեալ»: Բ. Կորն.  
Դ. 3:

Որովհետեւ Աստուածաշունչ Գիրքն

Աստուծոյ խօսք է, ուրեմն պէտք է կարգամք նախ՝ Հեղութեամբ, զգամք հարկաւորութիւն ուաման, նորոգութեան եւ, ոգնութեան Աստուծոյ = Երկրորդ՝ պէտք է կարգամք ուշի ուշով, պատուով, հնազանդութեամբ յամենայն հոգւոյ, պատճառն որ կը լսեմք Աստուծոյ խօսքը, ինչպէս կ'ասէ . “ Խօսեաց, Տէր, զի լսւիցէ ծառայքո ” : Ա. . Թագ. Գ. . 8. Երրորդ՝ պէտք է կարգամք սկրով, շնորհակալութեամբ. սըրբութեամբ սրտի եւ, ջերմեռանդութեամբ: Եթէ կը ցանկամք լուսաւորուիլ՝ պէտք է սրբեմք մեր միաքը եւ սիրար ձանաշելով աստուածային Ճշմարտութիւններն եւ ուսանելով այն ամենայն, ինչ որ խոստացած է Աստուած և ինչ որ արած է մեզ համար, և այս ամենը միացնելով կատարեալ հաւատքի հետ, պէտք է կատարեմք ամենայն պատուեր, ինչ որ կը սկահանջէ մեզմէն մեր հաւատան: Չորրորդ՝ պէտք է կարգամք աղօթքով, որ Աստուած բանայ մեր սիրան իւր հոգւոյ և Ճշմարտութեանց համար, ինչպէս արած է իւր ընտրած մսրդկանց: Ա. յսպիսի աղօթքով կը խմնդւէր Դաւիթ մարգարէն, որ կարտղանայ Աստուծոյ արդարութիւնը ձանաշել, աշ

սելով . “ Խոստովան եղէց քեզ , Տէր , յուղ  
զութիւն սրտի իմայ , որպէս ուսայց զիրա-  
ւունս արդարութեան քո ” : Ասդ . ձ ժԲ .  
7 : Եւ վերջապէս՝ պէտք է դատեմք մեր  
անձն եւ իմանամք թէ գործ եմք դրած  
արդեօք Աստուծոյ խօսքը , որով պէտք է  
մեզ դատի , թէ ոչ :



## ՀԱԽԱՏՈՅ ՎԵՐԱՅ

Ա. Ռ. Հ Ա Ս Ա Ր Ա Կ

Աստուծածաշունչ Գրոց մէջ կը տես-  
նեմք աստուծածային գործքեր , Ճշմարտու-  
թիւններ եւ մարդկային պարտաւորու-  
թիւններ : Այս Ճշմարտութիւններն , ո-  
րոնք պէտք է դառնան հիմն Հաւատոյ և  
որով մարդ կարող է մօտենալ Աստուծոյն  
և փրկուիլ , Հաւոքուած են միասին Հա-  
ւատոյ Հանգանակի մէջ :

ՀԱԽԱՏՈՅ ԱԹՀԱՍԱՐԱԿ՝ կը նշանակէ  
ընդունիլ մի քանի գործքեր կամ Ճշմար-  
տութիւններ արժանաւոր անձանց զիրա-  
ւունքնեամք , Երբ մէք ինքնին անձամք  
չեմք կարող իմանալ և հաստատել : Իսկ

կրօնի մէջ՝ հաւատայ կը նշանակէ ընդուռ  
նիլ մեր սրոտով այն աստուածային ձշմար  
տութիւններն , զրա Աստուած ինքն յայտ  
նած է իւր Խօսքով – Աստուածաշունչ  
Գըքով :

**Ք**րիստոնէական Հաւատայ գւլխները  
Ճիւրն է Յիսուս Քրիստոս , որոյ վերայ կը  
խօսի բոլոր Աստուածաշունչ Գիրքը եւ  
կը կոչէ բոլոր մարդկութիւնն դէսլ ՚ի Նա ,  
որոյ մէջ միայն կը գտնուի մարդոյ վըր-  
կութիւնը :

**Ո**րովհետեւ Աստուած խօսած է մար-  
դոյ հետ և այն խօսքով բացած է նորա  
համար ճանապարհ փրկութեան , ուստի  
մարդ սկզբ է բոլոր սրախւ և շնորհակա-  
լութեամբ հաւատայ Աստուծոյ յայտնած  
ողորմութեանց , ապա թէ ոչ անհաւա-  
տութեամբ կը զրկուի Աստուծոյ ողորմու-  
թենէն , ինչպէս կ'ասէ Պօլոս Առաքեալն .  
“ Առանց հաւատայ անհնար է հաճոյ լի-  
նիլ Աստուծոյ ” : Եբք . ԺԱ . 6 : “ Որ հա-  
ւատայ յԱրդի՛ ընդունի զիեանս յաւիտե-  
նականս . և որ ոչ հնազանդի Որդւոյ , ոչ  
տեսոցէ զիեանս ” : Յովի . Գ . 36 : “ Բայց  
մէք՝ ոչ եթէ երկմտութեամբ եմք ՚ի կո-  
րուսս . ոյլ հաւատովք ՚ի փրկութիւն

Հոգւոց ու Եբր. Փ. 39:

Ճշմարիտ հաւատը պէտք է ունենայ այս նշանները . — Ա. Պէտք է լինի Լուսաւոր, Բ. Հեղ, Գ. Հաստատ, Դ. Կենդանի, և Ե. Գործնական :

**Մարդ** պարտաւոր է խմանալ հաւատոց ճշմարտութիւններն , և այն հաստատութիւններն , որոց վերայ հիմնուած են . վասն զի՞ առանց ճանաչողաւթեան՝ չը կայ հաւատ , չը կայ դատողութիւն : Քրիստոնեայն պէտք է պատրաստ լինի , ինչպէս կ'ասէ Պէտրոս Առաքեալն , “ Տալ պատասխանի ամենայնի , որ խնդրիցէ ըլքան , որ է վասն յուսոյն ձերոց ո . Ա. Պէտր. Գ. 15: Բայց այս եւս պէտք է ասեմք , որ մարդ կարող չէ ունենալ հաւատոց կատարեալ ճանաչողաւթիւն , ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն . “ Քանիզի փոքր ՚ի շատէ գիտեմք և փոքր ՚ի շատէ մարդարեանամք , այլ յորժամ եկեսցէ կատարումն , փոքր ՚ի շատէս խափանեացի ” : Ա. Կորն . ՓԳ. 9—10: “ Զի հաւատովք գնամք եւ ոչ կարծեօք ” : Բ. Կորն . Ե. 7: Առառածային յայտնութիւնները չեն կարող չը լինիլ մեղ համար փոքր ՚ի շատէ ստուերով ծածկուած , որով խոկ կը գերազանցի այս

յայտնութիւնը մեր տկար մտքէն, որ ոռ  
վաւ պահէ զմեղ Աստուած Ճշմարիտ հե-  
ղութեան մէջ և փորձէ մեր հաւատարմու-  
թիւնը և մեր սէրը Ճշմարտութեան հա-  
մար։ Այս պատճառաւ որեմն՝ Ճշմարիտ  
Հաւատարը պէտք է լինի ինչպէս Կուտառը,  
նոյնպէս և Հեզ։

Լուսաւոր հաւատն, այսինքն հաս-  
տառուած անշարժ հիման վերայ, երբէք  
քը շարժուիր . ո՞չ ամբարիշտ մարդկանց  
թիւը և ծուռ դատողութիւններէն, ո՞չ  
նոցա չար գործքերէն և ոչ նոցա վատ օրի-  
նակներէն։ Հաւատար հաստատ, կը նշո-  
նակէ ամենեւին չունենալ երկրայութիւն,  
որով լի է աշխարհ։ Հաստատ հաւատը  
կարող է հանդիսավոր գժուարութեանց և  
փորձանաց, բայց միշտ հաստատ է եւ  
յաղթող, ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեա-  
լըն։ «Արմատացեալք և շննեալք ՚ի նա  
և հաստատեալք ՚ի հաւատս, որպէս ու-  
սարուքն առաւելեալք ՚ի նմին գոհու-  
թեամբ»։ Կոդ. Բ. 7։

Հաւատը կենդանի կ'ասուի, երբ կը  
ներգործէ նա և կը շարժէ մեր միտքը եւ  
կ'ըմբռնէ մեր սիրուը։ «Զի՞նչ են հա-  
ւատք՝ եթէ ոչ յուսացելոց իրաց հաս-

տասութիւն եւ յանդիմանութիւն որոց  
ո՞ն երեւին ո՞ւ Եթք . ԺԱ . 1 :

**Հաւատը** Գործնական կ'ասուի , երբ  
ունի այն ամենայն գործքերը , ինչ որ կը  
պահանջէ մեղմէն հաւատը : Այս գործ  
քերը կարելի է բաժանել երկու նախ՝  
խոստովանութիւնն հրապարակաւ , ինչպէս  
կ'առէ Քրիստոս . “Ամենայն որ խոստովա  
նեցի յիս առաջի մարդկան , խոստովա  
նեցից եւ ես զնմանէ առաջի Հօր իմոց որ  
յերկինս է ո՞ւ Մատ . Ժ . 32 : Այս հրա  
պարակաւ խոստովանութեան հետ պէտք  
է և համարձակ տարածել Քրիստոնէու  
թիւնը , և աշխատիլ ցոյց տալ ամեն պա  
տահմանց մէջ , որ մեր կը պատկանիմք  
Քրիստոսի և նա է մեր կենաց պարծան  
քը : Երկրորդ՝ կենաց պրբութիւն կամ  
կատարեալ հնագանդութիւնն Աստուծոց  
պատուիրանաց , ինչպէս կ'առէ Դաւիթ  
մարդարէն , “Հաւատացի զոր և խօսեցաց  
և ես խնարհ եղէ յոյժ ո՞ւ Մադ , ՃԺԵ . 10:  
“Զի եթէ խոստավանեսցիս բերանով քով  
տէր զՅիստոս եւ հաւատացես ՚ի որակ  
քում , թէ Աստուծած յարոյց զնա ՚ի մե  
ռելոց՝ կեցցես” : Հռով . Ժ . 9 :

**Որովհետեւ Հաւատն կը պարունակէ**

իւր մէջ բողոք Քրիստոնէութիւնն եւ է  
աղքիւր ամենայն առաքինութեանց , աղք  
իւր սիրոյ առ Աստուած և առ մարդ ,  
որ է լումն օրինաց . այս պատճառաւ  
Քրիստոս հաւատ կը պահանջէր իւր ա-  
շակերտներէն :

**Հ**աւատով մեք կընդունիմք Աստո-  
ծոյ ողբրմութիւններն եւ կը մօտենամք նո-  
րան . ուրեմն՝ հաւատն է արդարութիւնն և  
խաղաղութիւնն առ Աստուած . “ Այսու-  
հետեւ արդարացեազք ՚ի հաւատոց անսփի  
խաղաղութիւնն կացուք առ Աստուած ՚ի  
ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ” :  
Հոռի . ե . 1 :

**Հ**աւատով Աստուծոյ որդի կը լինիմք .  
“ Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք  
հաւատովք ՚ի Յիսուս Քրիստոս ” : Գաղ.  
գ . 26 :

**Հ**աւատով խաղալք կըստանամք մօ-  
տենալ Աստուծոյ համարձակութեամք .  
“ Որով ունիմք զիամարձակութիւնն և զիք-  
ւաճումն յուսով ՚ի ձեռն հաւատոց ան-  
տի նորա ” : Եֆես . գ . 12 : “ Մատիցուք  
այսուհետեւ համարձակութեամք առաջի  
աթուաց չնորհաց նորա , զի ընկացուք դո-  
ղորմութիւն եւ գացուք չնորհս ՚ի դէպ

Ժամանակի օդնականութեան „ : Եբլ .  
Գ . 16 :

Հաւատով կ'արժանանամք յաւիտե  
նական կենաց . “ Զի ամենայն որ հաւա  
տայ ՚ի նա , մի՛ կորիցէ , այլ ընկացի ըդ  
կեանս յաւիտենականս „ : Յով . Գ . 16 :

Հաւատով կը զորանամք եւ յաղթոս  
կը գտնուիմք աշխարհիս պատերազմի մէջ .  
“ Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ  
աշխարհի : Եւ այս է յաղթութիւնն մեր ,  
որ յաղթէ աշխարհի , հաւատքն մեր „ :  
Ա . Յով . Ե . 4 :

Միով բանիւ՝ հաւատով կը բնակե-  
ցընեմք մեր մէջ զՅիսուս Քրիստոս և կը  
միանամք Աստուծոյ հետ , որ է Կեանք  
եւ կատարեալ երջանկութիւն . “ Բնակել  
Քրիստոսի հաւատովք ՚ի սիրոս ձեր , սի-  
րով արմատացեալք և հաստատեալք „ :  
Եփես . Գ . 17 :

Հաւատն է մի աստուածային ներգոր-  
ծութիւն մարդոյ հոգւոյ վերայ և կարելի  
չէ , որ ծագած լինի նա մեր մողէն , այլ  
Հոգին Սուրբն է , որ կը ծնանի մեր մէջ  
Ճմարիս հաւատ : Եւ արդարեւ՝ եթէ  
քննեմք հաւատոյ առարկայն կը տեսնեմք  
պարզապէս , որ հաւատը չէ կարող ծա-

գիլ մարդէն . վասն զի Աստուծոյ յայտնած  
Ճշմարտութիւնները մարդոյ մաքով գըտ-  
նուելու ճշմարտութիւններ չեն : Բայ  
յայամանէ , մեր ընդունակ չեմք առանց  
Հոգւոյն Արքոյ գօրութեան ընդունիլ մեր  
մոքով հաւատոյ ճշմարտութիւններն եւ  
նովաւ փրկուիլ . վասն զի՝ մեղքը հեռա-  
ցընելով զմեղ Աստուծմէ՝ խաւարեցու-  
ցած է մեր միայքը , ինչպէս կ'ասէ Առա-  
քեալին Պօղոս . “Քանզի շնչաւոր մարդ ոչ  
ընդունի զՀոգւոյն Աստուծոյ , զի միմա-  
րութիւն է նմա , և ոչ կարէ գիտել եթէ  
հոգեպէս քննիցի ”: Ա . Կողմ . Բ . 14 :

**Մեր** սրասով եւս չեմք կարող մեր ըն-  
դունիլ հաւատոյ ճշմարտութիւններն , ո-  
րոցմէ կախուած է արդէն մեր փրկու-  
թիւնը , եթէ Հոգին Սուրբն չօդնէ . վասն  
զի մարդ շատ չար է և նորա սիրան շատ  
ապականուած է չարութեամք . ուրեմն  
չէ կարող ինքնին սիրել եւ հեաղանդիլ  
յայտնուած ճշմարտութեանց . “Խորհուրդ  
մարմեւոյ թշնամութիւն է յԱստուած , զի  
օրինացն Աստուծոյ ոչ հնարանդի . նա և  
կարէ իսկ ոչ ” : Հո.ալ . Բ . 7 : “ Զի շնոր-  
հօք նորա էք փրկեալ ’ի ձեռն հաւատույն-  
եւ ար’ ոչ ’ի ձէնջ , այլ Աստուծոյ պար-

պեւ է ։ Եվթու . Բ . 8 : Այս պատճառաւ  
ահա Հոգին Սուրբ կ'անուանի Աստուա-  
ծաշնչի մէջ Հոգի հաւատոյ : “Արդ՝ ունիմք  
զնոյն Հոգի հաւատոյ” : Բ . Կորն . Գ . 13 :  
Եւ ամենայն Ճշմարիտ հաւատացեալները  
կը խոստվանին , որ նոցա հաւատն է  
Ներգործութիւն Հոգբայն Սրբոյ :

Հոգին Սուրբ կը ներգործէ մարդոց  
վերաց , որ մարդոց մէջ ծնանի հաւատ  
արտաքին միջոցներով : Աստուածաշնչնէ  
Քրքի լնմթերցանութեամբ , ակօմքով եւ  
եկեղեցական խորհրդներով : Այս արտա-  
քին ներգործութիւնը միշտ և հանապաղ  
կապաւած պէտք է լնի ներգին ներգոր-  
ծութեան հետ : Մարդն եւս պէտք է աշ-  
խատի իւր կողմէն , որ արժանանայ ասա-  
ուածոյին ողորմութեան : Ուստի ովէտք  
է ունենայ հետեւողութիւն գործ գնել  
այն արտաքին օգնութիւններն , զոր Հոգին  
Սուրբ կը տաց և ամեն ժամանակ պէտք  
է մատոց մէջ պահէ՛ ոչ թէ իբրեւ լոկ ճա-  
նաչողութիւն կամ գիտութիւն , այլ ունե-  
նայ հեզ , Ճշմարիտ և խննարհ սիրո , որ  
երբէք չ'ընդգիւմանայ Հոգւոյն Սրբոյ , այլ  
միշտ սրանէ Ճշմարտութիւն , որոյ համար  
կ'ասէ Քրիստոս . “Եթէ ոք կամի զկամն

նորա առնել , գիտացէ վասն վարդա-  
պետութեանս , յԱստուծոյ իցէ արդեօք՝  
եթէ ևս ինչ յանձնէ իմմէ խօսիմ ” : Յով .  
է . 17 : Տայց այս գիտութիւնը պէտք չէ  
հպարտացնէ մարդոյ սիրար , որպէս զի  
հպարտութեամբ չը կորուսանէ իւր վե-  
րայ եղած ներգործութիւնն Աստուծոյ :  
“ Գիտութիւն հպարտացուցանէ , այլ սէր  
շինէ ” : Ա . Կորն . Է . 1 :

**Մարդ** ջերմեռանդն աղօթքով պէտք  
է խնդրէ Աստուծմէ հաւատ , որ Աստու-  
ծոյ ամենէն գերազանց շնորհքն է . վասն  
զի հաւատը միայն կը տայ ճաշակումն ա-  
մենայն ճշմարտութեանց եւ զօրութիւն  
պատրաստ լինելու Աստուծոյ պատուիրա-  
նաց համար և ամեն ժամանակ Աստուծոյ  
սիրոյ համար ընծայել իւր ամեն սիրած  
բաներն :

**Թէպէտ** Հոգին Սուրբ սովորաբար  
միշտ գործ կը դնէ արտաքին միջոցներ ,  
որ ծնանի մեր մէջ հաւատ , բայց նորա  
ներքին ներգործութիւնն այնպէս չէ կա-  
պուած արտաքին միջոցներու հետ , որ ա-  
ռանց նոցա ևս երբեմն չը ներգործէ մար-  
դոյ հոգւց վերայ , մանաւանդ այն ժա-  
մանակ , երբ մարդ չէ կարսղ ունենալ

արտաքին միջոցներ , ինչպէս կը տեսնեմք Քրիստոսի մօտ խաչուած աւագակի եւ այլոց վերաց :

## ՀԱՆԳԱԿ ՀԱԻԱՏՈՅ

ԽՈԲՀՈՒԲԴՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Այս ճշմարտութիւններն , որոնք պէտք է լինին Քրիստոնէական հաւատոց հիմն , հաւաքուած են միասին եւ կ'անուանին ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱԻԱՏՈՅ<sup>(1)</sup> , այսինքն Փողովածոց հաւատոց ճշմարտութեանց , որ է այս . .

“Հաւատամբ ՚ի մի Աստուած  
՚ի Հայրն ամենակալ՝ յԱրարիչն  
երկինի եւ երկրի՝ երեւելեաց  
և աներեւութից :

(1) Հանգանակ բառն՝ ուրիշ վեցուաց մէջ կ'ասուի Սիմբօզում , որ է մի նշան , որ հին ժամանակները կը տացին ճաշի հրաւիրուած մարդկանց , կամ այնպիսի նրանց , որ հեռի եղած բարեկամները կարողանային այս նրանով զիրար ճանաշել : Այս անունը տուին Քրիստոնէից հաւատոց ճշմարտութեանց , որ առվաւ կարողանան զիրար Քրիստոնեայ ճանաչել : Որոնք ճշմարտութեամբ եւ չերմեւանգութեամբ կը հաւատային . նարա մէջ եղած ճշմարտութեանց :

Եւ'ի մի Տէր Յիսուս Քրիստոս,  
 յԱրդին Աստուծոյ , ծնեալն  
 յԱստուծոյ Հօրէ Միածին, այս  
 ինքն յեռթենէ Հօր , Աստ  
 ուած յԱստուծոյ , լոյս 'ի լու  
 սոյ , Աստուած Ճշմարիտ , յԱս  
 տուծոյ Ճշմարտէ , ծնունդ և  
 ոչ արարած . նոյն ինքն 'ի բը-  
 նութենէ Հօր , որով ամենայն  
 ինչ եղեւ յերկինս և 'ի վերայ  
 երկրի , երեւելիք եւ աներե-  
 ւոյթք . որ յաղագս մեր մարդ-  
 կան և վասն մերոյ փրկութեան  
 իջեալ 'ի յերկնից . մարմնացաւ ,  
 մարդացաւ , ծնաւ կատարելա-  
 պէս 'ի Մարիամայ որբոյ կու-  
 սէն Հոգւովին Արբով , որով եւ-  
 առ զմարմին՝ զհոգի եւ զմիտ  
 և զամենայն որ ինչ է 'ի մարդ ,  
 Ճշմարտապէս և ոչ կարծեօք ,  
 չարչարեալ խաչեալ թաղեալ

յերբորդ աւուր յարուցեալ՝  
ելեալ՚ի յերկինս նովին մարմ  
նովին նստաւ ընդ աջմէ Հօր・  
գալոց է նովին մարմնովին եւ  
փառօք Հօր ՚ի գատել զիենդա  
նիս և զմեռեալս, որոյ թագա  
ւորութեան ոչ գոյ վախճան։

Հաւասամք և ՚ի Սուրբ Հոգին  
յանեղն և ՚ի կատարեալն, որ  
խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգա  
րէս և յԱւետարանս . որ էջն  
՚ի Յորդանան, քարոզեաց զՅո  
ւարեալն՝ եւ բնակեցաւ ՚ի  
Սուրբսն։

Հաւասամք և ՚ի մի միայն՝ ընդ-  
հանրական եւ յառաքելական  
Եկեղեցի՝ ՚ի մի մկրտութիւն,  
յապտշխարութիւն, ՚ի քա-  
ւութիւն եւ ՚ի թողութիւն  
մեղաց ՚ի յարութիւն մեռե-  
լոց, ՚ի գատաստանն յաւիտե-

Նից Հոգւոց և մարմնոց . յար-  
քայութիւն երկնից եւ ՚ի-  
կեանան յաւիտենականս „:

**Ի** սկզբան Քրիստոնէութեան այս Հան-  
գանակը կարծ էր այս խօսքերով . “Յա-  
նուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ” .  
զոր Առաքեալք կ’ասէին Քրիստոսի հրա-  
մանաւ : Բայց երբ Քրիստոնէութեան դէմ  
ելան զանազան մտքեր , այն ժամանակ լո-  
կրսան աւելանալ Հանգանակի մասունք-  
ներն և այս Հանոգանակը գրուեցաւ Նի-  
կիոյ ժողովոյն մէջ , Քրիստոսի 325 թուա-  
կանին . 318 Հայրապետաց համաձայնու-  
թեամբ , Մեծն Աթանասի ձեռքովն , որ  
մինչեւ ցայսօր եւս Հայաստանեաց Եկե-  
ղեցին ունի անփոփոխ , բայց աւելացրնե-  
լով մեր Գրիգոր Լուսաւորչի պարզ եւ  
ճշմարիտ խոռարաշնութիւնը :

“**Իսկ մեք վառաւորեսցուք** ,  
որ յառաջ քան զյաւիտեանս  
երկիր պատանելով Սրբոյ Նր-  
բորդութեանն եւ միոյ ասա-

ուածութեանն Հօր և Որդւոյ  
և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ  
յաւիտեանս յաւիտենից ա-  
մէն ։ :

Հաւատոյ Հանդանակի գլխաւոր մա-  
ստերներն են շորս . Ա . Հաւատաչ ՚ի Հայք  
Աստուած . Բ . ՅՈՐԴԻՆ նորա ՚ի Յիսուս  
Քրիստոս . Գ . ՚ի Սուրբ Հոգին , և Դ . յե-  
կեղեցի եւ ՚ի խոստացեաչ ուղորմութիւնն  
հաւատացելոց :

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

“Հաւատամք ՚ի մի Աստուած , ՚ի Հայրն  
ամենակաչ յԱրարիչն երկնի եւ երկրի՝  
երեւելեաց եւ աներեւութից ։ :

Հաւատաչ ՚ի մի Աստուած՝ ոչ թէ մի-  
այն կը նշանակէ . որ Աստուած կայ եւ  
յայտնուած է մարդոյն . այս հաւատը դե-  
ւերն եւս ունին . “Դու հաւատաս զի մի  
է Աստուած . բարւոք առնես , եւ դեւք  
հաւատան և սարսին ։ : Յակ . Բ . 19 . Վա-  
սրի զի հաւատալ որ կայ Աստուած եւ

այս ճանաչողութիւնը գործ չը դնել աւելի վատ է , քան թէ չը հաւասառաւ խօսքավնորա գոյութեանը : Այս ճշմարիտ հաւատը պէտք է զԱստուած երեւեցնէ մեզ , ինչպէս կ'ասէ Հանգանակը թէ՝ կայ մի Աստուած , որ ունի ամեն կատարելութիւններ և որ ստեղծած է աշխարհը , կը կառավարէ եւ կը նախախնամէ , նմառէտք է ընծայեմք մեր ամեն գործքերը և պատրաստ լինիմք նորա ամեն հրամանները կատարելու :

**Ասելով՝** Հաւատամք ՚ի մի Աստուած , պէտք է Աստուծոյ գոյութեան հետ իմանամք միանգամցն եւ նորա բնութիւնն ու կատարելութիւններն , իմանամք թէ ինչ է արած մարդոյ համար եւ ինչ է յայտնած իւր վերայ , որ կարողանամք ճանաչել զնա , հաճոյ լինիլ նման և գտանել ողորմութիւն ՚ի նմանէ : Բայց մեք չեմք կարող կատարելապէս ճանաչել Աստուծոյ կատարելութիւնները , վասն զի ըստ մեծի մասին խորհուրդ են մեզ համար և այն քան կը ճանաչեմք , ոքքան Աւետարանը մեղ յայտնած է . “ Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի Հօրէ իմմէ և ոչ ոք գիտէ թէ ովլ է Որդի , եթէ ոչ Հայր , և ովլ է

Հայր՝ Եմէ ոչ Որդի, և ում կամիցի Որդին յայտնել ու Պահ. Ժ. 22: Եւ սորա պատճառն այն է, որ Աստուած Հոգի է անբահման և մեք սահմանաւոր. ուրեմն միայն նորա Ճանապարհի ափերը կարող եմք տեսնել. “Մեծ է Տէր և օրհնեալ է յոց և մեծութեան նորա ո՛չ դոց չափ” : Սադ. Ճ. 3:

**Ա**ստուածային բնութեան վերաց Ա. Գիրքը կ'ուսուցանէ մեզ Երկու բան. Առաջին՝ Որ չը կայ ուրիշ Աստուած բաց ՚ի նմանէ. “Լուր, Խրայէլ, Տէր Աստուած մեր Տէր մի է” : Բ. Օրին. Զ. 4: “Մի է Աստուած և Հայր ամենեցան, որ ՚ի վերաց ամենայնի եւ ընդ ամենեսին ՚ի մեզ” : Եփես. Գ. 6: Երկրսրդ՝ աստուածային բնութիւնը հասարակ է Հօր, Որդւց և Հոգւոյն Սրբոց և այս Երեք անձինքն ունին մի Աստուածութիւն : Այս է Քրիստոնէից հաւատոց, այսակէս կը խօսի Սուրբ Գիրքը աստուածային Երեք անձանց վերաց: “Ենորհք Տեառն մերց Յիսուսի Քրիստոսի, և մէրն Աստուածոյ եւ Հաղորդութիւն Հոգայն Սրբոյ, ընդ ձեզ ընդ ամենէսին” : Բ. Կորն. Ժ. 13: “Էստ կանուխ Վիտութեանն Աստուածոյ Հօր, սրբութեամք

Հոգւոյն ՚ի հնազանդութիւն և ՚ի հեղումն  
արեան Յիսուսի Քրիստոսի : Ենորհք ընդ  
ձեզ և խաղաղութիւն բազմասցին ։ Ա.  
Պետ. Ա. 2: « Զի երեք են որք վկայեն  
յերկինս . Հայր , Բանն և Հոգին Սուրբ .  
Եւ երեքինս մի են ։ Ա. Յով. Ե. 7: « Մը  
կրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդուոյ և  
Հոգւոյն Սրբոյ ։ Մատ. Իլ. 19:

**Առաքեալները կը մկրտէին անուամբ**  
Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ , պատ-  
ճառն որ՝ Մկրտութիւնն ընծայ է Աստու-  
ծոյ , և Յիսուս Քրիստոս հրամայեց մկրտ-  
ան անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
Սրբոյ : Այս Երրորդութիւնն է հիմն Քր-  
իստոնէական Հաւատոյ և երեք անձնելին  
ունին մի ներգործութիւն մեր փրկութեան  
համար , բայց զանազան կերպով : - Հայրը  
կը կոչէ զմեզ և կը մօտեցնէ իւր Որդւոյն,  
« Ո՛չ ոք կարէ գալ առ իս՝ եթէ ոչ Հայրն  
որ զիս առաքեայ՝ ձգեսցէ զիս ։ Յով.  
Զ. 44: Կը կոչէ և կը մօտեցնէ Որդւոյն ,  
զոր ՚ի յաւիտենից ծնաւ և պատրաստեց  
նորա գալուստն : Որդին եկաւ երկիքէն ,  
միացաւ մարդկային բնութեան հետ , որ  
զմեզ փրկէ մեր մեղքէն և մեր հոգւոյն  
տայ կեանք յաւիտենական : « Ո՛չ ոք գոյ

առ Հայր՝ եթէ ոչ ինեւ ու Յով. Ժ. 6.  
Եւ Հոգին Սուրբ մեր նորոգիչն է, որ կը լւ-  
կին հաստատեց մեր մէջ Աստուծոյ նմա-  
նութիւնը և ընդունակ կ'առնէ զմեղ Առ-  
տուծոյ տուած փրկութեանը ։ Յորժամ-  
եկեսցէ նա՝ Հոգին Ճշմարտութեան, ա-  
ռաջնորդեսցէ ձեղ ամենայն Ճշմարտու-  
թեամբ ու Յով. Ժ. 13. « Եւ ոչ ոք կարէ  
ասել Տէր՝ զջիսուս . եթէ ոչ Հոգւովին  
Արքով ու Ա. Կորն. Ժ. 3. »

Հայր ունի երկու նշանակութիւննեա-  
սարակ և յատուկ : Հանգանակի մէջ ասե-  
լի Հայր՝ պէտք չէ հասկանանք Հօր Առ-  
տուծոյ հասարակ նշանակութեամբ, որ  
ամենուս համար Հայր է առհասարակ,  
այլ յատուկ նշանակութեամբ Հօր Աստու-  
ծոյ, որ նա է մի անձն Երրորդութեան :

Աստուծած ունի ԿԵՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ  
առ ինքն և առ մարդ : Առ ինքն ունեցած  
կատարելութիւնները սոքա են . — Յափ-  
տենական, Անմահ, Հոգեւոր, Ամենակա-  
րուկ, Անփախլիս, Ամենազէտ, Ամենուրեք,  
և այլն : Իսկ առ մարդ ունեցած կատարե-  
լութիւններն են . — Բարի, Իմաստուն,  
Սուրբ, Արդար, Ճշմարիս, Հաւատարիմ,  
և այլն :

**Թէպէտ Հանգանակի** առաջին մասին  
մէջ Աստուծոյ կատարելութիւններէն մի-  
այն մին կը յիշուի, այսինքն Ամենակարո-  
ղոթիւնն : Բայց այս կատարելութիւնը կը  
բովանդակէ իւր մէջ միւս բոլոր կատա-  
րելութիւններն և այս ամենակարող կա-  
տարելութիւնը փառաւորապէս յայտնի-  
ւեցաւ Արարչագործութեամբ :

**Յախտենական** և անմահ առելով՝ մէք  
կը խոստովանիմք, որ Աստուծած չ'ունի ոչ  
սկիզբն և ոչ վախճան : Մեր մարքը խոս-  
տովանելով Աստուծոյ գոյութիւնը Յախ-  
տենական՝ կարող կը լինի մեկնել աշխար-  
հիս սկիզբն եւ Աստուծած Յախտենական  
կ'անուանել զինքն, — Եհովայ, այսինքն եւ  
եմ, որ Են :

**Առելով** Հոգեւոր՝ կը խոստովանիմք, որ  
Աստուծած չ'ունի ոչ ինչ նիւթական մա-  
սրն, այլ Հոգի է նա : “ Հոգի է Աստուծած  
և երկրապատաց նորա՝ Հոգւով և ճըշ-  
մարտութեամբ պարտ է երկիրապատանել ::  
Յով . 24 : Թէպէտ և Աստուծածաշունչ  
Գրոց մէջ կ'ընծայուի Աստուծոյն ականջք,  
աչք, ձեռք, ձայն, որոք և այլն . “ Եղիցին  
ականջք քո ՚ի լսել զՃայն աղօթից իմոց ::  
Սադ . ձիթ . 2 : “ Աչք Տեառն ՚ի վերայ

արդարոց ։ Սահ. 1. Գ. . 16: « Զետք ըս  
որարին և ստեղծին զիս ։ Սահ. Ճ. Փ. .  
73: « Զայն Տեառն ՚ի վերայ Հուրց ։ Սահ.  
Փ. . 3: « Երկիր պատուանդան ոսից նո-  
րա ։ Մաս. Ե. . 33: Բայց այս խօսքերը  
գործ կ'ածուին յարաբերելով առ մարդնե-  
Առուրբ Գիրը խօսելով Աստուծոյ վերայ՝  
մարդկեղեն կերպարանքով կը ձեւացնէ  
և այսու կը յայտնէ մեզ Աստուծոյ ներ-  
գործութիւնը ։

**Ասելով** Ամենազիս՝ կը խօստովանիմք,  
որ անցեալն, ներկայն և ապառնին յայտնի  
է Աստուծոյ. վասն զի՞ նա է ստեղծող ա-  
մենայնի եւ Հոգի յաւխտենական, ամե-  
նայն ինչ ներկայ է նորա համար ։ « Այ-  
սմենայն ինչ մերկապարանոց կայ առաջի  
աջաց նորա ։ Եբթ. Դ. . 13: « Ո՞լ է իր-  
բեւ զիս յառաջ գայցէ, ձայն տացէ, պատ-  
մեսցէ և պատրաստեսցէ ինձ՝ յորմէ հեաէ,  
արարի զմարդն յաւխտեան և որ ինչ գա-  
լոյն է, մինչքեւ եկեալ իցէ պատմեսցէն  
ձեզ ։ Եսայ. Խ. Դ. . 7:

**Ասելով** Ամենակարոն՝ կը խօստովա-  
նիմք, որ չը կոյ ոչ ինչ՝ որ կարողանոց Աս-  
տուծոյ արգելք լինիլ, վասն զի՞ ինչ որ  
կամենայ՝ կարուլ է առնել եւ արորածն

այնքան միայն զօրութիւն եւնի , որքան  
տուած է Արարին : « Ես եմ Աստուած  
քո , հաճայ լե՛ր առաջի իմ և անարատ » :  
Ծննդ . ԺԷ . 1 : « Հայեցաւ ՚ի նոսա Յիսուս  
և ասէ . առ ՚ի մարդկանէ այդ անկար է ,  
այլ առ Աստուածայ ամենայն ինչ զօրաւոր » :  
Մատ . ԺԹ . 26 : « Որ ես , Տէ՛ր , Տէ՛ր , գու  
արարեր զերկինս և զերկիր զօրութեամբ  
քով մեծաւ և բաղկաւ քո բարձու » :  
Երեմ . ԼԲ . 17 :

**Ասելով** Ամենուրեք՝ կը խոստավանիմք ,  
որ չը կայ ոչ մի տեղ , ուր Աստուած չը  
կարսղանայ ներգործել իւր հոգւով : Այս  
կատարելութիւնն կը պարունակէ իւր  
մէջ Աստուածայ ամենապիտութիւնն եւ  
ամենակարողութիւնն : « Եթէ թագիցէ  
մարդ ՚ի թագսաւեան և ես ոչ տեսից ըդ-  
նա , ասէ Տէ՛ր . միթէ զերկինս և զերկիր  
ես ոչ լիում » : Երեմ . ԻԳ . 24 : « Յա՞ եր-  
ժայց ես ՚ի հոգւոյ քումմէ և կամ յերե-  
սաց քոց ես յո՞ փախեաց : Եթէ ելանեմ  
յերկինս՝ գու անդ ես եւ եթէ իջանեմ  
՚ի գժոխս և անդ մօա ես » : Սահ . ՃԼԲ .  
7-8 :

**Ասելով** Անվտախի՝ կը խոստավանիմք .  
որ հեռի է Աստուած ամենայն վտիոխու-

թենէ , վասն զի ամենայաւիաեանն պէտք  
 է լինի անփափոխ , ոչ ոք չ'է կարող ոչ  
 տալ և ոչ խլել կամ յափշտակել յԱստու-  
 ծց և ոչ լիչ : Վասն զի նա է Տուիչն ա-  
 մենայնի . նա է միշտ անփոփոխ եւ թե-  
 պէտ նորա ներգործութիւնը մարդոց վե-  
 րայ կը փոփոխի մարդոց հոգւոց դրութեան  
 համեմատ , բայց նա ինքն կը մնայ անփո-  
 փոխ . ինչպէս աշքով հիւանդը կը կարծէ  
 թէ արեգակի լցոր փոխուած է . բայց նո-  
 րա կարծած փոփոխութիւնն իւր աչաց  
 տկարութիւնն է , այսպէս եւս շատ տեղ  
 կ'առուի Սուրբ Գրոց մէջ . Աստուած զբո-  
 ջացաւ , Աստուած բարկացաւ : Բայց Աս-  
 տուած զբոջաւ՝ կը նշանակէ թէ մարդ  
 թիւրեց իւր նպատակը , զոր Աստուած  
 նշանակած էր նորա համար : Աստուած  
 բարկացաւ , այսինքն մարդու գործած է այն-  
 պիսի բան , որ արժանի է պատճոյ : “Ա-  
 մենայն տուրը բարիք եւ ամենայն պար-  
 գեւք կատարեալք ՚ի վերուստ են իթեալք  
 առ ՚ի Հօրէն լուսոց , յորում չիք փոփո-  
 խումն եւ կամ շրջելոց սոսւեր ” : Յակ . Ա .  
 17: “Նոքա անցանեն և գու կաս և մնաս  
 յաւիաեան : Ամեներեան որպէս զՃործս  
 մաշեսցին և որպէս զվերարկուս փոխեսցես

զնոսա և փախեացին , բայց դու նոյն խոկ  
ես և ամք քո ոչ անցանեն „ : Ասդմ . ձ Ա .  
27 – 28 :

**Ասելով** Բարի՝ կը խոտովվանիմք Աս-  
տուծոյ անփափոխ կամքը , որ պատրաստ  
է ամեն ժամանակ բարութիւն անել ա-  
րարածոց : Աստուած իւր բարութեամք  
կը ներգործէ մեր վերայ զանազան կեր-  
սով մեր հոգւոյ դրութեան համեմատ և  
ամեն ժամանակ այնպէս կը ներգործէ ,  
ինչպէս յարմարէ մեր վիճակին : Աստուած  
իւր բարութիւնը կը տայ միշտ իւր սփրե-  
լեաց . իսկ ինչ ժամանակ նա իւր բարու-  
թիւնը կը սփռէ մեղաւորներու վերայ՝  
կ'ասուի ողորմաթիւն : Երբ Աստուծոյ բա-  
րութիւնը կը սպասէ մեղաւորաց գարծին՝  
այն ժամանակ կ'ասուի համբերութիւն :  
Երբ Աստուծոյ բարութիւնը կը նուշ-  
ղեցնէ պատժոյ սաստկութիւնը՝ կ'ասուի  
մեծահոգութիւն : Երբ Աստուծոյ բարու-  
թիւնը կը ներէ մեղաւորաց եւ կը մօ-  
տեցրնէ առ ինքն՝ կ'ասուի ողորմածու-  
թիւն : Աստուծոյ այս մեծ կատարելու-  
թիւնն , այն է ամենաբարութիւնն , կը  
ծագի անտի , որ Աստուած ունի այն  
ամենայն , ինչ որ հարկաւոր է բարու-

թիւն անելու համսոր, այսինքն ամենագիւ-  
տութիւն, ամենակարողութիւն, ամեն-  
արեքութիւն, և ոչ ինչ բան կարող չ'է  
արգել. դասնաց նորա բարութեամբ :  
Այս կատարելութիւնն կը հաստատուի  
անթիւ բարութեամբ, զոր Աստուած կը  
ափուէ մեր վերաց և իւր մօտ աեղ կը պա-  
հէ մեղ համար : Աստուածոց բարութիւնն  
երեւեցաւ մանաւանդ նորա անհուն սի-  
սոց մէջ, որով փրկեց զմեղ՝ ըստ խնայելով  
իւր Արդւոց անձն մեղ համար : “Այսուիկ  
գիտացաք զաերն, զինա զանձն իւր եղ՝ ի  
վերաց մեր եւ մեր վասն եղաքարց մերոց  
պարտիմք դնել զանձինս ու . Յով. Գ. 16:  
“Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն Աստուածոց  
՚ի մեղ, զի զմրդին իւր միածին առաքեաց  
Աստուած յաշաարհ, զի եղիցուք նովա-  
կենդանի ու . Ա. Յով. Գ. 9 :

Ասելով Իմաստուն՝ կը խոստավանիմք,  
որ Աստուած ունի ամենաբարի նպատակ  
և այն բարի նպատակի համար գործ կը  
դնէ բարի միջոցք կամ հնարք : Այս կո-  
տարելութիւնն կը պարունակէ իւր մէջ  
ամենագիտութիւնն, որով Աստուած ունի  
ամենազաւ ճանաչողութիւն : Կը պարու-  
նակէ ամենաբարութիւնն, որով միշտ կը

յանեայ բարի առնել։ Կը պարունակէ ամենակարողութիւն, որուն ոչ ոք կարող է արգելք դառնալ։ Այս ամենիմաստութիւնն Աստուծոյ կը տեսնեմք այսու, որ Աստուած միշտ կը նախախնամէ եւ կոզրմի արարածոց և Սուրբ Գիրքը կ'անուանէ զԱստուած միայն իմաստութեած գործը քովք ։ Աստ. ձ. 24.։ “Աստուած իմաստութեամք հիմունս է արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով։ Եւ հանձարով իւրով զանգունդս պատառեաց”։ Առակ. գ. 19-20.։ “Մեծդժխորհրդավք և զօրաւոր գործավք ։ Ամենակալ մեծանունդ Տէր, աչք քաց են յամենայն ճանապարհու որդւոց մարդկան, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհի իւրում, ըստ պաղոց գնացից իւրեանց”։ Երեմ. լ. բ. 19.։

Սուրբ բառը Ս. Գրոց մէջ մի քանի տեղ կը նշանակէ մեծութիւնն Աստուծոյ. բայց առ հասարակ Սուրբ տսելով՝ մէք կը հասկանամք, որ Աստուած կ'ատէ ամենայն մեղք և կը սիրէ ամենայն առարինութիւն։ Գեղեցիկ վկայ է Աստուծոյ

սրբութեան մեր խղճմանքը , որոյ վերայ  
Աստուած ՚ի սկզբանէ գրեց սրբութեան  
օրէնքը , ինչպէս Մալխախ քարեղչն տախ  
տակի վերայ իւր սիրոյ օրէնքն : Սուրբ  
Գիրքը շատ տեղ կրփառաւորէ Աստուծոյ  
ոյս կատարելութիւնը . “Երգէին զերգս  
Մալխախ առաջի Աստուծոյ , եւ զերգս  
Գառինն ասելով առը , սուրբ , սուրբ , Տէ՛ր  
զօրութեանց ” : Յայտ . ԺԵ . 3 : Աստու  
ծոյ աչքը սուրբ է , որ չը տեսանէ չարու  
թիւն : Սորութիւնը տուած է մեզ ինչ  
ովէս մէկ հնարք կամ պայման Աստուծոյն  
մօտենազու : “Ա. Ա. ըստ Արքոյն , որ կո  
չեաց զձեզ և դուք սուրբք յամենայի գը-  
նացս ձեր լինիջիք ” : Ա . Պիտ . Ա . 15 :  
“Զիսազազութեան զհետ երժայք ընդ  
միմեանս եւ զարբութեան , առանց որոց  
ոչ ոք տեսանիցէ զջէր ” : Եբք . ԺԲ . 14 :

Ասելով Արդար՝ կը իսաստովանիմք Աս-  
տուծոյ անխափախ կամքը , որ նա կը այս վարձ  
իւր սիրելեաց՝ եւ պատիժ մեղաւորաց :  
Ա. յա կատարելութիւնը կը պարունակէ  
իւր մէջ ամենիմաստութիւնն և ամենա-  
բարաւթիւն : “Քանզի հաստատեաց օր՝  
յորում պարտ է գատել զաշխարհս ար-  
դարութեամբ ՚ի ձեռն առնան , որոյ սահ-

մանեաց տալ հաւատոս ամենեցուն՝ յարուցեալ զնոս ՚ի մեռելոց ։ Գործ . Ժէ . Յլ-

**Ասելով** ճշմարիտ և Հաւատարիմ՝ կը խոստովանիմք , որ Աստուծոյ ամեն մի խօսքըն կամ պատուիրանիքն համաձայն է բընութեան իրաց , և ոչ ինչ ըլ խոստանար Աստուած , որ խօփապէս ըլ կատարուի = Այս պատճառաւ Առւրբ Գիրքն կ'անուանէ զնա Աստուած ճշմարտութեան , Աստուած կենդանի և ճշմարիտ : « Եւ որպէս դարձայք առ Աստուած՝ ՚ի կոոյ անտի՝ ծառայել Աստուծոյ կենդանւոյ և ճշմարտի » : Ա . Թեսադ . Ա . 9 : « Հաւատարիմ եղեւ յաշխարհի և վերացու փառքը » : Ա . Տիմ . Գ . 16 : « Հաւատարիմ եղեւ պատգամքն Աստուծոյ » : Հառլ . Գ . 2 :

**Աստուծոյ** այս ամեն կատարելու թիւններն իրարու հեռ Համաձայն են , ուստի և մարդս պէտք է դժոյշ լինի , երբ կը խօփ աստուածային կոտարելու թեանց վերաց խօսելով՝ միւներն ուրանաց . ինչ պէս կան մարդիկ , որ աստուածային արդարութեան վերաց խօսելու ժամանակ կ'աւրանան նորա բարութիւնը և կը կարձեն թէ՝ Աստուած ամենակարող լինելով՝

կ'առնել այնպիսի բան, որ հակառակ է նուրա արդարութեան :

**Աստուած** ունենալով այս ամեն կատարելութիւններն՝ Սուրբ Գրոց մէջ կ'անուանի Երանելի : « Որ ըստ Աւետարանի փառաց Երանելովն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատարիմ » : Ա. Տիմ. Ա. . 11 : Աստուած ունի այնպիսի փառք, որ ըստականիր ոչ ոքին և այս փառքը կը պարունակուի նորա կատարելութեանց մէջ, զոր միշտ կը տեսնէ և նոքօք կը փառաւորուի, և Աստուած արժան կը համօրի դնել իւր փառքն իւր կատարելութեանց և այն փառաւորութեան մէջ, որով մէք սիէռք է փառաւորեմք զնա : Այս վերջին եշտնակութեամբ կ'ասուի՝ Փառաւորնէ զԱստուած : « Քանզի գնոց գնեցայք, փառաւոր արարէք զԱստուած ՚ի մարմինս ձեր և ՚ի հոգիս ձեր, որ է յԱստուծոյ » : Ա. Կողմ. Զ. . 20 :

**Այս** ամեն կատարելութիւնները մեզ սիէռք է խանարհեցնեն Աստուծոյ առջեւ, որ միշտ մասնեմք նորա կատարելութեանց մերայ : Ոչ ինչ բան կարող չ'է այնքան մեծութիւն առ մէք հոգւոյն, ինչպէս մըտածելն Աստուծոյ կատարելութեանց վե-

բայ և փառաւորելին զնա : Պէտք է ուրեմն  
սիրեմք զԱստուած և Երկիւղ ունենամք  
՚ի նմանէ , ցանկամք նորա ողբրմութեանք  
և աշխատիմք գառնալ նմանող նման : “Արդ՝  
Եղերնւք դուք կատարեալք , որպէս Հայ-  
րն ձեր Երկինաւոր կատարեալ է ու Մատ .  
Ե . 48 :

**Աստուած յայտնեց իւր կատարելու-**  
**թիւններն իւր Գործքով ՚ի մկրանէ Եր-**  
**կրիքի եւ Երկրի Արարագութութեալբ ,**  
**այսինքն ամենայն շնչաւոր և անշունչ , Ե-**  
**րեւելի եւ աներեւոյմք արարածոց , ողք**  
**կը բովանդակիմն նորա մեջ :** Աստուած է  
պատճառ և Տէր բոլոր աշխարհի եւ մի  
այլ պատճառ չը կայ : Սուրբ Գիրքը յայտ-  
նի կուսուցանէ մեզ , որ Աստուած է ա-  
մենուն ստեղծողը եւ արարիչն . “ Աստ-  
ուած՝ որ արար զաշխարհս եւ զամենայն  
որ ՚ի նմա , նա Երկնից և Երկրի է Տէր ” :  
Գործ . ԺԷ . 24 : Մալխէս մարդարէն ման-  
րաման կը պատմէ մեզ Աստուծոյ արար-  
շագուծութիւնը՝ իւր Գլքի մեջ ( Աստ-  
ուածաշնչի մեջ ) ասելով թէ աշխարհը բ-  
ստեղծուած է Աստուծոյ խօսքով . “ Ի  
մկրանէ արար Աստուած զԵրկինս և զեր-  
կիք ու այլն : Մնադ . Ա . 1 : “ Նա առոց

և եղեն, հրամայեց և հաստատեցան ։  
Սահ. 1. թ. 9. « Հաւատավլք իմանամբ  
հաստատեալ զյաւիտեանն բանիւն Առ  
առածոց, աներեւութից զերեւելիսս և  
զեալ ։ Եբբ. ԺԱ. 3:

Սուրբ Գիրքը մեզ կ'աւառացանէ պարզ,  
որ այն խօսքը, որով ստեղծեց Աստուած  
զաշխարհ՝ է նորա Միածին Որդին: « Ի  
սկզբանէ էր բանն և բանն էր առ Աստ  
ուած և Աստուած էր բանն: Նո էր ՚ի  
սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նո  
վաւ եղեւ և առանց նորա եղեւ և ոչ ինչ  
որ ինչ եղեւն ։ Յով. Ա. 1—3: « Զի նո  
վաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յեր  
կինս և որ ինչ յերկրի, որ երեւին՝ և որ  
ոչն երեւին, եթէ աթոռք, եթէ տէրու  
թիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշ  
խանութիւնք, ամենայն նովաւ եղեւ և ՚ի  
նոյն հաստատեցաւ: Նւ նա է յառաջքան  
զամենայն եւ ամենայն ինչ նովաւ եկաց  
բոլանդակ ։ Կող. Ա. 16—17:

Բովանդակ արարածոց մէջ՝ ամենէն  
երեւելի են հրեշտակներն եւ մարդիկ:  
Հրեշտակները մարդիկներէն գերազանց  
հոգի են, որք Աստուծոց սորտաստորներն  
են, և այս պատճառաւ է, որ նոցա առ

նունն կ'ասուի Հրեշտակ, այսինքն Առաքեալ: Հրեշտակները կը բաժանուին երկու - բարի եւ չար: Բարի հրեշտակները նորա են, որք մնացին իրենց սրբութեան և հնագանդութեան մէջ եւ բազմաթիւ են: «Եւ տեսի և լուայ զձայն հրեշտակաց բազմաց, որք կային շուրջ զաթուով վըն և գորիւք կենդանեօք և էր թիւ նոց բիւրք բիւրոց և հազարք հաղարաց»: Յայտ. Ե. 11: «Թէ համարիցեն թէ ոչ կարեմ աղաչել զհար իմ և հասուցանիցենած այժմ այսր տւելի քան զերկոտասան գունդո հրեշտակաց»: Մատ. ԻԶ. 53: Հրեշտակները կ'անուանին Սերովքէք, Քերովքէք և այն, և նոցա պարտաւորութիւնն է փառաւորել զԱստուած եւ կատարել նորա հրամանն: «Եւ Սերովքէք կային շուրջ զնովաւ, մեց թէւք միոյ և վեց թէւք միոյ, երկուքն ծածկէին զերեսս իւրեանց և երկուքն ծածկէին զատս իւրեանց և երկուքն թուոցեալ աղաղակէին մի առ մի և տաէին. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի են ամենայն երկիր փառօք նորա»: Եայ. 9. 2-3: «Ասեմ ձեզ՝ զի հրեշտակ նոցա յերկինս՝ հանապազ տեսանէ զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է»: Մատ.

ԺԵ . 10 : “ Ո՞չ ապաքէն ամենեքեան հո-  
 գիք են հարկաւորք , որք առ աքին ՚ի ըս-  
 պասաւորութիւն այնոցիկ՝ որ ժառանգե-  
 լցն են զիգրիութիւնն : Եթի . Ա . 14 : Հրեշ-  
 տակները սիրով եւ ուրախութեամբ կը  
 հնազանդին Աստուծոյ եւ նոցա հնազան-  
 դութիւնն է , զոր Փրկիչն մեզ օրինակ կը  
 տոյ Տէրունական աղօթից մէջ առելով .  
 “ Եղիցին կամք քո , որպէս յերկինս եւ  
 յերկը ” : Մատ . Զ . 14 : Իսկ չար հրեշ-  
 տակները նոշա են , որք հպարտութեամբ  
 ընդդիմացան Աստուծոյ եւ հեռանալով  
 բնակեցան անդնդոյ մէջ : “ Զի եթէ ՚ի  
 հրեշտակն յանցուցեալս Աստուծ ոչ  
 խնայեաց , այլ խաւարային կապանօք ար-  
 կեալ ՚ի տարտարան՝ ետ պահել ՚ի դա-  
 տսստանն : Ա : Պետ . Բ . 4 : Քրիստոսի  
 մարդեղութենէն առաջ՝ այս չար հոդիքն  
 ունէին զօրութիւն կամ իշխանութիւն  
 մարդոյ վերայ , որք կը ծնանէին մարդոյ  
 մէջ զանազան հիւանդութիւններ : Այս  
 հիւանդութիւններէն էր , որ Քրիստոս  
 փառաւորապէս կ’ապատէր մարդոյ հոգին  
 և մարմինը : Այս աղատութենէն յետոյ՝  
 մէք այլ եւս պատճառ չ’ունիմք վախնա-  
 շու սատանայի իշխանութենէն , այլ միայն

պէտք է զգոյշ լինիմք , որ չը փորձեն ըդ-  
մեղ չարսւթեան ճանապարհաւ : « Զի ոչ  
է մեղ պատերազմ բնդ մարմնոյ և արեան,  
այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետու-  
թիւնս եւ ընդ աշխարհակալոյ խաւարիս  
այսորիկ , ընդ այս չարսւթեան , որք են  
՚ի ներքայ երկինից ո : Եվեա . 2 . 12 : « Ար-  
թուն լերուք և հոկեցէք , զի ոստին ձեր  
աստանայ իբրեւ առիւծ գոչէ , զջի եւ  
ինդրէ թէ զ՞ կլանիցէ ո : Ա . Պեա . Ե . 8 :

**Մարդ** առեղծուած է Աստուծմէ՝  
Հոգւով և մարմնով : Հոգին է մարդոյ մո-  
սկն , որ կը զանազանուի մարմնեն , բայց  
միացած է նորա հետ և այս միութեամք  
մորդ կը մտածէ , կը դատէ , ունի շարժ-  
մունք , զգացողութիւն և կեանք : Հոգւոյ  
մէջն է մարդկային արժանաւորութիւնը ,  
զօրութիւնը և ծշմարիտ կեանքը : Հոգոյն  
տուած է , որ աիրէ մարմնոյ վերայ և մար-  
մինը հնապանդի հոգւոյն : Ուստի՝ մարդ  
չէ , ինչպէս կ'ասեն , բանական կենդանի ,  
այլ Հոգի է նա մարմին հագած , որ մի գոր-  
ծի կամ միջոց է հոգւոյ համար աշխարհիս  
հետ կապակցելու և նորա վերայ ներգոր-  
ծելու : Նմանութիւնը և պատկերը , զոր  
Աստուծած տուած մարդոյն , կը նշանակէ ,

ո՞յ նա ստեղծեց զմարդ հոգեւոր, այսինքն  
ընդունակ դատելու, նկատելու և ճանա-  
չելու։ Ստեղծեց ազատ, այսինքն ընդու-  
նակ ընտրելու և կամենալու։ Ստեղծեց  
աւարձ, այսինքն ընդունակ բարի խնդրե-  
լու, Աստուծոյ լուսովը լուսաւորելու և  
նորա սկրոյ մէջ բնակելու։ Ստեղծեց ան-  
մահ, այսինքն ընդունակ յաւիտենական  
լինելու։ Հոգին է ուրեմն՝ որ կ'առաջնոր-  
դէ մարդոյն և իշխող կը շնէ աշխարհի  
վերայ։ « Փոքր ինչ խոնարհ արարեր զնա-  
քան զհրեշտակս, փառօք եւ պատուօք  
պատկեցեր վնա և կացուցեր վնա ՚ի վերաց  
ձեռակերտաց քոց »։ Սադ. Է. 6-7։

**Աստուծած** երբ ստեղծեց ամեն արա-  
րածները, յայսնեց որ ամենը բարի են,  
այսինքն բարութենէ են ստեղծուած, բա-  
րի են ստեղծուած և բարի լինելու հա-  
մար են ստեղծուած։

**Արարագործութիւնը** պետք է ծնանի  
մեր մէջ հնագանդոթիւն, աստուածապաշ-  
տութիւն, սէր եւ շնորհակալութիւն առ  
Աստուծած, որ նա ստեղծած է զմեզ և հա-  
զորդակից կ'առնե իւր Երջանկութեանը։  
Պէտք է նոյնագէս ծնանի մեր մէջ կրատա-  
բեալ հաւատարմութիւն, որ Աստուծած ինչ

ողէս որ տուած է կեանքը , նոյնապէս կը տայ  
և կեանքի ամեն հարկաւորութիւնները :  
“ Մի հոգացը վասն ոգւոց ձերոց թէ՝  
զի՞նչ ուտիցէք կամ զի՞նչ ըմալիցէք , և մի  
վասն մարմնաց ձերոց՝ թէ զի՞նչ ագանի-  
ցէք , ոչ աղաքէն ոգի առաւել է քան  
զիերակուր և մարմին քան դշանդերձ ” :  
Մատ . 9 . 25 : Պէտք է հսւատամք հաս-  
տատ , որ Արարիչը միշտ կը նախախնամէ-  
իւր արարածներն :

ՆԵԱԽԱԽԱՄԱՒԹԻԹԻԿԱՆ է Աստուծոյ այն  
ներգործութիւնը կամ կարտղ զօրութիւ-  
նը , որով նա կը հոգայ իւր արարածոց  
համար , նոցա կարօտութեանց համար ,  
և կը խառնուի նոցա կենաց մէջ , ինչպէս  
արժան է իրեն : Նախախնամութիւնը կը  
բաժանուի երկու շասարակ և Յատուկ :

Աստուծոյ հասարակ Նախախնամու-  
թիւնն է՝ երեւի աշխարհին տուած օրէնք-  
ներու մէջ , ինչպէս — արեգակի լուսաւո-  
րութեան , տարերաց , եղանակի և ժա-  
մանակի փոխարիւթեան մէջ : Աստուծո-  
այս Նախախնամութիւնն ունի ընդհա-  
նուր արարածոց վերայ , ինչպէս կ'առէ-  
Քրիստոս . “ Զի արեգակն իւր ծագէ ՚ի  
վերայ չարաց և բարեաց , և ածէ ոնձքեւ

՚ի վերայ մեղաւորաց և արդարոց Ապառ.  
Ե . 45 :

**Աստուծոյ յատուկ Նախախնամու-**  
թիւնն կ'երեւի այն ժամանակ , երբ Աստ-  
ուծու կը խառնուի մարդոյ յատուկ գոր-  
ծոց մէջ , ինչպէս կը տեսնեմք Մովսիսի .  
Յովսեփի պատմութեան մէջ և այլն : Այս  
Նախախնամութիւնը երբեմն կ'երեւի մեզ  
արտաքին ձեւով , ինչպէս՝ հրաշքներով .  
որոց մէջ յայտնի կ'երեւի նորա ձեռքը :  
Բայց առ հասարակ , Աստուծ մեզ կը  
նախախնամէ մեզմէն ծածկուած միջոցնե-  
րով , իւր Նախախնամութեանը գործիք  
չինելով մարդկանց գործքերը կամ անց-  
քերը :

**Խոստովանելով՝** որ Աստուծ ունի  
ամենամեծ կատարելութիւներ ամենակա-  
րութիւն , ամենիմաստութիւն և ամենա-  
բարութիւն , կը խոստովանիմք մի և նոյն  
ժամանակ , որ այս կատարելութեանց հա-  
մեմատ ունի և գործ , այսինքն Նախախ-  
նամութիւն : Նա ամենաբարի գոլով՝ կը  
նախախնամէ իւր արարածները , տալով  
ամենայն բարութիւնն Ամենիմաստ գոլով  
կը տայ այն հնարքները , որով մարդ կա-  
տող է բարութեան հանիլ , և ամենակա-

բաղ գոլով՝ կը տայ ամենուն կեանք և մի  
 ջոց՝ կենաց պահպանութեան : Ուրեմն՝  
 ուրանալ Աստուծոյ Նախախնամութիւնը՝  
 կը նշանակէ ուրանալ նորա ամեն կատա-  
 րելութիւնները, նաև նորա դոյտութիւնը :  
 Արարածն ամեն ժամանակ պէտք է կա-  
 խումն ունենայ Արարչի կոմքէն եւ լինի  
 նորա աշաց եւ ձեռաց ներքոյ : Թէորէտ  
 մէք կը աեսնեմք, որ մարդոյ ձեռագործը  
 մի քանի ժամանակ կը մնայ և կը տեւէ  
 առանց մարդոյ օգնութեան, բայց նորա  
 մնալու պատճառն եւս այն է, որ Աստ-  
 ուած բոլոր աշխարհս անդադար նախախ-  
 նամելով՝ այն ձեռագործն ես կը նախախ-  
 նամուի նորա մէջ : Արարածներն եւս ի-  
 րենց բնութեամք կը յայսնեն, որ Արա-  
 րիչն է Նախախնամուզը, վասն զի՞ արա-  
 րածն իւր կեանքն ու զօրութիւնն առած  
 է Արարչէն, և ոչ մի արարած իւր զօրու-  
 թեամք չ'է կարող կենալ առանց Արարչի  
 և Ատեղծողի պահպանութեան : « Ամենե-  
 քեան քեզ սպասեն և դու տաս կերա-  
 կուր նոցա ՚ի ժամու : Գարձուցանես զե-  
 րեսս քս ՚ի նոցանէ և խռավին, հանես զո-  
 դի ՚ի նոցանէ՝ պակասին և ՚ի հող դառ-  
 նան » : Սաղ. ձգ. 27—29 :

Եթէ Հանգանակի առաջին մասին  
մեջ Աստուծոյ մի կատարելութիւնն մի-  
այն կը յիշուի , այն է նորա ամենակարո-  
զութիւնը , պատճառն այն է որ Նախախո-  
նամութիւնն անշուշտ արարչագործու-  
թեան հետեւանքն է , ինչպէս կ'ասեն  
թէ Նախախնամութիւնն ոչ այլ ինչ է , և  
թէ ոչ շարունակ Արարչագործութիւն :

**Ա**շխարհիս իմաստուն եւ համաձայն  
կարգն ու կոնոնաւորութիւնն այնքան կը  
զարմացնէ զմեղ ամեն մի իւր մասնով ,  
մանաւանդ աստեղաց կանոնաւոր շարժ-  
մունքով , ցերեկուան և գիշերուան և եւ  
զանտկաց փոփոխութեամբ , բուսոց կեն-  
դոնեաց և մարդկային ցեղի պահպանու-  
թեամբ , աճմամբ եւ տարածմամբ , որք  
յայտնի կը վիայեն՝ թէ այսպիսի իմաս-  
տուն , գեղեցիկ և ներդաշնակ ընդհանուր  
կարգն արարածի գործ չ'է , այլ ամենա-  
կարող Արարչի , որ ՚ի սկզբանէ կարողա-  
ցաւ հաստատել այսպիսի իմաստուն կարգ .  
“Արարեր զլուսին վասն ժամանակի , ա-  
րեգակն ծանեաւ զժամ մուանելոյ իւրոյ”:  
Սադ . ձ Գ . 19 : Սուրբ Գիրքն աւելի պարզ  
ցոյց կը տայ մեղ Աստուծոյ Նախախնա-  
մութիւնն Եբրայեցւոց ազգի վերայ , թէ

բնշափէս Աստուած կը նախախնամէ տղ-  
գերը և իւր ընտրած մարդիկը, ջրհեղե-  
ղի ժամանակ, Սոդոմի և Գոմորի կործան-  
ման ժամանակ, Կարմիր ծովին անցնելու  
ժամանակ և այն, և այն :

**Վ**երեւ ասացինք, որ աշխարհս ըս-  
տեղծուած է Աստուծոյ բարութենէն,  
ստեղծուած է բարի եւ ստեղծուած է  
բարութեան մէջ մնալու համար : Բայց  
մարդս լինելով անձնիշխան՝ շատ անգամ  
անհնաղմնդ կը գտնուի Աստուծոյ կամքին  
եւ իւր աղատաւթիւնը գործ կը դնէ 'ի  
չարն : Այս պատճառաւ է, որ աշխարհի  
մէջ կը տեսնեմք զանազան չարութիւններ,  
թէպէտ և գիտեմք միանգամայն, որ Աստ-  
ուած կը նախախնամէ ամեն արարածները:  
Լինելու չ'էր աշխարհի մէջ չարութիւն :  
Եթէ մեք մնացած լինէինք մեր առաջին  
անմեղութեան մէջ : Աւրեմն՝ բոլոր չարիւ-  
քը յառաջ կը գան մեր անձնիշխանու-  
թիւնը բարութեամբ գործ չը դնելէն, այն  
անձնիշխանութիւնը, որ իբրեւ պատկեր  
և նմանութիւն Աստուծոյ տրուած է մեզ,  
որ նովաւ Աստուծոյ գործակից լինիմք  
աշխարհի մէջ : Չարացար գործ դնելով մեր  
անձնիշխանութիւնը՝ մեք կը տեսնեմք, որ

կը հետեւին մեղ համար չար հետեւանիք ներ և վեասներ : Այս վեասներն եւս մեք պէտք է համսրեմք իբրեւ գործիք , որով ամենաբարի Նախախնամութիւնը կամի մեղ հասկացնել մեր մալորութիւնը , հանել չար ճանապարհէ և դարձնել առ ինքըն , ուղղել , ինչպէս կ'ասէ մարդարէն . “Միթէ կամելով կամիցիմ զմոհ մեղաւորի , ասէ Տէր , օրպէս զգառնալ նորա ՚ի չոր ճանապարհէ և կեալոյ Եզնիկ . Ժ. 23:

Թէպէտ շատ անդամ կը տեսնեմք մեք չար մարդիկը բարեթաղդութեան մէջ . բայց նոցս բարեթաղդութիւնն արտաքուստ կ'երեւի մեղ . վասն զի՞ չը կայ ճըմարիտ երջանկութիւն և խաղաղութիւն առանց խղճի հաւանութեան և առանց Աստուծոյ հետ հաշտուելու Յիսուսի Քրիստոսի միջնորդութեամք : Շատ անդամ Աստուած կը համբերէ մարդկանց չարութեանը , որ տայ ժամսնակ զլջալու , եւ եթէ նորայետ չը դառնան խրեանց չար գործքերէն , չ'են կարող փախչիլ ապագայ պատմէն , և շատ անդամ Աստուած այս պատիմքը կը սկսի այս աշխարհէն , տալրվ մեծ նեղութիւն այն մարդկանց , որք ՚ի չարն գործ կը դնեն Աստուծոյ համբերու-

թիւնը : « Տէր , մի որտմոռւթեամբ քով յանդիմաներ զիս , եւ մի բարկութեամբ քով յանդիմաներ զիս : Զի նեաք քո հարան յիս և յիս հաստատեցաւ ձեռն քո » : Մադ . 1. է . 1—4 :

Աստուծոյ հասարակ Նախախնամութիւնը կայ ամեն արարածոց վերայ՝ առանց բացառութեան , թէ փոքրին եւ թէ մեծին , մինչեւ ընչին արարածոց վերայ անգամ : « Ո՞չ ապաքէն երկու ձինձ զուկը դանելի միոջ վաճառին և մի ՚ի նոցանէ յերկիր ո՞չ անկցի առանց հօր ձերոյ : Այլ ձեր ամենայն խոկ հեր գլխոյ թուեալ է » : Մատ . Ժ . 29—30 : Խոկ Աստուծոյ յատուկ Նախախնամութիւնն է իւր պաշտողաց վերայ : Բայց սակայն Աստուծոյ Նախախնամութեան Ճանապարհն մեղ համար անցայտ խորհուրդ է . նա կը գերազանցի մեր մոքէն և մեր ամեն խմացածըն այս է միայն , որ Աստուծած կը նախախնամէ և կը կառավարէ աշխարհքը , կը խառնուի մեր գործոց իւր կամքով առանց դժուարութեան , ինչպէս արժան է : Յիմար պէտք է լինի ուրեմն այն մարդը , որ կ'ուրանաց Աստուծոյ Նախախնամութիւնը , զը կարողանեալով իւր ասհմանաւ

Նոր եւ տկար մոքով իմանալ նորա նա  
խախնամութե՛ ճանապարհն : “Ասաց ան-  
դքամն ՚ի սրտի իւրում” թէ ոչ գոյ Ասո-  
ուած ” : Սաղ . ԺԳ . 1 : Վասն զի Աստու-  
ծոյ գոյութեան և կատարելութեանց հետ  
անշուշտ կապուած է և Աստուծոյ Նա-  
խախնամութիւնը : Ուրանալ Աստուծոյ  
Նախախնամութիւն՝ կը նշանակէ ուրանալ  
նորա գոյութիւնն ու կատարելութիւներն :

**Ա**ստուծոյ նախախնամութիւնը յար-  
մար է իւրաքանչիւր արարածոց բնու-  
թեանը : Անշունչ արարածները կը կառա-  
վարին նորա ամենակարողութեամբ եւ  
ընդհանուր օրէնքներով : Անասուններն  
ոչ թէ միայն այս օրէնքներով կը կառա-  
վարին , այլ և բնածին ազդեցութեամբ .  
որով իսկ նոքա կը զանազանին անշունչնե-  
րէն և կ'օրոշեն թէ ինչ է յորմար կամ  
ընդդեմ իրենց բնութեանը : Բայց հոգե-  
ւոր արարածները կը կառավարէ Աստ-  
ուած իւր ամենակարողութեամբ և իւր  
սուած օրէնքներով , որ ուղղէ նոցա ըզ-  
դացողութիւնը , մխաքը և կամքը , և իւր  
հոգւով կը խօսի մարդոյ հոգւոյ հետ :  
Աստուած ամեն բանի վերայ ունի ներ-  
գործութիւն . նա կը շարժէ մեր հոգին

դէսլ ՚ի բարութիւն . կը աայ մեզ օգնութիւն փորձութեան ժամանակ . կը տայ մեզ դիսուած , կարողութիւն և հնարք բարութիւն անելու . և այս բարութեան վարձն Աստուած երբեմն կը ակսի տալ այս աշխարհէն , այնպէս որ՝ կարող եմք ասել թէ՝ աւելի Աստուած է սպատճառ մեր բարութեան , բան թէ մեք :

Մեր չարութեան գէմ Աստուած կը վարուի ինչպէս արժանի է : — Մեր անձն իշխանն լինելու համար՝ թոյլ կը տայ մեր չարութիւնը . թոյլ կը տայ մեղաւորին իւր կամքին հետեւելու . յետ կ'առնու մեղաւորին իւր սուրբ հոգին , երբ նա կը տրխ բեցնէ , կը արտմեցնէ եւ կը հեռացնէ զայն . կը շփոթէ մեղաւորի խորհուրդներն և դատավալութիւններն և կը շնէ իբրեւ հնարք իւր ողորմութեան , ինչպէս կը տեսնեմք Յովսեփի եղբարյ չար գործոց մէջ : “ Դուք խորհեցարուք զինէն ՚ի չարութիւն և Աստուած խորհեցաւ վասն իմ ՚ի բարութիւն ” : Մննդ . ۳ . 20 : “ Զմէ խուսվեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան ՚ի սնուիս ” : Գործ . ۴ . 25 : Մեծ մեղք է ասել թէ Աստուած է սպատճառ մարդոց չար գործոց , վասն զի :

Աստուած տալով մեղ կարողութիւն եւ  
աղատութիւն՝ կը հեռացնէ զմեղ չար  
գործքերէ՝ խղճմտանքի ձոյնով, իւր պատ-  
ուիրանիքներով, իւր հոգւով, իւր խոստ-  
մունքներով, երբեմն եւս մեծ պատժով։  
“Մի ոք որ ՚ի փորձութեան իցէ, ասիցէ՝ թէ  
Աստուծոյ փորձիմ՝ զի Աստուած ան  
փորձ է չարաց . փորձէ նա և ոչ զոք։ Իւ-  
րաքանչիւր ոք փորձի առ յիւրայն ցան-  
կութեանց ձգեալ և պատրեալ”։ Յակ.  
Ա. 13—14։

Աստուծոյ Նախախնամութիւնն ամեն  
բարի գործոց աճումն կը տայ . “Ես ալն-  
կեցի, Ապօղոս ջուր ետ, այլ Աստուած  
աճեցոց”։ Ա. Կորն. Դ. 6. Աստուծոյ  
Նախախնամութիւնը չ հեռացներ զմեղ  
ընական լուսոց բարի օրէնքները մտածե-  
լին, զորս կարող եմք դործ դնել զմեղ  
պահպանելու համար եւ որք կը համար-  
ուին Աստուծոյ Նախախնամութեան մի-  
ջոցներ։ Բայց պէտք չ’է մօռանամք, որ  
Աստուծոյ նախախնամական ներգործու-  
թիւնը աւելի մեծ է քան մերը և մարդ-  
կային հնարքները գործ գնելու ժամանակ  
դարձեալ պէտք է խնդրեմք Աստուծոց  
հախնամութիւնը։

**Աստուծոյ Նախավինամութիւնը պէտք**  
**է ծնանի մեր մէջ . — Ա . Ենորհակալու .**  
**թիւն այն ամեն բարութեանց համար , զոր**  
**կը վայելեմք և որոց առաջին սրատճառն է**  
**Աստուծած :** « Գոհացաց զքէն , Տէր , բո  
**լորով սրախւ իմով պատմեցից զամենայն**  
**ոքանչելիս քո ու Սադ . Թ . 1 : » Յեմենայ-**  
**նի գոհացարուք , զի այս են կամք Աս-**  
**տուծոյ Քրիստոսիւ Յիսուսիւ 'ի ձեզ » :**  
**Թեսադ . Ե . 17 : — Բ . Համբերութիւնն եւ**  
**հնագանդութիւն այն նեղութեանց մէջ ,**  
**զոր Աստուծած կը տայ մեղ մեր բարու-**  
**թեան համար :** « Խուլ եղէ և ոչ բացի  
**զբերան իմ , զի դու արարեր » : Սադ . ԼԲ .**  
**10 : — Գ . Հաւաստարմութիւնն եւ կառա-**  
**րեալ հնագանդութիւնն մեր կենաց ամեն**  
**պատահմանց մէջ . վասն զի՝ Աստուծած է ,**  
**որ նոյն պատահմանց կը տայ ընթացք և**  
**կը դարձնէ ամենայն ինչ 'ի բարին , եթէ**  
**կը սկըեմք զԱստուծած :** « Բայց գիտեմք՝  
**եթէ որոց սիրենն զԱստուծած , յամենայնի**  
**գործակից լինի 'ի բարիս , որք հրաւիրա-**  
**նուն կոչեցան ու Հոռով . Ը . 28 : — Դ . Բա-**  
**րի սովորութիւնն որ ամեն մեղ պատահած**  
**իրողութեանց մէջ՝ միշտ տեսնեմք Աս-**  
**տուծոյ ներգործութիւնը , ինչպէս կ'առէ**

Յալսէփի խոր եղբարց : “Եւ արդ՝ ոչ եւ  
թէ դուք առաքեցիք զիս այսր , այլ Աստ-  
ուած ” : Ծննդ . ԽԵ . 8 : — Ե . Մէծ Եւ  
հաստատ ուշադրութիւն միշտ Աստուծոյ  
հանապարհի վերայ գնալու եւ գործելու  
ինչ որ հաճոյ է նորա կամաց , վասն զի  
մէք միշտ և հանապաղ Աստուծոյ աշաց  
առաջին եմք եւ ամեն գործոց մէջ Աս-  
տուծմէ կախումն ունիմք :

## ԵՐԿՐՈՐԴ ՄԸ.ՄՆ ՀԱՆԳՍՆԱԿԻ

“Հաւատամք եւ , ՚ի մի տէր Ցիսու  
Քրիստոս ” և այն .

Ասելով Տէր՝ Հանգանակի մէջ ոչ թէ  
միայն պէտք է հասկանամք Արարիչ և Նա-  
խախնամող , այլ առաւել պէտք է հաս-  
կանամք ինչպէս մեզ Փրկիչ : “Արդ՝ ճըշ-  
մարտիւ գիտասցէ ամենայն տունդ իս-  
րայելի , զի և Տէր զնոս եւ օծեալ Աստ-  
ուած արար , զայն Ցիսուս զոր դուք խո-  
չեցիք ” : Գործ . . . 36 : “Զամենայն ինչ  
հնազանդ արար ՚ի ներքոյ ստից նորա ՞ ”  
Եփես , Ա . 22 :

Բայց Յիսուս անունը տրուած է, ոչ  
թէ մարդկանց կամբով, այլ Աստուծոյ, որ  
նա պետք է փրկեր մարդկացին ազգը  
մեղքէ, ինչպէս հրեշտակն առաց Յովսե-  
վին. “Ծնցի որդի եւ կոչեսցես զանուն  
նորա Յիսուս. զի՞նա փրկեսցէ զժազտվուրդ  
իւր ’ի մեղաց իւրեանց” : Մատ. Ա. 21:  
ԱՇ թէ միայն ազատեց զմեղ Յիսուս իւր  
մահով դատապարտութենէ, որուն մեր  
մեղքն արժանացուցած էր, այլ կը լուսա-  
ւորէ զմեղ իւր վարդապետութեամբ, կը  
քաջալերէ զմեղ իւր օրինակով և մանա-  
ւանդ կը նորոգէ զմեղ իւր հոգւով . որ  
կը կին չընկնինք մեղաց մէջ, և ինչպէս որ  
ազատեց մեր մեղքն, նոյնպէս եւս ազա-  
տեց նորա ամեն հետեւանդիներէն :

**Մէր** երկնաւոր Հայրն առաքեց իւր  
միածին Որդին, որ նա լինի մեղ Համար  
խմասութիւն, արդարութիւն, փրկութիւն  
եւ սրբութիւն : “Որ եղեւ մեղ խմասու-  
թիւն յԱստուծոյ, արդարութիւն և սրբ-  
ութիւն և փրկութիւն” : Ա. Կորն . Ա.,  
30 : Նա է մեր խմասութիւնը, որ ցոյց  
տուաւ մեղ փրկութեան ճանապարհը :  
Նա է մեր արդարութիւնը, որ մեղ փրկեց  
մեր մեղքն և արժանացուց իւր արդա-

բութեանը : Նա է մեր սրբութիւնն, որ  
սրբեց մեր սիրտը և մեր կեանքը : Նա է  
մեր փրկութիւնն, որ ազատեց զմեղ մեր  
մեղքէն և այս փրկութիւննը, որ կը սկսուի  
այս աշխարհիս մէջ հաւատով եւ կենաց  
նորագութեամբ, պէտք է լրումն ստանայ  
միւս կենաց մէջ երջանկութեամբ, յորմէ  
մեղքն անդարձ հեռացուցած էր զմեղ :  
Նա է ճշմարիտ Փրկիչ, կատարեալ Փրկիչ,  
միայնակ Փրկիչ : « Եւ չեք այլով իւ  
վիք փրկութիւն զի եւ ոչ անուն այլ գոյ  
՚ի ներքոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ, ու  
րով արժան իցէ կեալ մեզ ։ Գործ . Դ . 12 :

**Ա**յսպէս ուրեմն՝ մեր հաւատն առ  
Փրկիչն կը լինի ճշմարիտ : Նախ՝ երբ մեք  
բաց ՚ի նմանէ՝ մի այլ փրկութեան աղքիւր  
չ'որոնեմք : « Խափանեալ էք ՚ի Քրիստոսէ,  
որք օրինօքն արդարանայք և անկեալ էք  
՚ի շնորհաց անտի » : Գաղ . Ե . 4 : Երկ-  
րարդ՝ երբ կը ճանաչեմք եւ կը փառաւու-  
րեմք նորա շնորհաց գինը՝ ասելով Յով-  
հաննէս Աւետարանչի հետ միասին : « Զի  
՚ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին  
առաք զնորհս փոխանակ շնորհաց ո :  
Երրրդ՝ երբ կ'զգամք կարօտութիւն նո-  
րա ոգարմութեան, անդադար կը գնամք

առ Քրիստոս եւ անդադար կը խօնդրեմք՝ ՚ի նմանէ և կը ստանամք։ Չորրորդ՝ երբ գործ կը դնեմք նորս ողորմութիւնները մեր սրբութեան և փրկութեան համար։ «Մեք զիա՞րդ ասլրեսցուք հեղգացեալ յայնալիսի փրկութենէ, որ սկիզբնառ խօսելց ՚ի տեառնէ»։ Երբ. Բ. 3։

Քրիստոս բառը կը նշանակէ Օծեակիամ Մեսիայ։ Երբայեցւոց մէջ այս անունը կը տային թագաւորաց, մարդութիւց և քահանայից, վասն զի՞ ինչ ժամանակի պարտաւորութիւն կը յանձնէին նոցաց կ'օճէին սուրբ իւղով։ Այս էր շնորհաց նիւթական նշան, զոր Աստուած կը տար, որ նոքա ունենան կարողութիւնները, որոց համար ընարուած էին։ Երբայեցվել տուին այս Քրիստոս կամ Մեսիայ անունը Մեծ Առաքելցն, զոր Աստուած խօստացած էր նոցա, որ պէտք էր լինէր փղրկիչ մարդկային ազգի և որուն մարդկային ազգը անհամբերութեամբ կը սպասէր, ինչպէս միսիթարութեանն Խորայելի։ «Եւ էր այս մի յԵրուասղէմ, որոց անունն էր Սլոմէօն և էր այլն այն արդար և երկիւ-

ղած յԱստուծոյ և ակն ունէր միսիթարութեանն իսրայելի և Հոգին Սուրբ էր ՚ի նմա ո : Ղուկ . Բ . 25 : Այսպէս էր անուանուած Դանիէլի մարդարէութեան թ . Դիմոյն մէջ : Աամարացի կինն ասաց Քրիստոսին . “ Գիտեմ՝ զի Մեսիայ գայ՝ անուանեալն Քրիստոս , յորժամ եկեսցէ , նապատմեսցէ մեղ զամենայն ո : Յով . Գ . 25 :

Յիսուս անուանուեցաւ Քրիստոս , որովհետեւ նա էր ճշմարիտ խռատացուած Մեսիայն և նորա վերայ կային այն ամեն նշաններն , որով մարդարէքն նշանուկած էին զՄեսիայն և յատուկ տրուած էր նմա այս անունը . Վասն զի՞ նա կատարեց երեք պաշտօն – Մարգարէի , Թագաւորի , Քահանայի , որ պէտք էր կատարէր Մեսիայն մեր փրկութեան համար :

Թէպէտ չը սաացաւ այս նիւթական օծումն , որոյ համար մեք կը խօսիմք , բայց սաացաւ ճշմարիտ հոգեւոր օծումն : “ Զ Յիսուս , որ ՚ի Նաղարէթէ , զար օծն Աստուած Հոգւով Արքով եւ զօրութեամք , որ շրջեցաւ բարի առնել եւ բժշկել զամենայն ըմբռնեալնն ՚ի սատանայէ , զի Աստուած էր ընդ նմա ո : Գործ . Ֆ . 38 : “ Հոգի Տեառն ՚ի վերայ իմ , վասն որոյ եւ

օծ իսկ զիս , յաւետարաննել աղքատաց  
առաքեաց զիս ու Ղուկ . Դ . 18 :

Իբրեւ Մարգարէ կատարեց Քրիստոս  
մարգարէի ամեն պաշտօն , այսինքն կ'ու-  
սուցանէր ժողովրդոց , կը ճանաչեցնէր Աս-  
տուծոյ կամքը և փրկութեան ճանապար-  
հը , կը յայտնէր նոցա՝ Աստուծոյ դատա-  
տանը և կը հաստատէր իւր առաքելու-  
թիւնը քարոզութեամբ եւ հրաշքով :  
“ ԶՅիսուսէ Նազովիեցոյ , որ եղեւ այր  
մարգարէ , հզօր արդեամբք եւ բանիւք  
առաջի Աստուծոյ եւ ամենայն ժողովը-  
դեան ու Ղուկ . ԻԴ . 19 : Ամեն բանով  
նա կը գերազանցէր բոլոր մարգարէնե-  
րէն : “ Յորում ամենայն դանձք իմաս-  
տութեան և գիտութեան ծածկեալ կանոն:  
Կռո . Բ . 3 : Նորա մերոյ մարգարէացաւ  
Մոլիսէս , “ Մարգարէ յեղբարց քոց իբ-  
րեւ զիս յարուսցէ քեզ Տէր Աստուծ քո ,  
նմա լուիջիք ու Բ . Օրի . ՖԸ . 15 : Եւ այս  
խոստմունքը չը յարմարիր և չը վերաբերիր  
ոչ մի մարգարէի , որք կային մինչեւ ՚ի  
Քրիստոս , բայց միայն Փրկչին : Խնդիքս  
Մոլիսէս ազատեց Եբրայեցինները Եգիպ-  
տոսի ծառայութենէն , այնպէս եւս Քրիս-  
տոս ազատեց մարդկային ազգը մեղաց

ծառայութենէ։ Ինչպէս Մովսէս միջնորդ  
էր Հին ուխտին, Յիսուս Քրիստոս եւս  
միջնորդ է նոր ուխտին։ Մովսէս օրէնք  
տուող էր միայն Եբրայեցւոց ազգին, բայց  
Քրիստոս բոլոր մարդկութեան։ Յիսուս  
այնքան մեծ է Մովսիսէն, ինչքան որդին  
մեծ է ծառայէն։ Յիսուսի տուած ազա-  
տութիւնն աւելի կատարեալ և մեծագին  
է քան Մովսիսինը, որ ոչ այլ ինչ էր, ե-  
թէ ոչ պատրաստութիւն աւետարանա-  
կան լուսոյ։ « Մովսէս հաւատարիմ է ա-  
մենայն տան նորա, իբրեւ զծառայ, առ  
՚ի վկայութիւն բանիցն ասացելոց . այլ  
Քրիստոս իբրեւ որդի ՚ի վերայ տան իւ-  
րոյ, որոյ տունն մեք իսկ եմք »։ Եբր. Գ.  
5—6։

**Քրիստոս է ճշմարիտ Քահանայ։ Հին**  
**քահանայապետը պատարագ կը բերէր**  
**սեղսնի վերայ մեղաց թողութեան հա-**  
**մար, բարեխօս կը լինէր ժողովրդի համար**  
**և կ'օրհնէր։ Այս էր քահանայապետի ի-**  
**րաւունքը, որ տարին մի անգամ, զղման**  
**օրը, կը մտնէր սուրբ խորանը, այն տեղ**  
**զոհ կը մատուցանէր և արիւնը մշտկաւ կը**  
**ցանէր քաւութեան սեղանի վերայ և ժո-  
ղովրդի համար կը բարեխօսէր Աստուծոյ,**

որ ընդունի նոցա զոհը եւ թողութիւն  
տայ նոցա մեղաց : Պատարագէն յետոյ  
կ'ելներ խորանէն և Աստուծոյ անուտամք  
կ'օրհներ ժողովուրդը : Ա. յապէս և Յիսուս  
Քրիստոս իւր անձն զոհեց մեր մեղաց  
Թողութեան համար : “Եւ գնացէք սի-  
րով, սրապէս և Քրիստոս սիրեաց զմեղ և  
մատնեաց զանձն իւր վասն մեր սրատա-  
րագ և զենումն Աստուծոյ ՚ի հոտ անու-  
շից” : Եվեւ . Ե . 2 : “Նա է մեղ համար  
երկնքի մէջ բարեխօս իւր հօր մօտ : “Եւ  
եթէ մեղիցէ ոք՝ ունիմք բարեխօս առ  
Աստուծած զՅիսուս Քրիստոս զարգարն և  
զանարասն” : Յով . Յ . 1 : “Զի ոչ եթէ  
՚ի ձեռագործ սրբութիւնն եմուտ Քրիս-  
տոս յօրինակս Ճշմարտութեանն , այլ ՚ի  
բուն խել յերկինս , յանդիման լինիլ երե-  
սացն Աստուծոյ վասն մեր” : Եբր . Թ . 24 :

Քրիստոսի զոհը մեծ է հին քահանա-  
յից զոհէն : Նոքա մահկանացու էին , մե-  
ղաւոր և ինքեանք եւս կարօտութիւն ու-  
նէին զոհի՝ իրենց մեղաց համար և նոցա  
զոհն անկատար էր և պէտք էր ամեն ժա-  
մանակ նորոգուէր . “Օրէնքն զմարդիկ  
կացուցանեն քահանայապետ զգածեալս  
տկարութեամք , խել բանն երդման յետ

զգինացն՝ զպողի որ յաւխտեան կատարեալ  
է ։ Եբր. Է. 28. Եւ Պօղս Առաքեալն  
մանրամասն կը խօսի Քրիստոսի քահանաւ  
յութեան վերայ ։ “Զի դեռ եւս յերանո  
հօր իւրոց էր, յարժամ ընդ առաջ եղեւ  
նմա Մելքիսեդեկ ։ Եբր. Է. 10. Կը  
տեսնեմք աւրեմն՝ թէ ինչքան մեծ և գե-  
րազանց է Քրիստոսի քահանայութիւնն  
Աւտացւոց քահանայութենէն ։

Յիսուս Քրիստոս մեր Թագաւորն է,  
ինչպէս կը յիշուի Աստուածաշնչի մէջ.  
“Մեծ է իշխանութիւննորա և խաղաղու-  
թեան նորա չիք սահման ։ Յաթուն Դաւ-  
թի նատցի և զարքայութիւն նորա յաղ-  
թեացէ ։ Եսայ, Թ. 7. “Նա եղիցի մեծ  
եւ Որդի բարձրելոյ կոչեսցի ։ Եւ ասցէ  
նմա Տէր Աստուած զաթուն Դաւթի  
հօր նորա և թագաւորեսցէ ՚ի վերայ տա-  
նըն Յակոբայ յաւխտեանս ։ Ղուկ. Ա. 32.

Փրկիչն ինքն խոստովանեցաւ Պիղատոսի  
առաջ, որ ինքն է Թագաւոր. բայց Եբրա-  
յեցւոց թիւր գատողաւթիւնը ուղղելու  
համար, որք կը կարծէին թէ նա պէտք է  
թագաւորէ այս աշխարհի մէջ, Քրիստոս  
աւելացցց այս խօքերը ։ “Իմ արքայու-  
թիւն չ' յայսմ աշխարհէ ։ Յոկ. Ժ. 36.

Յիսուսի թագաւորութիւնը Հոգեւոր  
է և Երկնաւոր, որ միայն կարող է մեզ  
օգնել մեր ամեն կարօտութեան ժամա-  
նակ։ Աորա իսկ թագաւորութիւնն է իւր  
Եկեղեցւոյ և հաւատակաց վերայ, որք կը  
հաւատան և կը կատարեն նորա խօսքերը։  
Կը թագաւորէ նա նոցա վերայ և նոցա  
որդւոց վերայ իւր Խօսքով եւ Հոգով։  
կ'օգնէ նոցա և կը պահէ մինչեւ իւր փա-  
ռաւոր գալստեան օրը։ Ուրեմն՝ պարտա-  
ւոր եմք խոստովանիլ զՔրիստոս ճշմարիտ  
Մարգարէ, ճշմարիտ Քահանայապետ եւ  
մշմարիտ Թագաւոր, որովհետեւ նա կա-  
տարեց այս երեք պաշտօնը, ինչպէս կը  
վկայէ Ս. Գիրքը։ Մեք պէտք է ընդու-  
նիմք զնա կենդանի հաւատալ օգտաւէտ  
զոհ մեզ համար և նորս արդիւնքէն ըս-  
տասեմք փրկութիւն։ Պէտք է տամբ նմա  
պատիւ ինչպէս թագաւորի հնազանդե-  
լով և ընծայելով նմա մեր սիրտը, որ նա  
մեր վերայ թագաւորէ յաւիտեան։

Ասելով Միածին Որդի, ինչպէս եւ  
Հանդանակի մէջ, այս Միածին խօսքով  
կը զանազանեմք նորա որդիութիւնը մեր  
որդեգրութենէն։ Նա որդի է իւր բնու-  
թեամբ։ Նա է միայն այս կերպով Որդի

Աստուծոյ եւ սորա մէջն է նորա Միաձնութիւնն : Իսկ մեր որդիութիւնն Աստուծոյ՝ նովառ է , այսինքն նորա ողորմութեամբ և շնորհքով . “ իսկ որք ընկալան զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ , որոց հաւատացեն յանուն նորա ” : Յով . Ա . 12 :

Ասելով թէ՝ նա է իւր բնութեամբ որդի Աստուծոյ՝ մէք կը խոստավանիմք , որ նա այն բնութեամբ է , զոր ունի Աստուծոյ նորա Հայրն . ուստի նա է ուրեմն ճշմարիտ Աստուծոյ , հաւատար Հօր և Հոգւոյն Սրբոյ : Որովեաեւ տառուածային բնութիւնը մի է , այս պատճառաւ կ'անուանի նա Որդի Աստուծոյ , որ ծընուած է ՚ի յաւիաենից ՚ի Հօրէ . և Սուրբ Գրոց մէջ կ'անուանի Առքիւր կենաց եւ կը յայտնուի նորա աստուծային բնութիւնն : “ Զի որպէս Հայր ունի կեանա յանձին իւրում , նոյնպէս և եղ Որդւոյ ունել զկեանս յանձին իւրում ” : Յով . Ե . 26 :

Ինչպէս լոյսը կը ծագի լուսէն , այն ովէս որ լուսոյ ճառագայթը հեռանալով իւր աղբիւրէն չը զանազանուիր և չը բաժանուիր լուսէն , այնպէս եւս Աստուծոյ

Արդին ծնաւ ՚ի Հօրէ եւ եկաւ յաշխարհ  
 և էր անբաժան ՚ի նմանէ , այսինքն նորա  
 աստուածային բնութենէն : Թէպէտ եւ  
 նորա ծնունդն՝ չէ կարող ունենալ իսկա-  
 պէս նմանութիւն աշխարհի ոչ մի բանին,  
 ոչ արեգակի լուսին , ոչ կրակին և այլն :  
 Այս մեծ ճշմարտութիւնը , որ կը գերա-  
 զանցուի մեր մոքէն՝ յայտնի կ'ուսուցա-  
 նէ մեղ Առւրբ Գիրքը : Նախ՝ որ Յիսուս  
 Քրիստոս է Աստուած : “ Ի սկզբանէ էր  
 բանն և բանն էր առ Աստուած և Աս-  
 տուած էր Բանն . Նա էր ՚ի սկզբանէ առ  
 Աստուած ” : Յով . Ա . 1—2 : “ Որոց հար-  
 քըն , յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն , որ  
 է ՚ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ  
 յաւիտեանս ամէն ” : Հո.ՅՈՎ . Թ . 5 : “ Եւ  
 ակն կացուք երանելի յուսոյն և յայտնու-  
 թեան փառաց մեծին Աստուածոյ և Փրրե-  
 ժին մերոյ Յիսուսի Քրիստոսի ” : Բ . Տիմ .  
 Բ . 13 : “ Զի ծանիցաք զՃշմարիսն և եմք  
 ՚ի Ճշմարտին որդւոյ նորա Յիսուսի Քրիս-  
 տոսի : Զի նա է նշմարիս Աստուած՝ եւ  
 կեանք յաւիտենական ” : Ա . Յով . Ե . 20 :  
 Երկրորդ՝ աստուածային կատարելու-  
 թիւնները տրուած են Յիսուս Քրիստոսին,  
 ինչպէս են՝ յաւիտենականութիւն , անիր

վախութիւն և այլն :

Յաւխունականութիւն . — “ Ես եմ ազք  
և ես եմ քէ, ասէ տէր Աստուած, որ Ն  
և որ Ն եւ որ գալոցն է՝ ամենակաղ ” :  
Յայտ. Ա. 8 : “ Ասէ ցնոսա Յիսուս . ամեն  
ամեն ասեմ ձեղ յառաջ քան զլինելն  
Աբրահամու եմ ես ” : Յով. Ը. 58 :

Անփոփոխութիւն . — “ Ի սկզբանէ, Տէր,  
զիմունս երկրի հաստատեցեր և գործը  
ձեռաց քոց երկինք են : Նոքա անցանեն  
և դու կաս և մնաս յաւխաւան ” : Սառ.  
ՃԱ. 23—24 : “ Յիսուս Քրիստոս երեկ և  
այսօր նոյն և յաւխաւան ” : Եբր. ԺԳ. 8 :

Ամենակարողութիւն . — “ Ամեն ամեն  
ասեմ ձեղ, ոչ կարէ Որդի մարդոյ առնել  
յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ աւտանիցէ ըզ  
հայրն զի առնէ, զի զոր հայր առնէ զնոյն  
և որդի նման նմին գործէ ” : Յով. Ե. 12:

Ամենագիտութիւն . — “ Եւ զի ոչ եր  
պիտոյ եթէ ոք վիսցեսցէ վասն մարդոյն,  
զի ինքնին խոկ գիտէր զինչ կրէր ՚ի մարդն ” :  
Յով. Բ. 25 : “ Եւ ասէ Պետրոս, դու գի  
տես, զի սիրեմ զքեզ ” : Յով. ԻԱ. 16 :  
“ Եւ ծանիցեն ամենայն եկեղեցիք, թէ ես  
եմ որ յանդիմանեմ զերիկամունս և ըզ  
սիրոս եւ տամ ձեղ խրաբանիւր ըստ

գործոց իւրեանց ” : Յայտ . Բ . 23 :

Ամենուրեքութիւն . — “ Զի ուր իցեն  
Երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ՝  
անդ եմ ես ’ի մէջ նոցա ” : Մատ . ԺԷ . 20 :  
“ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն  
աւուրս մինչեւ ’ի կատարած աշխարհի ” :  
Մատ . ԻԷ . 2 :

Արարչագործոթիւն . — “ Ամենայն ինչ  
նովաւ եղեւ և առանց նորա եղեւ և ոչ  
որ ինչ եղեւն ” : Յով . Ա . 3 : “ Զի նովաւ  
Հաստատեցաւ ամենայն , որ ինչ յերկինս  
և որ ինչ յերկրի , որ երեւին և որ ոչ  
երեւին : Եթէ աթոռք , եթէ աէրութիւնք ,  
եթէ պետութիւնք , եթէ իշխանութիւնք ,  
ամենայն ինչ նովաւ՝ և ’ի նոցն Հաստատե-  
ցաւ ” : Կոդ . Ա . 16 :

Նախախնամութիւն . — “ Եւ նա է յա-  
ռաջքան զամենայն և ամենայն ինչ նո-  
վաւ եկաց բովանդակ ” : Կոդ . Ա . 17 :  
“ Հայրն իմ մինչեւ ցայժմ գործէ եւ ես  
գործեմ ” : Յով . Ե . 17 : “ Որ է ըստ կա-  
ռաց եւ նկարագիր էութեան նորա , որ  
կը զամենայն բանիւ զօրութեան իւրոց և  
Երր . Ա . 3 :

Թողոթիւն մեղաց . — “ Իշխանութիւն  
անի՛ Աղջի մարդոց ’ի վերոց երկրի թու-

զուլ զմեղս ու Մարկ . Բ . 10 :

Յարութիւն Աեռեց . — « Զի որպէս  
Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի  
առնէ , նոյնալէս և Որդի գորս կամի կեն-  
դանի առնէ » : Յով . Ե . 21 : « Որ նորու-  
գեսցէ զմարմին խոնարհութեան մերաց  
կերպարանակից լինիլ մարմնոյ գատաց նո-  
րա ըստ զօրութեանն առ ՚ի կարուլ լինե-  
ց հնաղանդեցուցանել ընդ իւրեւ դամե-  
նայն » : Փիլ . Գ . 21 :

Երրորդ՝ Սուրբ Գերքը կը պատուիլէ  
մեղ աստուածային անուն տալ մի միայն  
Հօր , Որդւոյն և Հոգւոյն Արքոյ : Կը պա-  
տուիրէ Աստուածմէ միայն երկնչիլ , զնա-  
միայն ոիրել , նմա միայն նուիրել մեր  
կեանքը և նորա պատուիրանքները ջա-  
նալ սրբութեամբ կատարել և այս պաշ-  
տօնը մեղ համար ամենամեծ պատիւ հա-  
մարել աշխարհքիս մէջ :

Եւ չորրորդ՝ Քրիստոս չ'արգիլեց այն  
մարդեմին , որք Որդի Աստուածոյ կ'անուա-  
նէին զնա , ինչպէս անուանեցին Պետրոս  
և Նաթանայէլ , կամ որք Աստուած կ'առ-  
նուանէին զնա , ինչպէս Յաովմաս . « Պա-  
տասխանի եւտ նմա Ավմավին Պետրոս և ա-  
մէ . « Պու ես Քրիստոս Որդի Աստուածոյ

կենդանոյ „ : Մատ . ԺԶ . 16 : “ Պատառ  
խանի ետնմա Նաթանայէլ և ասէ . Ռար-  
բի , դու ես Որդի Աստուծոյ „ : Յով . Ա .  
49 : “ Պատասխանի ետ Թովմաս՝ եւ ասէ  
ցնա Տէր իմ և Աստուծ իմ „ : Յով .  
Ե . 28 :

**Միածին Որդին** , որ է Ճշմարիտ Առ-  
տուած և յաւիտենական Բան , մարդա-  
ցաւ , այսինքն առաւ Ճշմարիտ ընութիւն  
մարդկային , բաղկացեալ ՚ի հոգւոյ և ՚ի  
մարմոյ , ձնանելով սուրբ Կուսէն Հոգւոյն  
Սրբոյ զօրութեամբ : “ Հոգին Սուրբ ե-  
կեսցէ ՚ի քեզ եւ զօրութիւն Բարձրելոյն  
հովանի լիցի ՚ի վերայ քո ” : Ղովկ . Ա . 35 :  
Այս պատճառաւ նա կ'անուանի Մարտ .  
Որդի մարդու , որով կատարուեցաւ Եսայ-  
ես մարդարէութիւնն . “ Ահա կոյս յր-  
զասցի և ծնցի որդի և կրչեսցեն զանուն  
նորա Էմմանուէլ , որ թարգմանի ընդ մեզ  
Աստուած ” : Եսայ . Է . 14 : Կատարուե-  
ցան այն մարդարէութիւններն , որ Մե-  
սիայն ալիսի ծնուի Յուդայի ցեղէն Գաւ-  
թի ազգէն : “ Մի պակասեսցի իշխան ՚ի  
Յուդայ և մի սկետ յերանաց նորա , մինչեւ  
եկեսցէ նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն  
և նա է ակնկալութիւն հեթանոսաց ” :

Ծննդ. Խթ. 10: Ըստ որում Սուրբ կյան  
Մարիամ էր Յուգայի ցեղէն և Դաւթի  
աղքէն: Այս մարդարէութիւնները Հան-  
դանակի մէջ կը յիշուի: այս խօսքերով,  
“Ծնաւ, ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հռ-  
գալն Արքով”:: Այս ծնունդը ողէաք է  
լինէր հրաշալի, հեռացած ամեն մարդ-  
կային մեղքերէ, վասն զի՞ նա պէաք է լի-  
նէր սուրբ և անմեղ քահանայ: “Զի այս  
պիսի իսկ վայել էր մեղքահանայապետ,  
սուրբ, անմեղ, անարտո, զատեալ ՚ի մե-  
զուորաց և բարձրացեալ քան զերկինս”::  
Եթ. Է. 26:

Քրիստոսի Մարդեղութեան խորհուր-  
դը մեղ համար անխմանալի է և անճառե-  
լի, ինչպէս մեր հոգւոյ և մարմնոյ միու-  
թիւնը: Աստուածային բնութիւնը, որ  
անսահման է և ամենուրեք՝ կարող էր մի-  
անալ մարդկային բնութեան հետ, Ճըշ-  
մարտապէս և ոչ կարծեօք: Այս Ճշմար-  
տութիւնն է, որ Ս. Գիրքը մեղ կ'ուսա-  
ցանէ: “Եւ բանն մարմին եղեւ, և բը-  
նակեցաւ ՚ի մեղ”:: Յով. Ա. 14:

Այս սիրոյ խորհուրդը մեծ խորհուրդ  
է աշխարհի, “Եւ յայտնի իսկ մեծ է խոր-  
հուրդն աստուածպաշտութեան, որ երե-

ւեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով,  
յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ՚ի  
հեթանոս, հաւատարիմ եղեւ աշխարհի  
և վերացաւ փառօք ։ Ա. Տիմ. Գ. 16:  
“Վասն որդւոյ խրոյ Եղելք ՚ի զաւակէ  
Քաւթի ըստ մարմնոյ ։ Հոռվ. Ա. 3:  
“Որոց հարքն, յորոց եւ Քրիստոս ըստ  
մարմնոյն, որ է ՚ի վերայ ամենեցուն Առ  
տուած օրհնեալ յաւիտեանս ամէն ։  
Հոռվ. Թ. 5:

Քրիստոսի մէջ պէտք է խոստովանիլ  
երկու բնութիւն—աստուածային և մարդ-  
կային անշփոթ եւ անբաժանելի միաւո-  
րութեամք։ Առանց այս խոստովանու-  
թեան կարող չ'եմք մեկնել և իմանալ Ա-  
ւետարանի զանազան խօսքերն։ Օրինակի  
համար՝ Քրիստոս կ'ասէ. “Հայր իմ մեծ  
է քան զիս”։ Յով. ԺԴ. 28: Պէտք է հաս-  
կանամք, որ այս խօսքն կ'ասէ իւր մարդ-  
կային բնութեան համար։ Իսկ երբ կ'ա-  
սէ. “Ես ՚ի Հայր և Հայր յիս է”։ Յով.  
ԺԴ. 10: Այս պէտք է հասկանամք նորա-  
սստուածային բնութեան համար, և շատ  
այսպիսի խօսքեր։ Ինչպէս և կ'ասէ Ներ-  
սէս Շնորհալին Ընդհանրականի մէջ. “Թէ-  
պէտ յղացաւ որպէս զմարդ, այլ ՚ի Հոգ-

ւոյն Սրբոյ որպէս զԱստուած . Քաղց  
ցեաւ որպէս զմարդ եւ զմեռեալս յա-  
րուցանէր՝ աստուածային գօրութեամբ ,  
որպէս զԱստուած ո :

Հաւատոյ Հանգանակը Քրիստոի ծը-  
նընդենէն յետոյ կը յիշէ նորա Զարչարան-  
քք , Խաչելութիւնը , Թաղումն եւ այլն :  
Այսու կ'ուստցանէ մեղ , որ Աստուծոյ  
Որդւոյ մարդեղութիւնն ունէր նպատակ  
աղսաելու զմեղ մեր մեղքէն իւր չարչա-  
րանքով և մահով : Թէպէտ Քրիստոսի բո-  
լոր կեանքն չարչարանք էր , թէ թշնամեաց  
կողմէն և թէ ուրիշ մարդիկներէն : Բայց  
նա չարչարուեցաւ առաւել իւր վերջին  
կենաց մէջ և այս վերջին չարչարանքն է ,  
որ կը յիշուի Հանգանակի մէջ այս խօսքե-  
րով . “ Զարչարեալ ” . պատճառն որ՝ այս  
վերջին չարչարանքով Քրիստոս ցոյց ար-  
ւաւ զինքն որպէս Զոհ պատրաստուած  
մահուան համար , և ցոյց տուաւ իւր վե-  
րայ բոլոր մարդարէութեանց կատարումն ,  
զոր մէք կը կարդամք մարդարէից գրոց մէջ  
Մեսիայի վերայ և մանաւանդ Եսոյեայ  
մարդարէութեան մէջ :

Քրիստոսի Զարչարանքք եւ Սահը  
թէպէտ կատարուեցաւ թշնամութեամբ

Եբրայեցւոց գլուխաւոր քահանայից և Պի.  
 ղատոսի թուլութեամբ , բայց Ս . Գիրքը  
 մեղ կ'ուսուցանէ , որ այս զոհը զմեղ մեր  
 մեղաց դատապարտութենէն փրկելու հա-  
 մար էր : Կարճ ասեմք՝ Քրիստոս զոհ ե-  
 ղաւ , որ զմեղ արդարացնէ և յաւիտենա-  
 կան կեանք տոյ : Յավհաննէս Մկրտիչն  
 կը նմանեցնէ զՅիսուս Գառին : զոր կը մոր-  
 թէին Եբրայեցիք պասէքի ժամանակ , ասե-  
 լով . “Ահաւասիկ Գառն Աստուծոյ , որ  
 քառնայ զմեղս աշխարհի ” : Յով . Ա . 29 :  
 “Եւնաէ քաւութիւն մեղաց մերոյ . և ոչ  
 թէ մերոցն միայն , այլ ամենայն աշխար-  
 հի ” : Ա . Յով . Բ . 2 : “Զի այն՝ որ ոչն գի-  
 տէր զմեղս , վասն մեր մեղս արար , զի մեք  
 եղիցուք նովաւ արդարութիւն Աստու-  
 ծոյ ” : Բ . Կորն . Ե . 21 : Հաղորդութեան  
 խորհուրդն հաստատելով՝ Քրիստոս ինքն  
 եւս կ'ասէ . “Առէք կերայք՝ այս է մար-  
 մին իմ . . . Արբէք ’ի դմանէ ամենեքին :  
 Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի , որ ’ի  
 վերաց բազմաց հեղու ’ի թողութիւն ” :  
 Մատ . Իջ . 26-28 : Մարդարէքն եւս կը  
 միշեն այս Զոհն , որ է Քրիստոս : “Իբրև  
 զաշխար ’ի սպանդ վարեցաւ , իբրեւ որոջ  
 աւածի կորչի անմոռունչ կոյ , այնալէս ոչ

բանայ պլերան իւր ու Եսայ . ծԳ . 7 :  
 Քրիստոս ինքն կը յայտնէ իւր կամաւոր  
 զոհ լինելն . “ Ոչ ոք հանէ զնա յինէն ( զանձն  
 իմ ) այլ ես դնեմ վնա անձամբ իմով . իշ  
 խանութիւն ունիմ դնել վնա . եւ իշխա-  
 նութիւն ունիմ միւսանգամ առնուլ ըզ-  
 նա . զայս պատուեր առի ՚ի Հօրէ իմմէ ու  
 Յով . Ժ . 18 :

Հանգանակը յիշելով Քրիստոսի խա-  
 չելութիւնը մեր միան կը բերէ՝ թէ ինչ  
 պիսի ցած և անպատիւ տանջանաց պատ-  
 ժով մեռաւ Քրիստոս : Խաչով պատճը  
 կին Եբրայեցւոց մէջ համարուած էր ա-  
 նիծեալ : Քրիստոս՝ ինչպէս փարատաղ ա-  
 մենայն մեղաց և անիծից , որ մարդոյ վե-  
 րայ էր , յանձն առաւ այս անիծեալ տան-  
 ջանաց պատիմն և այսպիսի մահով է ա-  
 հա , որ նա կը մօտեցնէ զմեզ Աստուծոյ :  
 “ Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինա-  
 ցըն , եղեալ վասն մեր անէծք , զի գրեալ  
 է , թէ անիծեալ է ամենայն ( մարդ ) որ  
 կախեալ կայցէ զփայտէ ” : Գաղա . Գ . 13 :  
 “ Որ յիւր Որդին ոչ խնայեաց , այլ վասն  
 մեր ամենեցուն մատնեաց վնա , վիարդ  
 ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհեացէ  
 մեզ ” : Հովհ . Ը . 32 :

Քրիստոսի խաջով մեք կարող եմք ըստանալ ամեն օդնութիւն , որ մեզ հարկաւոր է կեալ և չարչարուիլ ինչպէս Քրիստոնեայ : Քրիստոսի խաջն կարող է մեզ տալ ողբարձութիւն , զօրութիւն և մխիթարութիւն : Քրիստոսի խաջն է միայն Քրիստոնէից փառքն ու պարծանքը , ինչպէս կ'ասէ Պօղոս . “Այլ ինձ քաւ լիցի պարծիլ , բայց միայն ՚ի խաչ Տեռառն մերց Յիսուսի Քրիստոսի , որով ինձ աշխարհ ՚ի խաչ ելեալ է և ես աշխարհի ” : Գաղ . 2 . 14 :

**Մահէն յետոյ Հանգանակի մէջ կը յիշուի Քրիստոսի Թաղուան , վասն զի՞ թաղումն իւր բոլոր հանգամանքներով կը հաստատէ նորա ճշմարիտ մահն , և նորա թաղմամբ կատարուեցաւ այս մարգարէս ութիւնն , որ նա պիտի ունենայ սպատուական գերեզման : “Եւ տաց դչարս փոխանակ գերեզմանի նորա և զմեծամեծս փոխանակ մահու նորա ” : Եսայ . ԾԳ . 9 :**

**Թաղումէն յետոյ կը յիշուի Քրիստոսի Յարութիւնն յերրորդ աւուր , որով կատարուեցաւ նորա առաջուց ասած խօսքն իւր Յարութեան վերսց : “Եւ յերիր աւուր յառնել ” : Մատ . ՃԶ . 21 : Պատճառն**

այս է , որ երեքօրեայ թաղումն բաւա-  
կան էր Ճշմարտելու նորա մահն : Բայց  
նորա մարմինն պիտի ըլ տեսներ ապակա-  
նութիւն : “ Զի ոչ թողցես զանձն իմ ՚ի  
դժոխս և ոչ տացես որբոյ քաւմ տեսանել  
զապակականութիւն ո : Սահ . ԺԵ . 10 :

Յարութենէն յետոյ կը միշուի Քրիս-  
տոսի Համբարձումն , որոյ համար ասած  
էր աշակերտաց : “ Խակ արդ՝ եթէ տեսա-  
նիցէք զԱրդի մարդոյ՝ զի ելանիցէ՝ ուր էր  
զառաջինն ո : Յով . Զ . 63 : Ճշմարիտ որ՝  
նա պէտք է համբառնար , պէտք է բռնէր  
իւր տեղն , զոր թողուց մեր փրկութեան  
համար , պէտք է նատէր այն տեղ , որպէս  
Որդի մարդոյ , իբրեւ հատուցումն իւր  
կատարեալ հնագանդութեան և անսահ-  
ման սիրոյ առ Հայրն իւր , որ մեղ ցոյց  
տուաւ իւր չարչարանքով և մահով : “ Որ  
՚ի կերպարանս Աստուծոյ է , ոչ ինչ յա-  
փշտակութիւն համարեցաւ զլինելն հա-  
ւասար Աստուծոյ , այլ զանձն ունայնա-  
ցոյց , զկերպարանս ծառայի առեալ , ՚ի  
նմանութիւն մարդկան եղեալ և կերպա-  
րանօք գտեալ իբրեւ զմարդ ո : Փիլ . Բ . 6 :  
Քրիստոսի այս փառքը Հանգանակի մէջ կը  
միշուի այսպէս . “ Նառաւ , ընդ աչմէ Հօր ո :

**Աստուած Հոգի լինելով՝** այս խօսքերը  
պէտք է իմանամք այնպէս, ինչպէս յար-  
մար է նորա հոգեւոր բնութեանը։ Հան-  
գանակի մէջ Ան ասելով՝ ինչպէս կ'ասէ և  
Դաւիթ մարդարէն։ “Առաց Տէր ցծէր  
իմ, նիստ ընդաշմէ իմմէ . մինչեւ եղից ըզ-  
թշնամիս քո պատուանդան ոտից քոց” .  
Սադ. Ճթ. 1. կը նշանակէ Յաղթութիւն  
առտուածային փառաց :

**Այս սովորութիւնն ունէին Հարա-**  
ւային թագաւորներն, որ իրենց աջ կողմը  
կը նստեցնէին, և շատ անգամ իրենց ա-  
թուի վերայ, այն մարդիկին զորս կը պա-  
տուէին և մեծ կը համարէին։ Սողոմոնն  
եւս իւր մայրը իւր աջ կողմն նստեցուց։  
Յոշիաննու եւ Յակոբի մայրն իննդրեց  
Քրիստոսէն աջ կողմն նստեցնէլ իւր որդ-  
ւոց մինն։ “Յայնժամ մատեաւ առ նա  
մայր որդւոցն Զեբեդեայ որդւովք իւրովք  
հանդերձ, երկիրսպագանէր՝ եւ խնդրէր  
ինչ ՚ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա . զի՞նչ կա-  
միս։ Ասէ ցնա, առա զի նստցին աքա եր-  
կու որդիքս իմ, մի ընդ աշմէ քումմէ՝ և  
մի ընդ ահեկէ յարքայութեան քում” .  
Սառ. ի. 20—21 :

**Հանգանակի մէջ միշած խօսքերու**

միտքն այս է , որ Քրիստոս բարձրացաւ  
երկնային հոգիներէն աւելի բարձր , կը  
կառավարէ զմեղ , կը թագաւորէ մեր վե-  
րայ , կ'օգնէ իւր Եկեղեցւոյն , ինչպէս Պօ-  
զոս Առաքեալն կ'առէ . « Զոր յաջողեաց  
՚ի Քրիստոս , զի յարոց վնա ՚ի մեռելոց՝  
և նասաց ընդ աշմէ իւրմէ յերկնաւորս ՚ի  
վերայ ամենայն իշխանութեան , և պե-  
տութեան և զօրութեան , և տէրութեան  
և ամենայն անուան անուանելոց , ոչ միայն  
յաշխարհիս յայսմիկ , այլ և ՚ի հանդեր-  
ձելումն : » : Եվնես . Ա . 20-21 :

Փրկիչն մեր երկնեքն համբաւնալով՝  
լսուացաւ բարեխօս լինիլ մեղ համար  
առ Հայր , որով և շարունակեց իւր քա-  
հանայութեան պարտաւորութիւնը : Ինչ-  
պէս Հին Ռւխոփի քահանացապեալ կը մըտ-  
նէր Սրբութեան Խորանը զոհի արիւնով  
և կը բարեխօսէր առ Աստուած ժողովովի  
համար , այնպէս եւս Քրիստոս , Նոր Ռւխ-  
ոփի գլխաւոր քահանացապեալ , մատ բա-  
րեխօսելու՝ ոչ թէ ձեռքով շնորհ տաճա-  
րըն , այլ անձեռագործն . « Զի ոչ եթէ ՚ի  
ձեւագործ Սրբութիւնն եմուտ Քրիս-  
տոս՝ յօրինակս ճշմարտութեանն , այլ ՚ի  
բուն իսկ յերկնաս , յանդիման լինիլ երե-

սացն Աստուծոյ վասն մեր ։ Եթ. Թ. 24. և կը բարեխօսէ մեզ համար ։ “Եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուծուած զՅիսուս Քրիստոս՝ գարդարն և զանարատն ։” Ա. Յով. Բ. 1: Երկինքն համը բառնալով՝ բացաւ մեզ համար Քրիստոս երկնային դուռն, պատրաստեց մեզ համար տեղի երկնային ժառանգութեան, չնորհեց մեզ աստուածային ողորմութիւնը, լինելով մեր գլուխն՝ զմեզ իրեն անդամ շինեց : “Ընդ նմին յարոյց եւ ընդ նմին նստոյց յերկնաւորս ՚ի Քրիստոս Յիսուս ։” Եփես. Բ. 6: Երկինքը համբառնալով՝ խստացաւ իւր աշակերտաց՝ ուղարկել Հոգին Սուրբ և նու օք՝ բոլոր աշխարհին : “Լաւ է ձեզ, եթէ ես երթամ, զի եթէ ես ոչ երթայց՝ միսիթարիչն ոչ եկեցէ առ ձեզ. ատա եթէ երթամ՝ առաքեցից զնա առ ձեզ ։” Յով. Բ. 7:

**Ինչպէս Որդին Աստուծոյ մարդկային սիրոյ համար առաւ մարդկային բնութիւնն, նոյնպէս եւս կամի, որ մեք եւս մասնակից լինիմք նորա Աստուածութեանը : Սորա համար կը տայ մեզ իւր Հոգին, որ պատրաստէ զմեզ և մեք ունենամք հաղորդութիւնորա Աստուածութե հետ :**

Հանգանակն մեր միտն կը բերէ , որ  
Յիսուս Քրիստոս պէտք է գոյ իւր փառ-  
քով՝ կենդանիներն և մեռեալներն դա-  
տելու համար : Այս Վերջին Գալուստն  
Քրիստոսի , որ կը յիշուի Սուրբ Գրոց մէջ ,  
պէտք է լինի ՚ի կատարածի աշխարհի ,  
ինչ ժամանակ նորա թագաւորութիւնն  
կը հաստատուի բալոր աշխարհի մէջ :

## ԵՐԵՈԲԴ ՄԱՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

Հաւատամք եւ ՚ի Հոգին Սուրբ և այն :

Հաւատաչ ՚ի Հոգին Սուրբ կը նշանա-  
կէ հաւատալ այն ամենայն բանին , ինչ  
որ կ'ուսուցանէ մեղ Սուրբ Գիրքը Հոգ-  
ոյն Սրբոց վերայ , զգալ նորա օգնութեան  
և սղորմութեան կարօտութիւնը և հար-  
կաւորութիւնը , խնդրել ջերմեռանդու-  
թեամբ շնորհք , ողորմութիւն եւ զօ-  
րութիւն՝ նորա տուած շնորհքներն գործ  
դնելու համար :

Սուրբ Գիրքն կ'ուսուցանէ մեղ՝ թէ  
ինչ է Հոգին Սուրբն ինքն ըստ ինքեան  
և ինչ է վերաբերելով առ մեղ : Կ'ու-

սուցանել թէ՝ ինքն ըստ ինքեան Հոգին  
Սուրբն է Երրորդութեան մի անձն, նոյն  
սկզա անսահման, յաւիտենական և ճշմա-  
րիտ Աստուած ընդ Հօր և ընդ Որդւոյ:  
“Զի երեք են որք վկայեն յերկինս . Հայր,  
Բանն և Հոգին Սուրբ” : Ա. Յով. Ե. 7-8:  
Սուրբ Գիրքն կը խոստովանի զնա Ասո-  
ւած . “Ասէ Պետրոս . Անանիա, ընդէր  
ելլոց Սատանայ զսիրտքո՛ ստել քեզ Հո-  
գւոյն Սրբոյ . ոչ ստեցեր մարդկան, ոչը  
Աստուծոյ ու Գործ . Ե. 3-4: “Ո՞չ գիտէք,  
եթէ տաճար էք Աստուծոյ, և հոգի Աս-  
տուծոյ բնակեալ է ’ի ձեզ” : Ա. Կորն.  
Գ. 16:

**Սուրբ Գիրքը կը տայ Հոգւոյն Սրբոյ  
աստուածային կատարելութիւններ . —**

**Ամենուրեքութիւն .** “Յո՞ երթայց ես  
յոգւոյ քումմէ և կամ յերեսաց քոյց ես  
յո՞ փախեայց : Թէ ելանեմ յերկինս՝ դու-  
անդ ես . և եթէ իջանեմ ’ի դժոխա եւ  
անդր մօտ ես” : Ասդ . Ճ. 2 . 7-8:

**Ամենագիտութիւն . —** “Այլ յայտնեայց  
մեզ Աստուած Հոգւովն իւրապէ, զի Հոգին  
զամենայն քննէ եւ զնորս Աստուծոյ” :  
Ա. Կորն . Բ. 10:

**Արարչագործութիւն . —** “Եւ երկիր էր

աներեւոյթ և անպատրաստ և խաւար ՚ի  
մերաց անդնդոց . և Հոգի Աստուծոյ շըր-  
ջէր ՚ի մերաց ջուրց ” : Ծննդ . Ա . 2 :

Յաշտնութիւն . “ Քանիպի ո՞չ ելմէ ըստ  
կամաց մարդկան տուաւ մարդարէութիւն  
երբէք , այլ ՚ի Հոգւոյն Սրբոց կրետլք խօ-  
սեցան մարդիկ յԱստուծոյ ” : Բ . Պիտ ,  
Ա . 21 :

Առուածային պաշտօն . “ Գնացեք  
ոյսուհետեւ աշակերտեցէք զամենացն հե-  
թանոս , մկրտեցէք զնոսա յանուն Հօր  
և Որդւոց և Հոգւոյն Սրբոց ” : Մատ . ԻԷ .  
19 . “ Շնորհը Տեառն մերոց Յիսուսի Քը-  
րիստոսի և սէրն Աստուծոյ , եւ հաղոր-  
դութիւն Հոգւոյն Սրբոց , ընդ ձեզ ամեւ-  
նեսին ” : Բ . Կորն . ՓԳ . 13 :

Մէք ովէտք է որոշեմք Հոգին Սուրբն  
իւր տուած շնորհքներէն : Սուրբ Գիրքն  
որոշելով Հոգին Սուրբն իւր տուած շր-  
նորհքներէն . ցոյց կը տայ մեզ , որ խոս-  
տովանիմք զնա՝ ո՞չ թէ իբրեւ հասարակ  
գորութիւն Աստուծոյ , այլ որպէս մի անձն  
Սուրբ Երրորդութեան : “ Թէ ովէտ և բա-  
ժինք շնորհաց են , այլ Հոգի նոյն է ” : Ա .  
Կորն . ՓԲ . 4 : “ Եւ մի տրտմեցուցանիք  
Հոգին Սուրբ Աստուծոյ , որով կիրեցաւ

բուք յաւուրն փրկութեան ։ Եվիս . Դ . 30 :

Հոգին Սուրբն է ծանաչող . — “ Եւ Աստուծոցն ոչ ոք գիտէ , եթէ ոչ Հոգին Աստուծոց ” : Ա . Կորն . Բ . 11 :

“ Աս է Միակամ . — “ Այլ զայս ամենայն յաջողէ մի եւ նոյն Հոգի , բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի ” : Ա . Կորն . ՓԲ . 11 :

“ Աս է Ուսուցիչ . — “ Այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք , այլ ըկ Հոգին որ յԱստուծոց , զի ծանիցուք զայն , որ յԱստուծոցն շնորհեցաւ մեզ ” : Ա . Կորն . Բ . 12 : “ Եւ զոր խօսիմքս ոչ եթէ մարդկեղին ուսմամք ճարտարաւթեամք բանից , այլ վարդապետութեամք Հոգւոյն ընդ հոգեւորս զհոգեւորան համեմատեմք ” : Ա . Կորն . Բ . 13 :

“ Աս է Վկայ և Բարեխօս . — “ Նոյն ինքն Հոգին վկայ է հոգւոյս մերում , եթէ եմք որդիք Աստուծոց ո : Հո.ով . Ը . 16 : “ Այլ ինքն Հոգին բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռունչս : Զի ըստ Աստուծոց բարեխօս է վասն սրբոց ” : Հո.ով . Ը . 27 :

Վերաբերելով առ մեզ Հոգին Սուրբն է Առքիւր միաւթեան Աստուծոց ընդ մարդկան : Աս է յատուկ և անդադար ներ-

գործող մեր փրկութեան համար : Նա է  
միացնող զմեղ ճշմարիտ հաւատով Քրիս-  
տոսի հետ : Նա է արժանացնող Քրիստո-  
սի ողորմութեանը՝ նորոգելով զմեղ եւ  
սրբելով : “Եւ դուք այնպիսիք ոմանք էիք,  
այլ լուացարուք, այլ օրբեցարուք, այլ ար-  
դարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսու-  
սի Քրիստոսի և ՚ի Հոգին Աստուծոյ մե-  
րոյ ” : Ա . Կորն . Զ . 11 :

**Հ**ոգին Սուրբն է մեր Աւրախութիւնն  
և Խաղաղութիւնն . “Զի ոչ է արքայու-  
թիւնն Աստուծոյ կերակուր և ըմագելի,  
այլ արդարութիւն և խաղաղութիւն եւ  
խնդութիւն ՚ի Հոգին Սուրբ ” : Հո.ոլ .  
ԺԴ . 17 :

**Ն**ա է Նըան, որով Քրիստոս զմեղ կը  
ճանաչէ . “Եւ մի տրտմեցուցանէք զՀո-  
գին Սուրբ Աստուծոյ, որով կիքեցարուք  
յաւուրն փրկութեան ” : Եվես . Դ . 3 ) :

**Ն**ո մեղ կը տայ զօրութիւն եւ կա-  
րողութիւն զԱստուծած անուանելու Հայր :  
“Եւ ՚ի էք դուք որդիք, առաքեաց Աս-  
տուծած զՀոգի Որդւոյն ՚ի սիրաս մեր, որ  
աղաղակէ աբբայ հայր ” : Գաղ . Դ . 6 :

**Հ**ոգւոյն Արբոյ շնորհքներն կը բաժա-  
նին երկու . — Հրաշալի եւ Հասարակ :

Հրաշալի շնորհքներն առւառ Աստված  
 առաքելոց եւ մարդարէից . իսկ հասա-  
 րակներն ամենայն մարդկան : Հրաշալի  
 շնորհքները ստացան առաքեալներն եւ  
 մարդարէներն , որով կատարեալ իմացան  
 Աւետարանի ճանաչողութիւնն և կարո-  
 ղացան խօսիլ զանազան լեզուներով , մար-  
 դարէանալ և հրաշագործել : Առաքեալ-  
 ներն ստացան այս շնորհքներն , որով կա-  
 րողացան քարոզել Աւետարանն բոլոր աշ-  
 խարհին և ցցց տալ , որ իւրեանց առաքե-  
 լութիւնն երկնացին է և ուսումն տառ-  
 ուածային : “Եւ բանն իմ եւ քարոզու-  
 թիւն , ոչ պատիր բանիք իմաստութեան ,  
 այլ արդեամբ Հոգւոյն և զօրութեամբ ” :  
 Ա . Կորն . Բ . 4 : “Զի Աւետարանն մեր  
 ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ , այլ և զօ-  
 րութեամբ և Հոգւով Սրբով ” : Ա . Թես ,  
 Ա . 5 : Գործք Առաքելոցը մեզ կ'իմացնէ ,  
 որ ինչպէս Առաքեալներն , նոյնակէս և ա-  
 մեն Ճշմարիտ հաւատացեալներն՝ Քրիս-  
 տոնիական Եկեղեցւոյ նոր հաստատու-  
 թեան ժամանակի կը գործէին հրաշքներ :  
 Բայց երբ Եկեղեցին բաւական հաստատ-  
 ուեցաւ , որ հասարակ քահանացքն ան-  
 գամ կարող կը լինէին քարոզել Աւետա-

րանն և կառավարել իւրեանց եկեղեցին՝  
կարօտութիւն ըստ մնաց այս արտաքին հր-  
բաշագործութեանց։ Մեք պէտք է ուրա-  
խանտմք, որ մեղ տուած են հասարակ  
շնորհքներ, որք կարող են նորոգել, այս  
ինքն տալ մեղ հաւատ, սրբութիւնն և մը-  
խիթարութիւն։ Պէտք է ուրախանտմք, որ  
Հոգւոյն Արբոյ այս շնորհքներով տակա-  
ւին այս աշխարհիա մէջ կարող եմք ճաշա-  
կել յաւիտենական երջանկութիւնն և ըն-  
դունակ լինիլ փրկութեան։ Առաքեալն  
խօսելով հրաշալի շնորհաց վերայ՝ կը յոր-  
դորէ որ աւելի օգտաւէտ շնորհքներ որո-  
նեմք։ «Բայց՝ նախանձաւորք լերուք շնոր-  
հացն, որք լաւքն են»։ Ա. Կորն. Ժ. 31.  
և կը գովի՛ Աւրն առ, Աստուած և առ, զնւ-  
կերն։

Հոգւոյն Արբոյ տուած հասարակ շը-  
նորհքները բաղմաթիւ են և գոնադան։  
Այս կարգին մէջ կարելի է գնել ամենէն  
առաջ այն Ճանաչողութիւնն, զոր մեք կը  
տուանամք՝ կարդալով և քարոզելով Աս-  
տուծոյ խօսքը։ Աս եւս Հոգւոյն Արբոյ  
շնորհքն է, վասն զի նորա զօրութեամք  
գրեցին Սուրբ Գիրքն Մարգարէներն եւ  
Առաքեալներն։ Աստուած կը տայ մեղ

Հասարակ շնորհքները բարի գործքով, բարի մննդով, բարի օրինակով և կը ասց սոյն ողբարմութիւններն այս կենաց մէջ արտաքին միջոյներով։

**Ա.** Ապատձառաւ ահամ Հոգւոյն Արրաջ շնորհքն պէտք է զանազանել մոլելլունութենէ։

**Ա. Ա.** **Մ**ոլելլունութիւնն կ'արհամարհէ Շնորհաց արտաքին միջոյներու օգնութիւնն. իսկ ընդ հակառակն՝ Շնորհքն այս օգնութիւնն կը շնչի իւր համար հիմն և գործ կ'ածէ իւր նպատակի համար։

**Բ.** **Մ**ոլելլունութիւնն կամի որ Առառածուծոյ ներգործութիւնը լինի միշտ զգալի կերպիւ, ինչպէս կը տեսնեմք Առաքելոց վերայ. իսկ ընդ հակառակն՝ Շնորհքն կը ներգործէ ծածուկ և անզգալի։ “Զի հողմն ուր կամի շնչէ և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո՞ երթայ, սոյնպէս և ամենայն ծնեալն ՚ի Հոգւոյն”։

**Յով.** Գ. 8։

**Գ.** **Մ**ոլելլունութիւնն կը հեռացնէ ամենայն քննութիւնն և դատողութիւնն և կը հետեւի իւր վառուած երեւակայութեանը. իսկ ընդ հակառակն՝ Շնորհքն կը ասց մեր մտաց զօրութիւնն և չ'արգելուր

մոտաց քննութիւնն կամ դատողութիւնն :

Դ . Մոլեկրօնութիւնն կը ջանայ աւելի  
առաջ գնալ Աւետարանի ուսմունքէն ,  
իսկ ընդհակառակն՝ Շնորհքն չ'որոներ նոր  
յայտնութիւն :

Ե . Մոլեկրօնութիւնն թոյլ կը տայ որ  
միան իւր մէջ չարութիւններ , այսինքն  
շնութիւն , արծաթսիրութիւն և այն , և  
առհասարակ ազատութիւն ջրտար ուրիշ  
դաւանութեանց , այլ կը հալածէ եւ կը  
նեղէ . իսկ ընդհակառակն՝ Շնորհքն ունի  
խր նշանն – այն է Մարդասիրութիւնն եւ  
Սրբութիւն :

Մեր միաքը կը հաստատէ , որ Հոգին  
Աստուծոյ ունի ներգործութիւն մեր հո-  
գւոյ վերայ : Մեր տկարութիւնը կը հար-  
կադրէ զմեղ զգալ եւ խոսառվանիլ մեր  
հարկաւորութիւնը և կարօտութիւնը Աս-  
տուծոյ շնորհաց և կը յուսադրէ որ ամեն  
նեցուն Արարիչ Հոգըն ըլ խնայեր երթէք ,  
այլ կը տայ իւր օգնութեան եւ միսիթա-  
րութեան Հոգին :

Մուրք Գիրքն կ'ուսուցանէ , որ մէք  
ընտւ պէտք չ'է երկմխտ լինիսք , երբ կը  
խնդրեմք Աստուծմէ օգնութիւն նորա  
պատուիրանները կատարելու համար :

Ս. Գիրքն կ'ասէ՝ Աստուած է որ կը շարժէ  
մեր հոգին իւր բարերարութեամբ եւ  
կ'ուղղէ իւր պատուիրանքն կատարելու :  
“Զի Աստուած է, որ յաջողէ ՚ի մեղը  
կամելն և զառնելն վասն հաճութեան” :  
Փիլ. Բ. 13: Նմանապէս կ'ուսուցանէ,  
որ Հոգին Սուրբ կը բնակի իւր ճշմարխս  
պաշտողաց մէջ և այս պատճառաւ նորա  
կ'անուանին Տաճար Աստուծոյ : “Ո՛չ գի-  
տէ, եթէ տաճար էք Աստուծոյ և Հոգի  
Աստուծոյ բնակեալ է ՚ի ձեզ” : Ա. Կոլն.  
Գ. 16: Սուրբ Գիրքն կ'ուսուցանէ, որ  
Հոգին Սուրբն է, որ կը ծնանի մեր մէջ  
Քրիստոնէական առաքինութիւն . “Իսկ  
պոտղ Հոգւոյն այս է . սէր, խնդութիւն,  
խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղց-  
րութիւն, բարութիւն, հաւատք, հեղու-  
թիւն, ժուժկալութիւն” : Գաղ. Ե. 22-23:  
Կ'ուսուցանէ նոյնապէս թէ՝ Աստուած է  
որ կը բանայ մեր սիրոն իւր խօսքի հա-  
մար և կը տայ հասկացողութիւն եւ մէք  
առանց Հոգւոյն Սրբոյ օգնութեան՝ ոչ  
ինչ եմք, եթէ ոչ շնչաւոր կենդանի, որ  
կարող չ'է հասկանալ Աստուծոյ բանը :  
“Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զշո-  
գւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա-

և ոչ կարէ զիտել, եթէ հոգեպէս քըն-  
նիցի „: Ա. Կորն . Բ. 14:

Հոգւոյն Սրբոյ ամեն շնորհքները մեք  
կարող ենք ստանալ :

Ա. Հեղութեամբ սրախ , զգալով նորա  
շնորհաց հարկաւորութիւնը . “ Զքաղ-  
ցեալս լոյց բարութեամբ և զմեծատու-  
նըս արձակեաց ունայն ” : Պուկ . Ա. 53:

Բ. Աղօթքով - “ Ապա թէ ոք ՚ի ձէնջ  
իցէ նուազեալ յիմաստութենէ , խնդրեա-  
ցէ յԱստուծոյ՝ որ տայն ամենայնի առա-  
տապէս՝ և ոչ նախատէ և տացի նմա ” :  
Յակ . Ա. 5 : Ուրեմն՝ մարդ կը կառա-  
վարուի Աստուծոյ շնորհքով և ազատու-  
թեամբ , ծառայ է նա իւր բնական ար-  
կարութեամբ , ազատ է ազօթքով , իր-  
մէն է կախուած խնդրել և ստանալ զօ-  
րութիւն . որովհետեւ ինքն ըստ ինքեան  
չունի զօրութիւն :

Գ. Գործ դնելով Աստուծմէ ստացած  
շնորհքն : Մոլորութիւն է սպասել թէ  
մեք միայն մեր կարողութեամբ կարող եմք  
ամեն բան անել : Մոլորութիւն է նոյնպէս  
ասել թէ առանց մեղ կ'անէ Աստուած  
մեղ համար ամեն բան . այլ ընդ հակա-  
ռակն՝ մեք եւս մեր կողմէն պէտք է գործ

դնեմք այն ամենայն հնարքներն , զոր Առ  
տուած կը տայ մեղ , այն է կարդալ նորա  
խօսքն , մտածել նորա օրինաց վերայ , ար-  
թուն կենալ և հետեւիլ այն բարի խոր-  
հրդին , զոր կը ճնանի մեր մեջ աստուա-  
ծային խօսքը : Այս սրայմանով կարող է  
մարդ ստանալ աստուածային շնորհքն և  
բազմացնել կամ շահեցնել . վասն զի՞ այն  
մարդը որ ունեցած շնորհքն գործ չը դներ ,  
Աստուած կ'առնէ և կը տայ նմա , որ յօ-  
ժար է գործ դնելու : “ Զի ոյր գուցէ  
տացի նմա և յաւելքի և ոյր ոչն գուցէ և  
զոր ունիցին՝ բարձցի ՚ի նմանէ ” : Մատ .  
ԺԳ . 12 : Իսկ ընդ հակառակն՝ եթէ մեք  
առ ոչ ինչ համարեմք այս աստուածային  
շնորհքներն և գործ չը դնեմք , կամ գործ  
դնեմք չարութեամք , այս կը նշանակէ-  
մեղանչել , զոր Սուրբ Գիրքն կանուանէ  
տրամեզնել եւ զիջուցանել Հոգին Սուրբ  
մեր մեջ : “ Եւ մի արտմեցուցանէք զՀո-  
գին Սուրբ Աստուածոյ , որով ինքեցարուք  
յաւուրն փրկութեան ” : Եփես . Պ . 20 :  
“ ԶՀոգին մի շիջուցանէք ” : Ա . Թեսար .  
Ե . 19 :

Կը տեսնեմք ահա , որ սկսոք է հա-  
ւատալ ՚ի Հոգին Սուրբ , որ գործակից է

ընդ Հօր և ընդ Արդւոյ մեր վրկութեան  
համար։ Եթէ մեք չը հաւատամք թէ ինչ  
է Հոգին Սուրբ, ինչ է արած մեզ համար  
և կամ ինչ կամի առնել մեր մեջ կը նը-  
շանակէ որ մեք չը կամիմք հաղորդութիւն-  
ունենալ նորա շնորհաց։ Մեք չեմք կարող  
ստանալ նորա շնորհընելն, միշտ կը մը-  
նամք մեղաց մեջ և չեմք լինիր Քրիստո-  
տոնեաց։ «Բայց դուք ոչ եք մարմնով, այլ  
հոգւով։ Եթէ իցէ Հոգին, Աստուծոյ ՚ի  
ձեզ բնակեալ, ապա եթէ ոք զՀոգի Քրիս-  
տոսի ոչ ունի, սա չէ նորա։» Հոռվէ. լ. 3:

## ԶՈՐՅՈՒԴԻ ՄԾՍՆ ՀԱՆԳԱՆԱԿԻ

«Հաւատամք ՚ի մի միայն զնդիան-  
լական եւ, առաքեցական Սուրբ Եկե-  
պեցի և այն։

Եկեղեցին է հաւաքումն այն մարդ-  
կանց, որք կը հաւատան Յիսուս Քրիս-  
տոսին։ Այն մարդիկը, որք կը հաւատա-  
յին Առաքելոց քարոզութեանը և կըն-  
դունէին Աւետարանը՝ բնական էր, որ ու-

բոշէին Հեթանոսներէն և Աքրայեցիներէն՝  
զԱստուած պաշտելու համար հոգւով և  
Ճշմարտութեամբ . ինչպէս առաջին ան-  
գամ այսպէս հիմնուեցաւ յԵրուսաղէմ-  
նկեղեցին : Այս հաւատացեալներն հիմ-  
նեցին միաբանութիւններ , զոր կ'անուա-  
նէին Յունաց լեզուով Եկեղեցիա , Եկեղե-  
ցի , այսինքն ժողով : Թէ այս հաւատա-  
ցելոց ժողովներն և թէ սոցա հետեւող  
միւս ժողովներն և թէ Հին Ռէխուի Ճը-  
մարիս աստուածապաշտներն մի և նայե  
հաւատով եւ յուսով միանալով իրար  
հետ՝ կը կազմեն ընդհանուր միաբանու-  
թիւն Քրիստոնէից , զոր կ'անուաննեմք  
Սուրբ , Ընդհանուր Եկեղեցի :

**Հ**աւատացելոց այս ժողովներն՝ ինչ-  
որէս որ կը յայտնեն իւրեանց արտաքին  
երեւելի միութիւնն ՚ի Քրիստոս , նոյնպէս  
պէտք է ունենան և ներքին հոգեւոր մի-  
ութիւն ՚ի Քրիստոս , և այս աներեւոյթ  
միութիւնն յայտնի է միայն հաւատացո-  
վին , թէ ունի արդեօք սրբութիւն , թէ  
ոչ , եւ յայտնի է Աստուծոյ , որ սրտա-  
գէտն է ամենայնի , սարա համար է որ  
Քրիստոս կ'ասէ . “Բագումք են կոչեցեալք  
և ոտկաւք են ընտրեալք ու Մատ . ին . 14:

Կամ կը նմանեցնէ ուռկանի . “ Նման է արքայութիւն Աստուծոյ ուռկանի արկելոց ՚ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոց ոչ Մատ . ԺԳ . 48 : Այս հոգեւոր եկեղեցւոյ համար կ'առէ Սարդիս Շնորհաւմն . “ Յամենայն ազգաց և լեզուաց , որք աշակերտեցան Աւետարանին և ՚ի վէճն Քրիստոս հաւատովք մերձեցան՝ յամենեցունց մի տաճար հոգեւոր և մի եկեղեցի շինեցաւ . Այս հոգեւոր Եկեղեցին էր , զոր փառաւորէին մեր նահատակներն . — “ Եկեղեցիք ոչ են պարգեւք թագաւորաց և ոչ արուեստ Ճարտարութեանց , և ոչ դիւռք իմաստնոց և ոչ աւարքաջութեան վինուորաց և ոչ պատիր խաբէութիւնք դիւաց . . . : Այլ շնորհք են մեծին Աստուծոյ . ոչ միտւմ ումեք ՚ի մարդկանեառւեալ , այլ ամենայն բանաւոր ազգաց , որք վեճակեալք են ՚ի բնակութիւն ՚ի ներքոյ արեգականս ո Եղիշէ :

Եկեղեցին կ'անուանի Ընդհանրական , վասն զի՞ նա ըստ սահմանուիր մի ազգով , ինչպէս Եբրայեցւոց Հին Ուխտի եկեղեցին , այլ հաւաքումն է ամեն ժամանակի և ամեն երկրի հաւատացելոց , Աղամէն սկսած մինչև ՚ի կատարած աշխարհի : Այս

Եկեղեցի անուանիմք ամենայն Քրիստո-  
 նեայքս „ . կ'ասէ Ներսէս Լամբրոնացին :  
 Ամենայն Նահապետք և Մարգարէք , որք  
 փրկութեան յոյսը դրած էին Մեսիայի  
 վերայ՝ են անդամք Եկեղեցւոյ , ինչպէս և  
 մէք Քրիստոնեայքս՝ Աւետարանով : “ Նը-  
 մա ամենայն մարգարէքն վկայեն զմողու-  
 թիւն մեղաց առնուլ անուամբ նորա ա-  
 մենայն հաւատացելոց ” : Գործ . ֆ . 43 :  
 Սուրբ Գիրքը կը նմանեցնէ Եկեղեցին շե-  
 նուածի , որոյ գաղափարն Աստուած իւր  
 յաւիտենական խմաստութեան մէջ ծրա-  
 դրեց և դրաւ նորա Հիմն , որ է Քրիս-  
 տոս , ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն .  
 “ Զի հիմն այլ ոչ ոք կարէ դնել , քան զե-  
 րեալն որ է Յիսուս Քրիստոս ” : Ա . Կորն .  
 Գ . 11 : Նա է Վեմն , որ կը պահէ և կը  
 պաշտպանէ բոլոր շնուռածն և Եկեղեցւոյ  
 անդամներն են նիւթ այս շնուռածոյն .  
 “ Դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք  
 տաճար հոգեւոր յանարատ քահանայու-  
 թիւն մատուցանել զհոգեւորն պատարա-  
 գըս հաճոյս Աստուծոյ ՚ի ձեռն Յիսուսի  
 Քրիստոսի : Դուք ազգ էք ընտիր , թա-  
 գաւորութիւն , քահանայութիւն , ազգ  
 սուրբ , ժողովուրդ սեպհական , որպէս

զի զձեր առաքինութիւնս նույլեցէր  
յայն՝ որ զձեզ ՚ի խաւարէն կոչեաց յիւր  
սրանչելի լոյն ։ Ա. Պետ. բ. 5—9. Սուրբ  
Գիրքն երբեմն կը նմանեցնէ Եկեղեցին  
Մարմնոյ, որոյ անդամներն կապուած են  
ամուր կապով և լի են կենդանութեամբ,  
որոց գլուխն է Քրիստոս. “Ա. Ա. Ճշմար  
տեալք սիրով՝ աճեսցուք ՚ի նմա զամե  
նայն, որ է Գլուխ Քրիստոս. ուստի ամե  
նայն մարմին յօդեալ և պատշաճեալ ամե  
նայն խաղալիօք տարբերութեան ըստ ակ  
դեցութեան չափով ըստ խրաբանչուր  
մասին զանումն մարմնոյ գօրծէ ՚ի շնուած  
անձին իւրոյ ։ Եփես. Դ. 16.

Եկեղեցւոյ կոչումն լինելով մի հօտ հա  
ւատացելոց Հրեից և Հեթանոսաց և ու  
նենալով մի Հովս, մի Փրկիչ և մի Տէր  
Յիսուս Քրիստոս, ոյս պատճառաւ՝ Հան  
գանակի մէջ ասելով Ընդհանրական՝ կ'ա  
սուի և Մի, ինչպէս կ'ասէ Պօղս Առա  
քեալն. “Որք միանդամ ՚ի Քրիստոս մը  
կըրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք,  
մը խտիր, ոչ Հրեի, և ոչ Հեթանոսի, ոչ  
ծառայի և ոչ աղատի. ոչ արուի և ոչ իգի,  
զի ամենեքեան դուք մի էք ՚ի Քրիստոս  
Յիսուս ։ Գաղ. Գ. 27.

Հաւատալ յինդհանրական Եկեղեցի  
կը նշանակէ նախ՝ հաւատալոր ըստ խոսու-  
ման Յիսուսի Քրիստոսի է և պիտի լինի  
Եկեղեցի աշխարհիս երեսին ընտրուած  
իամ կոչուած ՚ի փրկութիւն աստուածա-  
յին հոգւով։ Երկրորդ՝ հաւատալ, որ մէք  
կենդանի անդամ եմք Եկեղեցւոց։ Ընդ-  
հանուր Եկեղեցին կը բովանդակէ իւր մէջ  
յատուկ Եկեղեցիներ, որք ունին զանազան  
անուններ ըստ ազգի և ըստ տեղւոց, զոր  
օրինակ Կորնթացւոց, Հռովինայեցւոց, Եր-  
րայեցւոց, Հայաստանեայց և այլն։ Հայաս-  
տանեայց Եկեղեցին որ է Առորք, ընդհան-  
րական և առաքելական Եկեղեցի, հիմ-  
նուեցաւ Թագէոս եւ Բարդուղիմէոս Առ-  
աքելոց քարոզութեամբ (1)։

Եկեղեցին կ'անուանի Առորք, վասն զի  
նա կ'որոշուի աշխարհէն, կը նուիրուի  
Աստուծոց ծառայութեանն և նորա ան-  
դամներն կ'ուխտեն կենալ սրբութեան

(1) Այսքան գագեր կը յաբատեւէ նոյն հիմնն վե-  
րաց, ունի իւր արած պատերազմներն ընդդէմ խուռարիս  
սմի իւր կրած հողածանկաներն ։ իւր Ապատիրոսներն ։  
Նահատակներն և Հայրապետներն ։ միով քանիւ ունի  
իւր որատմական կեանքն, որ կարօտութիւն ունի տաւան  
ձին տեսմոն։ ։

մէջ եւ կը գտնեն Եկեղեցւոյ մէջ ամեն  
անսակ օգնութիւններ , որոց կարօտ են :  
« Արպէս և սիրեաց Քրիստոս զԵկեղեցի և  
զանձն իւր մատնեաց վասն նորա . զի նա  
որբեսցէ զնա տւազանին բանիւ , զի կա-  
ցուացէ ինքն իւր յանդիման փառաւաւոր  
զԵկեղեցի , զի մի աւնիցի ինչ արատ , կամ ազ-  
տեղութի՝ կամ այլ ինչ յայսպիսեաց , այլ  
զի իցէ սուրբ անարատ » . Եփես . Ե . 25-26 :

Այս Սուրբ անունը կը տամբ Եկեղեցւոյն  
գարձեալ այն սպատճառաւ՝ որ նա կը հե-  
ռացնէ և հեռի է ամենայն ծուռ և թիւր  
վարդապետաթիւններէ եւ ունի ՍՈՒՐԲ  
ԽՈՐՀՈՒԹՅԱՅԵՐ , ինչպէս են Մկրտոթիւն ,  
Դրշմ , Ապաշխարտթիւն և այլն :

**ՄԿՐՏՈՒԹՅԱՆ** է սուրբ Խորհուրդ՝ ո-  
րով կ'ընդունուիմք Եկեղեցւոյ մէջ , կը  
լուացուիմք սկզբնական մեղքէ և կը կըն-  
քուիմք անդամք լինիլ Եկեղեցւոյ :

**Մկրտոթիւն** բառը կը նշանակէ լուա-  
նալ : Այսօր եւս այս խորհուրդը կը կա-  
տարէ Հայաստաննեաց Եկեղեցին մի և նոյն  
ձեւով անփոփոխ , ընկղմելով զերեխայն  
երեք անդամ ջրոյ մէջ և ասելով . « Յա-  
նուած Հօր և Ռիդոյ և Հոգւոյն Սրբոյ » :

**Մկրտութիւնը** հին է . Երբայեցիք

աւնէին սովորութիւն մկրտելու հեթանոսներն , որք կամէին նուիրութիւն ձշմարիտ Աստուծոյ՝ կը ստանային մկրտութիւնն , որսից նշան քաւութեան եւ կը լուային հեթանոսութեան աղոն ջրով : Յովհաննէս Մկրտիչն կը մկրտէր ամենքը , որք կը դային նորա մօռ՝ ստանալու քաւութեան մկրտութիւնն , որ նշան էր հեռանալու ամեն տեսակ շարութիւններէ : Բայց նորա մկրտութիւնը խորհուրդ չ'էր , վասն զի՞ չ'ունէր իւր մէջ փրկութիւն :

Յիսուս Քրիստոս աւանդեց մկրտութեան խորհուրդն իւր աշակերտաց համբառնալու ժամանակն՝ ասելով . “ Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս , մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Ոլդոյ և Հոգույն Սրբոյ ” . Աստ . Էջ . 19 : “ Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ , և որ ոչն հաւատայ՝ դատապարտեցցի ” . Մարկ . Ժջ . 16 : Այս հրամանաւեայս խոստմոնքներով Առաքեալներն և նոցա աշակերտներն կը մկրտէին ամենքը , որք կը հաւատային Աւետարանին և կամէին աշակերտոիլ այնմ : Այս սովորութիւնը կը կատարեն ամենայն Քրիստոնէական եկեղեցիներն :

Մկրտութիւնն անուամբ Հօր և Որուց  
ոյ և Հոգւայն Սրբոյ կը նշանակէ Ա. Ու  
նա կը կատարուի Հօր և Որդւոյ և Հոգւց  
ոյն Սրբոյ հրամանաւ կամ զօրութեամբ,  
Բ. Ամենքը, որք մկրտուած են՝ պէտք է  
ընդունին մի միայն ճշմարիս Ասուուած.  
— Հայր ասելով՝ որ մեզ որդի կ'առնէ իրեն,  
Որդի ասելով՝ որ մեզ կը փրկէ . Հոգին  
Սուրբ ասելով՝ որ մեր մէջ կը նորոգէ Աս  
տուծոյ պատկերն և նմանութիւնը վերըս  
տին ծննդեամբ աւաղանին:

Մկրտութեան ժամանակ ջուր գոր  
ծածելը մեր միտն կը բերէ մեր աղտեղի  
բնութեան վիճակն և այն կարօտութիւնը,  
որ մեր հոգին կըզգայ արբութեան և նո  
րոգութեան համար . ցոյց կը տայ մեզ այն  
հոգեւոր շնորհքներն զոր մէք կը գտնեմք  
Աւետարանի մէջ : « Եւ դուք այնպիսիք  
ոմանք եիք, այլ լուացարուք, այլ արբե  
ցարուք, այլ արդարացարուք յանուն  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ՚ի Հօ  
գին Աստուծոյ մերոյ » : Ա. Կորն. Զ. 11:

Ուրեմն՝ նոր օրէնքով մէք կը ստանամք  
մեղաց թողթութիւն Քրիստոսի արիւնավ,  
զոր թափեց մեզ համար Խաչի վերաց, և  
Հոգւայն Սրբոյ օգնութեամբ որ կ'արժա

նացնէ զմեղ Քրիստոսի Եկեղեցւոյն անգամ դառնալու : Մկրտութիւնը կը ներկայացնէ մեղ սկզբնական մեղքը , մերսեպհական ազտը եւ սրբութիւնն , զորմեք կը ստանամք Աստուծոյ որդեգիր լենելով Յիառւսի Քրիստոսի միջնորդութիւն :

Հօգւոյն Սրբոյ շնորհքը Սուրբ Գիրքը շատեղ կը նմանեցնէ ջրոյ . վասն զի՞ ինչպէս չուրն ոչ թէ միայն լուանալու համար է , այլ և նորոգելու . նոյնպէս և Սուրբ Հոգին կը սրբէ , կը նորոգէ և կեանք կը տայ հօգւոյն . Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ . Եթէ գիտէիր դու զարդուեւսն Աստուծոյ , եւ ովէ , որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել , դու արդեօք խնդրէիր ՚ի նմանէ , և տայր քեզ ջուր կենդանին . Յով . Դ . 10 . « Զի ես տաց ջուր ՚ի ծարաւու՝ որոց գնան յանջրուոջ , եղից զոդի իմ ՚ի վերայ ղաւակի քո եւ զօրհնութիւնս իմ ՚ի վերայ որդւոց քոց » . Եսայ . ԽԴ . 3 :

Քրիստոսի անունով մերտուողները պարտական են ոչ միայն խոսանվանիլ հրապարակաւ Քրիստոնէութիւնը , ճանաչել զՔրիստոս Փրկիչ , նմա ակնունիլ ամեն ժամանակ , այլ նոյնպէս պարտական են

բոլորովին ընծայել իրենց անձն Քրիստոսի  
հաւատավ և սիրով, ցոյց տալ՝ որ ինքեւնք  
նոր արարած են և պահել այն սրբութիւ-  
նը, զոր ստոցած են : « Որ և զգեղ ըստ  
նմին օրինակի կեցուոցէ մկրտութիւնն, ոչ  
վմարմնոյ աղան՝ ի բաց ընկելնով, այլ ըդ-  
բարւոք մտացն հանդէս առ Աստուած,  
՚ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստո-  
սի ոռ : Ա . Պետ . Գ . 21 :

Այս պատճառաւ՝ Եկեղեցին ՚ի ըս-  
կիզն Քրիստոնէութեան կը պահանջէր  
մկրտուողներէն քրիստոնէական հաւա-  
տոց կարճ խոստովանութիւն և հրապա-  
րակական ուխտ սրբութեան մէջ կենալու  
և աշխարհի համար իրենց անձը մեռած  
համարելու :

Ընկրմելու ձեւն, զոր գործ կ'ածէ մեր  
Հայաստանեայց Եկեղեցին, կը նշանակէ  
Քրիստոսի Մահ , Թաղումն եւ Յարու-  
թիւնն : Կը Խաղուի հին մարդը, որ ծնա-  
նի նոր մարդ : Այս բանը մեր միտն կը  
բերէ Պօղոս Առաքելցն ասածն . « Թաղե-  
ցաք ընդ նմին մկրտութեամբ ՚ի մահ , զի  
որովէս Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց փա-  
ռօք Հօր , նոյնապէս եւ մեք ՚ի նորոգումն  
կենաց աջեսցուք ո : Հոռլ . Զ . 4 :

**Մեր Եկեղեցին ընդունած է Երեխաս.**  
 յիշ մկրտութիւնը զանազան պատճառ  
 ուառ . Նաև որ Քրիստոնէից Երեխայքն  
 ընդունուած են նոր ուխտով , այսինքն  
 Աւետարանաւ : “ Զի ձեղ են աւետիքս  
 և որդւոց ձերոց ” : Գործ . Բ . 39 : Եթէ  
 աւետիքը խոստացած է Քրիստոնեայ ծր  
 նողաց եւ իրենց որդւոց , ապա ուրեմն  
 կարող են մկրտուիլ և նոցա որդիքն կամ  
 Երեխայքն : Երկրորդ՝ Եբրայեցւոց Երե  
 խայքն կ'ընդունուեին թրիատութեամբ  
 այն ուխտի մէջ , որ տուած էր Աստուծ  
 մէ նոցա հայրերուն , թէպէտ և նոքա ըն  
 դունակ չ'եին ուխտ գնել և ձանաչել իւ  
 րենց պարտաւորութիւնը , ինչպէս և Քր  
 իստոս հրամայեց իւր աշակերտաց մկրտ  
 տել , թոյլ տուաւ նոցա ազատութեամբ  
 հետեւիլ այս նախնի սովորութեանը , եւ  
 երբ աշակերտները կ'արդիլուեին Երեխայքն  
 նորա մօտ գալու՝ Յիսուս նախատեց  
 աշակերտներն ասելով . “ Թոյլ տուք մուն  
 կտւոյդ գալ առ իս ու Բաց ՚ի սմանէ , կար  
 ծիք չ'կայ որ Առաքեալները ինչ ժամանակ  
 ամբողջ գերդաստան կը մկրտէին՝ նոցա  
 մէջ քը լինէր Երեխայ : Երկրորդ՝ Երեխայից

մկրտութիւնը մի բարի օրինակ է Եկեղեցւոյ մէջ, որ ծնողքները կ'ընծայեն իւրենց որդիքն Աստուծոյ ծառայութեան և ինքեանք եւս կը միսիթարուին, որ իրենց որդիքը մասնակից կը լինին Փրկչի ողորմութեանը : Այն խոստմունքը՝ զոր երեխայքը պէտք է տան մկրտութեան ժամանակ՝ կը տան նոցա կնքահայրերը և կ'ուխանքն Փրիստոնէական ուսումն տալ նոցա, երբ կատարեալ ընդունակութիւն ունենան :

**Մ**կրտութեան վերայ Հանգստնակն կ'աւելացնէ. Մի բառն, պատճառն որ՝ մարդն մկրտութեամբ մի անգամ կը ստանայ Յիսուսի Փրիստոսի շնորհքն : Ուրեմն՝ այս խորհուրդն երբէք պէտք չէ կրկնուի . “Մի Տէր, մի հաւատ մի մկրտոթիւն” : Եփես. ՚ ՚ . ՚ : “ Քանիզի անհնար է միւսանգամ մկրտելոցն , որ ճաշակեցին յերկնաւոր սրարգեւացն եւ հաղորդը եղեն Հոգւոյն Սրբոյ , և զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակսն ճաշակեցին եւ զօրութիւնսն հանգերձելոյ աշխարհին , եւ կործանեսցին , միւսանգամ նորոգել յապաշխարութիւնս և վերստին ՚ի խաչ հանել անձանց զօրդին Աստուծոյ և դարձեալ խայտառակել” : Եբբ . 9 . 4—6 :

Երկրորդ խորհուրդ Եկեղեցւոյ է  
ԴՐՈՅԾՆ, որով մշտեալն կ'ընդունի զգա-  
լի օծութեան միջնորդութեամբ՝ Հոգւցին  
Սրբոյ ներքին օծութիւնը, շնորհքը և զօ-  
րութիւնը եւ կը պատրաստուի պատե-  
րազմն մանել աշխարհի հետ և աշխարհի  
մոլութեանց հետ, ինչպէս կ'ասէ Յովհան-  
նէս Աաքեալն. « Եւ դոք օծութիւն ու-  
նիք առ ՚ի Սրբոյն և գիտէք ամենեքին :  
... Զայս գրեցի ձեզ՝ զի մի ոք զձեզ մո-  
լորեցուցանիցէ և դոք օծութիւնն՝ զոր  
ընկալարուք ՚ի նմանէ, բնակեսցէ ՚ի ձեզ,  
և չ' ինչ պիտոյ եթէ ոք զձեզ ուսուցէ,  
այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցա-  
նիցէ զձեզ վասն ամենայնի և ճշմարիտ է  
և չ' սուտ և որպէս ուսուցն զձեզ կայք  
՚ի նման։ Ա. Յով. Բ. 20—27։

Այս խորհրդով Հոգին Սուրբ կը զօ-  
րացնէ մեր սիրու, մեր միտքը եւ մեր  
կամքը, ինչպէս կ'ասէ Ներսէս Լամբրո-  
նացին. « Սա—Հոգին Սուրբ—օծանէ զմիտո-  
մեր ըստ Յովհաննու եւ առնէ Քրիստո-  
նեաց և Քրիստոսընկալս և յայսմ օծու-  
թենէ զօրանամք գիտել զամենայն։ Սա  
լուսաւոր առնէ զայս սրակց մերոց և ըդ-  
յոց կոչման մերոց և զմեծութիւն փառաց

ժառանգութեան և զայնութիւն և զեր-  
կայնութիւն սիրոյն Քրիստոսի” :

**Այս խորհուրդը կատարուեցաւ Յիւ-**  
տուսի Քրիստոսի վերայ նորա մկրտութեան  
ժամանակ՝ “Եւ իբրեւ մկրտեցաւ Յիւտուս՝  
եւ վաղվաղակի ՚ի ջրոյ անտի և ահա բա-  
ցան նմա երկնք եւ ետես զՀոգին Առ-  
տուծոյ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ  
գայր ՚ի վերայ նորա ու : Մատ . Գ . 16 .  
Եւ հաստատեցաւ Հոգւոյն Սրբոյ գալքո-  
տեամբն ՚ի դասս Առաքելոց , որք կը կա-  
տարէին յետոյ այս խորհուրդը ձեռքը  
դնելով մկրտուածներու վերայ և Հոգին  
Սուրբ դգալի նշանաւ կամ զօրութեամբ  
կ՚իջանէր նոցա մէջ : “ Եւ իբրեւ լուան  
մկրտեցան յանուն Տեառն Յիւտուսի , և ՚ի  
դնել ՚ի վերայ նոցա Պաւլոսի զմեռն , եկն  
Հոգին Առւրբ ՚ի վերայ նոցա ո . Գործ .  
ԺԹ . 5\_6 :

**Աեր Եկեղեցին կը կատարէ այս խոր-**  
հուրդն այսպէս՝ “ Լնու քահանայն զուրբ  
իւղն (միւռոն) ՚ի յափն իւր . . . և կնքէ  
սուրբ իւղովն զՃակատ մկրտելոցն , զաշն  
. . . զքամակն . . . զտան ո . ( ՚ի մեծ  
Մաշատոյի ) : Եւ այսպէս ուրեմն այս խոր-  
հուրդն ընդունողն պէտք է կենդանի վը-

կայ լինի Քրիստոսի համար , պահող ու  
պաշտպանող նորա ճշմարտութեանց եւ  
անթերի կատարող նորա պատուիրանաց,  
մանաւանդ նորա մեծ պատուիրանին—Սիւ-  
րոյ առ Աստուած և առ մարդ : “ Այլ  
առջիք զօրութիւն ՚ի հասանել Հոգւցն  
Սրբոյ ՚ի վերայ ձեր , և եղիջիք վկայք ինձ  
յԵրուսաղէմ , և յամենայն Հրեաստանի  
և ՚ի Սամարիա և մինչեւ ՚ի ծագս երկրի ո:  
Գործ . Ա . 8 :

**Երրորդ խորհուրդ Եկեղեցւոյ , որ կը**  
յիշատակուի Հանդանակի մէջ , է ԱՊԵ-  
ԽԱՐՈՒԹԻՒՆՆ , որով մեղաւոր և զզացեալ  
Քրիստոնեայն կը խոստովանի Աստուծոյ՝  
առաջի նորա քահանային իւր մեղքն եւ  
կը ստանայ քահանայի աղօմքով և Քրիս-  
տոսի խօսքով և չարչարանաց արդիւնքով  
մեղաց թողութիւն : Աստուծոյ քահանա-  
յից այս իշխանութիւնը հիմնուած է Քր-  
իստոսի այս խօսքի վերայ . “ Փեւաց ՚ի նո-  
ռա և ասէ . առէք Հոգին Սուրբ . եթէ  
ումեք թողուցուք զմեղս , թողեալ լիցի  
նոցա , և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ  
լիցի ո : Յով . Ի . 22 : Եւ այս խօսքի հա-  
մար է , որ քահանայն կ’ասէ . “ Եւ ես  
բանիւն Աստուծոյ ո և այլն :

Աղաշխագութեան խորհուրդը մեծ  
պարագ կը դնէ ապաշխարտզի վերայ, որ  
նա ջերմեռանգութեամբ եւ ճշմարիս  
զթմամբ խոստովանի իւր բոլոր մեղքերը,  
թողու խոր պարտապանաց՝ իրենց մեղքը,  
որովհետեւ առանց հաշտուելու մարդ-  
կանց հետ և թողնելու նոցա մեղքն, չէ  
իարող ինքն եւս հաշտուիլ Աստուծոյ հետ  
և թողութիւն ստանալ: « Թողցէ ամբա-  
րիշն զՃանապարհս իւր և այր անօրէն  
զիսրհուրդս իւր, եւ դարձի առ Տէր,  
գոցէ զողորմութիւն . և առ Աստուած  
մեր, զի բազմապատիկ թողցէ զմեղս եւ  
զանօրէնութիւնս ձեզ ու Եսայ. ծե. 7:  
« Այսպէս ասէ Տէր ամենակալ, դարձա-  
րուք առ իս՝ ասէ Տէր զօրութեանց եւ  
դարձայց առ ձեզ ու Զաք. Ա. 3: « Արտ-  
քէր այսուհետեւ պտուղ արժանի ապաշ-  
խարութեան ու : Մատ. Գ. 8: « Ոչ եկի  
կոչել գարդարս, այլ զմեղաւորս յապաշ-  
խարութիւն ու : Ղուկ. Ե. 32:

Աւրեմն՝ մեծ պարտք կայ քահանայի  
վերայ, որոյ առաջ կը խոստովանուին մեղ-  
քերը, որ լաւ խմանայ՝ թէ ինչ է Աստու-  
ծոյ ճշմարտութիւններն և ինչ է Աստու-  
ծոյ կամքն, որ նոցա համաձայն վարուի,

խորհուրդ պահէ խոտովանութիւնն, իբրա  
բեւ Աստուծոյ հաւասացած, իւր առ  
տուածատուք իշխանութեան մէջ, և պէտք  
է իմանայ յանդիմանել և խրատել, իմա-  
նայ ափոփել և միսիթարել, ինչպէս կ'ասէ  
Պօղս Առաքեալն . “Մի անփոյթ առներ  
զնորհացդ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ  
մարդարէութեամք 'ի ձեռնադրութենէ  
երիցութեան” : Ա. Տիմ . Դ . 14 :

**Մեղաւորն ապաշխարելով** կը տուանայ  
թողութիւն իւր մեղաց և այս պատճա-  
ռաւ Հանդանակի մէջ կ'ասէմք . “Հաւա-  
տամք 'ի քաւութիւն եւ. 'ի թողութիւն մե-  
ղաց” : Հաւատալ մեղաց թողութեան կը  
նշանակէ հաւատալ Աստուծոյ այն ողոր-  
մութեանն, զոր արար մեղաւորաց՝ ներե-  
լով. նոցա մեղքն : Կ'ասուի թողութիւն ,  
այն պատճառաւ, որ կարելի է մեր մեղքն  
համարիլ իբրև մէկ պարոք, զոր Աստուած  
կը թողու մեզ : Թողութիւնն իւր մէջ կը  
բովանդակէ երկու ողորմութիւն . — Առա-  
ջին՝ Աստուած ազատեց զմեզ այն պատի-  
մէն, որոյ մէք արժանացած էինք մեր  
մեղքով . իսկ Երկրորդ՝ Աստուած յետ  
տուաւ մեզ իւր սէրն և մեր իրաւունքը  
յաւխունական ժառանգութի վայելելու :

Աեղայ թողութեան Սուրբ Գիրքը  
 կը տայ զանազան անուններ, ինչպէս, Ար-  
 դարութիւն, զոր պէտք չ'է համեմատեմք  
 մարդկացին արդարութեան հետ, որով  
 մեղադրուածն կ'արդարանայ իւր անմե-  
 ղութեամբ : Վասն զի, երբ մեք կ'ասեմք  
 թէ արդարացանիք Աստուծոյ առաջ, կը  
 նշանակէ որ Աստուծո կամի մեզ հետ  
 վարուիլ ինչպէս արդարաց հետ, առ ոչ  
 ինչ համարելով մեր մեղքը : “Եւ քանզի  
 Աստուծո էր Քրիստոսիւ զաշխարհս հաշ-  
 տեցուցանելընդ իւր և ըստ համարելնոցա  
 զմեզս իւրեանց և եւս ’ի մեզ զբանն հաշ-  
 տութեան” : Բ. Կարճ . Ե . 19 : Կ'ասուի  
 մեղաց թողութիւնն Ողբիմութիւն Աստո-  
 ծոյ, որ Յիսուսի Քրիստոսի հեղութեան  
 և անասելի զոհ լինելու համար Աստուծո  
 ներեց մեր մեղքը : “Արդարանան ձրի նու-  
 րին շնորհօք ’ի ձեռն փրկութեան, որ ’ի  
 Քրիստոս Յիսուս” : Հո.ով . Դ . 24 : Այս  
 ողբիմութեանը կարսղ եմք արժանանալ  
 հաւատով, որ կը սրբէ մեր սիրով և կը  
 ծնանի մեր մէջ ջերմեւանդն ապաշխա-  
 րութիւն : Կենդանի, հեզ և գործնական  
 հաւատը կը միացնէ զմեզ Քրիստոսի հետ,  
 կը շնէն նորա անդամ եւ կը հասկացնէ,

որ Աստուած կը տեսնէ մեր մէջ զՔրիստոս և ոչ թէ զմեղ, և նորա արդիւնքն եւ դիտաւորութիւնը մերն կը համարի : «Եւ գտայց 'ի նմա իբրեւ ոչ եթէ զիմինչ արդարութիւն, որ յօրինաց անտի է ունիցիմ, այլ զհաւատոցն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդարութիւն է ու Փիլ. Գ. 9:

Այն մարդիկը, որը Ճշմարիտ հաւատով միացած են Յիսուս Քրիստոսի հետ և լուսցուած են իրենց մեղքէն նորա արիւնով և որբուած են նորա հոգւով՝ նորա միայն կարող են տաել – Հաւատամբ 'ի թողութիւն մեղաց : « Զոր յաւաջն եա Աստուած 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոցն արեամբ նորա, 'ի հանդէս արդարութեան նորա, վասն թողութեան յաւաջագոյն մեղացն գործեցելոց » : Հո.ով. Գ. 25 : Այսու Ճշմարիտ խոտոտվանութեամբ կարող են արժանանալ աստուածացին խոտոման :

Բայց ոչ մեր հաւատը, ոչ մեր քարի գործը, ոչ մեր ապաշխարութիւնը և ոչ մեր քաւութիւնը միայն չեն կարող տալ մեղ քրիստիւն . վասն զի՞ մեր հաւատն ոչ այլ ինչ է, եթէ ոչ միջոց, որով կ'ընելունիմք Աստուծոյ ողբրմութիւնը 'ի ձեռն

Քրիստոսին, “Աչ Կործոց արդարութեան, զոր արարաք մեք, այլ բատ իւրում ողորմութեանն ապրեցոց զմեղ՝ի ձեռն աւազանին միւսանսգամ ծննդեանն և նորոգութեան Հոգւցն Արքոյ: Զօր եհեղ ՚ի մեղ առատութեամբ ՚ի ձեռն Յիառափ Քրիստոսի Փրկչին մերոյ ու Տիառ. Գ. 5: Մեր հաւատը, մեր բարփ Կործը, մեր ապաշխարութիւնը միայն նշան են շնորհակալութեան մեր փրկարթեան և թողութեան համար: Մեր փրկութիւնը չունի մի այլ պատճառ, բայց միայն Աստուծոյ ողորմութիւնը: Պահեմք ուրեմն այս մեծ ճշմարտութիւնը, որ Աստուծոյ ողորմութիւնն է որ զմեղ կը փրկէ և ասեմք Սուրբ Գրոց հետ միասին: “Զերդումն զոր երդուաւ Աքրահամու Հօր մերում, ապլ մեղ առանց երկիւղի ՚ի ձեռաց թշնամեաց փրկեալս ու Ղոկ. Ա. 73—74:

**Զօրբորդ խորհուրդ Եկեղեցւոյ է ՀԱՆԱՈՐԴՈՒԹԻՒՆՆ, որ սահմանուած է Քրիստոսէն: Ընդ տեսակաւ հացի և գինւոյ՝ իսկապէս կը ճաշակեմք Քրիստոսի մարմինն և կ'ըմպեմք նորա արիւնն մեր մեղաց թողութեան եւ յաւիսենական կեանք ժառանգելու համար:**

**Քրիստոս Հաստատեց այս սուրբ խորհուրդը , Պատէքի ընթրեաց ժամանակ , այս խօսքերով . — “Առէք , կերայք այս է մարմին իմ : Եւ առեալ բաժակ գոհացաւետ նոցա և ասէ . Արբէք ՚ի դժանէ ամեն ներին : Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի , որ ՚ի վերայ բազմաց Հեղանի ՚ի թողութիւն մեղաց ո : Մատ . իշ . 26—29 :**

**Պօղոս Առաքեալը մանրամասն կը խօսի այս խորհրդոյ վերայ : “Տէր Յիսուս ՚ի գիշերին , յորում մատնէր , առ Հաց , գոհացաւ , երեկ և ասէ . Առէք և կերայք , այս է մարմին իմ , որ վասն ձեր բաժնի . զայս արարէք առ իմոյ յիշատակի : Նոյն պէս և զբաժակն յետ ընթրեացն՝ առ և ասէ . այս բաժակ նորոյ ուխտի է իմով արեամբ . զայս արարէք քանիցս անգամ եթէ ըմալիցէք առ իմոյ յիշատակի : Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս և բզբաժակս ըմալիցէք , զմահ Տեառն պատմեցէք , մինչեւ եկեսցէ նա ո : Ա . Կորն . Ժ . 23—25 :**

**Այս սուրբ խորհրդով միանալով Քրիստոսի հետ միշտ պէտք է սպասեմք նորա գալուտեանը և միշտ յիշեմք նորա մահըն : Քրիստոս ասելով այս խօսքերն .**

“ Զայս արարէք առ իմոյ յիշատակի ” . և  
Պօղոս Առաքեալն առեցնելով այս խօսքե-  
րը , “ Քանիցս անգամ թէ ուտիցէք ըդ-  
հացս զսյս և զբաժակս ըմափցէք , զմահ  
Տեառն պատմեցէք մինչեւ եկեսցէ նա ։  
Կը յիշեցնէ այս խօսքերով Քրիստոսի մա-  
հը , սր այս մահն է միակ հիմն փրկութեանն  
Այս մահն է , որ կ'աղատէ զմեզ գատա-  
պարտութենէ : Այս մահն է , որ կ'ար-  
ժանացնէ զմեզ Աստուծոյ ողորմութեանն  
և նորա հետ հաշտութեանն : Այս մահն  
է , որ կը ստիպէ զմեզ , որ մէք ևս տամք  
մեր անձը նմա , որ այնքան սիրեց զմեզ ,  
որ իւր անձն զոհեց մեզ համար :

ԱՀազրդութեան սուրբ խորհրդով  
մէք կը միանամք Քրիստոսի հետ , մէք պէտք  
է մասնակից լինիմք ուրեմն ոչ թէ միայն  
նորա մահուանը , այլ և նորա կենաց ,  
որ արժանի լինիմք յաւիտենական կենաց  
և բնակիմք Յիսուսի Քրիստոսի մէջ և նա  
մեր մէջ : Մեր կեանքով նորա կենաց  
մասնակից լինելու համար կ'ասէ Քրիստոս .  
“ Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մար-  
դոյ ևւ արբջիք զարիւն նորա , ոչ ունիք  
կեանս յանձնիս : Որ ուտէ զմարմին իմ  
և ըմակէ զարիւն իմ , անի զիեանս յաւի-

տենականս և ես յարուցից զնա յառուըն  
յետնում։ Որ ուտէ զմարմին իմ և բմպէ  
զարիւն իմ, նա յիս բնակեցի եւ ես ՚ի  
նմա»։ Յով. 2. 54—57։

**Ա**յս առրբ խօսքիրդոյն արժանապէս  
հաղորդուելու համար՝ Քրիստոնեայն պէտք  
է ունենայ ճշմարիտ գցումն, ճշմարիտ հա-  
սատ, չերմեռանդն ցանկութիւն դասնալ  
գէտ ՚ի բարութիւն, սրբութիւն, որք կը  
պարունակեն իրենց մէջ Մաքղասիրու-  
թիւն։ Մի խօսքով հաղորդուողը պէտք է  
լիովին զգայ և զոջայ, որ նա իւր մեղ-  
քերով անպատուած է զԱստուած եւ  
պէտք է հաւատայ, որ նորա սյս մեղքե-  
րն թողութիւն կը ստանան Աստուծմէ-  
Քրիստոսի խաջով եւ արդիւնքով։ Նա  
պէտք է ցանկայ, որ աւելի եւ աւելի յա-  
ռաջանայ հաւատոյ մէջ, սրբութեան եւ  
մարդասիրութեան մէջ։

**Ա**յս գդացողութիւններն անշուշն  
հարկաւոր են արժանապէս Քրիստոսի  
մարմինն եւ արիւնն ճաշակողաց, վասն վի-  
նոցա է վրկութիւն խտատացած, և նոցա  
որք կը գլջան իրենց մեղքն, նոցա՝ որք կը  
հաւատատան, նոցա՝ որք կ'աշխատին իրենց  
պրութեան համար, նոցա՝ որք կը ներեն.

այլոց իրենց մեղքն , ինչպէս Աստուած  
ներեց մեղ , և նոցա՝ որք կը ցանկան լի-  
նիլ նորա համար զոհ , ինչպէս նա ինքն  
զահուեցաւ մեղ համար :

Հաղորդութիւնն է հրապարակական  
խոստովանութիւն , որ մեք կը դղջամք մեր  
մեղքը , որ կապուիմք մեր Փրկչի հետ  
կենդանի հաւատով և կամփմք լինիլ ճըշ-  
մարիտ հաւատացող և հնազանդող : Աւ-  
րեմն՝ հաղորդուիլ առանց արժանաւո-  
րութեան՝ այսինքն հրապարակաւ խօս-  
տովանել , որ ունի վերեւ յիշած զգացո-  
զութիւններն , և ընդհակառակն՝ ինքնին  
զգալ որ մի և նայն ժամանակ զուրկ է այն  
զգացողութիւններէն , այս կը նշանակէ ան-  
պատուել զԱստուած , լինիլ ամբարիշտ  
և կեղծաւոր վերին աստիճանի : Հաղորդ-  
ուիլ կը նշանակէ ներքին հոգեւոր միու-  
թիւն Քրիստոսի և մեր բօսք և զբարչ  
հետ , որ մեք ամենքս մի մարմին եմք ՚ի  
Քրիստոս , որ է Գլուխ : Աւրեմն՝ որք չու-  
նին արժանաւոր զգացողութիւններ , չե՞-  
ղջար իրենց մեղքը և կը մօտենսն կեղ-  
ծաւորութեամբ Քրիստոսի մարմնոյ և ա-  
րեան , նոցա համար Պօղոս Առաքեալն  
կ'առէ . “Այսուհետեւ որ ուոխցէ զհացա

կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժա-  
 նութեամբ՝ պարտական եղիցի մարմիոյ  
 և արեան Տեառն։ Փորձեացէ մարդ զանձն  
 իւր և ասպա ՚ի հացէ անտի կերիցէ և ՚ի  
 բաժակէն արբցէ։ Զի որ ուտէ և ըմպէ  
 անարժանութեամբ՝ դաստաստան անձին  
 իւրում ուտէ և ըմպէ։ զի ոչ խորէ ըգ-  
 մարմին Տեառն ։ Ա. Կոլն. ԺԱ. 27—30։  
 Նոքա կ'անպատուեն սուրբ Խորհուրդը  
 ը զանազանելով հասարակ հացէն։ Եւ  
 որովհետեւ վերեւ լիշած սուրբ և բարի  
 գրացողութիւններն անշուշտ հարկաւոր  
 են ճաշակողի համար, ուրեմն՝ ամեն ճա-  
 շակող պէտք է փորձէ իւր անձն, թէ ունի  
 արդեօք այն զգացողութիւններն, և եթէ  
 ունի՝ աւելի պէտք է հաստատուի նոցա  
 մէջ։ Եթէ նուազ են այն զգացողութիւն-  
 ներն, պէտք է զօրացնէ, և եթէ չ'ունի այն  
 զգացողութիւնքն՝ անդադար պէտք է աշ-  
 խատի ճարելու։ Եթէ ըս կամի աշխատիլ  
 եւ ունենալ նա պէտք է հեռանայ այն  
 սուրբ Խորհրդէն՝ երկնչելով որ աւելի  
 չ'անպատուէ այն սուրբ Խորհուրդն եւ  
 աւելի չ' ծանրացնէ իւր թշուառութիւնն  
 ընկնելով մեղաց թմրաւթեան մէջ։ Ճա-  
 շակողը պէտք է առնէ այս անձնափորձու-

թիւնը այն դիտաւորութեամբ , որ իւր  
 կեանքն յարմարացնէ իւր ճանաչողու-  
 թեան , ինքն իւր անձին գէմ չը կեղծէ ,  
 նուազէցնելով կամ ներելով իւր յան-  
 շանքները : Նա պէտք է միտք պահէ , որ  
 Աստուած կը նայի մեր սրախն և կ'առէ  
 կեղծաւորութիւնն : Նա պէտք է մանրա-  
 մասն քննէ թէ փրկութեան ճանապարհի  
 վերայ է , թէ ոչ . պէտք է քննէ իւր ամեն  
 զգացողութիւններն , ամեն խօսակցու-  
 թիւններն , կենաց ամեն գործքերը , մտա-  
 ծէ ընդհանուր և յատուկ պարտաւորու-  
 թեանց վերայ , մանուանդ այս մեծ պար-  
 տաւորութեան վերայ , որ է հիմն և զա-  
 կիզըն հոգեկան կենաց , այսիքն Հաւատ ,  
 Յոյս , Սէր առ . Աստուած և Սէր առ . մարդ:  
 Այս քննութիւնը պէտք է կապակցեալ  
 լինի ջերմեռանդ ազօթից հետ , որովհե-  
 տեւ մեք կարօտաւթիւն ունիմք Աստուծոյ  
 լուսոյ և օգնութեան հոգւոյն , որ կարո-  
 ղանամք ճիշդ քննել մեր սիրոն և ցրել  
 մեր անձնասիրութեան ցնորքները : Այս  
 քննութեամբ միայն մեր անձն ճանաչեն  
 օգտաւէտ կը լինի մեզ համար : Այս քնն-  
 ութիւնը պէտք է գործնական լինի , այ-  
 սինքն խկոյն պէտք է ուղղեմք զմեզ , հե-

ուանամք այն առարկաներէն և այն տեղե-  
րէն, որք մեզ համար վտանգաւոր կը ճա-  
նաչեմք : Մի խօսքով՝ պէտք է դործ գլ-  
նեմք ամեն հնարքը և միջոցք, որք կը թր-  
ւին մեզ օգտաւէտ մեր Փրկչին հաւատա-  
րիմ լինելու համար : Այսպիսի քննու-  
թեան համար կ'ասէ Պօղոս Առաքեալն .  
“ Փորձեսցէ մարդ զանձն իւր և ասլա ՚ի  
հացէ անտի կերպէ և ՚ի բաժակէն արր-  
ցէ ” : Ա . Կորն . ԺԱ . 28 :

**Հ**ինգերորդ խորհուրդ Եկեղեցւոց է  
ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆ , զոր ՚ի սկզբան հաստա-  
տեց Աստուած այս խօսքերով . “ Եւ օրհ-  
նեաց զնոսա Աստուած և ասէ . ԱՃԵՄՔ և  
բազմացարուք և լոկք զերկիրո : Ծնն . Ա . 28 :

Քանի որ մորդն հնազանդութեամք կը  
պահէր Աստուծոյ պատուիրանքը՝ կը պա-  
հէր և այս խորհուրդը իւր սուրբ նշա-  
նակութեամք , բայց պատուիրանազան-  
ցութեամք հեռանալով Աստուծմէ՝ հե-  
ռացաւ ամուսնութեան սուրբ նպատա-  
կէն , փոխեց զայն լոկ դաշնակցութեան  
և յառաջ բերաւ բազմակինութիւնն . Այս  
մոլոր մոքերը փարատելու համար էր , որ  
Քրիստոս կ'ասէր Փարիսեցւոց . “ Զիցէ՞ ըն-  
թերցեալ ձեր՝ թէ որ հառտաստեացն ՚ի

սկզբանեւ արու և էդ արար զնոսա՞և ատէ, վոսն այսորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ եւ եղիցին երկոքեան ՚ի մարմին մի : Ապա ուրեմն՝ ոչ են երկու այլ մի մարմին : Արդ՝ զոր Առ տուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ ո : Մատ . ձ.թ . 4\_6 :

Քրիստոնէութիւնը տուաւ ամուսնութեանն այն մեծ նշանակութիւնը, զոր ՚ի սկզբանեւ Աստուած սահմանած էր : Տուաւ նմա իւր առաջին սրբութիւնը, միտւթիւնը և յաւխտենական անլուծանելի կապն՝ հիմնուելով Քրիստոսի խօսքի վերայ . “ Զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ ո : Պազս Առաքեալն համարձակ կը նմանեցնէ ամուսնութիւնը Քրիստոսի միտւթեանն Եկեղեցւոյ հետ : Ամուսնութեան կապը կ'անուանէ Անծխորհուրդ՝ ասելով . “ Ա՛ք, սիրեցէք ըղկանայս ձեր, որպէս եւ Քրիստոս սիրեաց զԵկեղեցի եւ զանձն իւր մատնեաց վասն նորա . . . : Նոյնոպէս պարաին արք սիրել զիւրեանց կանայս, իբրև զիւրեանց մարմինս . . . : Որ սիրէ զլին իւր, զանձն իւր սիրէ : Զի ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ եւ

գարմանէ զնա , որպէս և Քրիստոս զԵկե-  
ղեցի . . . : Վասն այսորիկ թօղցէ այդ  
զհայր և զմայր իւր , և երթիցէ զհետ կը-  
նոջ իւրց և եղեցին երկոքին՝ ի մարմին մի:  
Խորհուրդս ոյս մեծ է , բայց ես առեմ  
խել՝ ի Քրիստոս և յԵկեղեցի ու Եփես . և :  
25 – 32 :

Որովհետեւ Քրիստոս կը յայտնէ մեզ՝  
որ Աստուած է , որ կը կապէ ամուսնա-  
ցողներն և կը կապէ յաւիտենական կա-  
պով . ուստի ամուսինները պէտք է կապ-  
ուին ազատութեամբ . վասն զի՞ Աստու-  
ծոյ առաջ կը կապուին և Աստուծոյ սահ-  
մանած նախատակի համար , որ նոքա մարդ-  
կային ազգը աճեցնելով և բազմացնելով՝  
աճեցնեն եւ բազմացնեն աստուածային  
գերգաստանը : Պէտք է կապուին բարո-  
յական ազատութեամբ , սիրով և հաւա-  
նութեամբ եւ ոչ թէ յակամայից կամ  
նիւթական շահէ և կամ ինչ և իցէ սպառ-  
ձառներէ ստիպուած , որ արտաքոյ են  
բարոյական կապակցութեան : « Մի՞ ոք ,  
կ'առէ Ն . Շնորհալին , ՚ի քահանայից ՚ի  
բռնութենէ բռնաւորաց առանց կամոց  
առն և կնոջ պաակ դիցէ ու :

**Վ եցերորդ խորհուրդ Եկեղեցւոյ է**

ԿԱՐԳՆ ՔԱՀԱՆԱՑԱԿԱՆ կամ ԶԵՐԱԱԴՐՈՒԹԻՒՆՆ , որոց արժանաւոր անձն Եպիսկոպոսի ձեռնադրութիւնը եւ աղօթքով կ'առնու հոգեւոր զօրութիւն Եկեղեցւոյ մէջ պաշտօն կատարելու և խորհուրդներ մատակարարելու . Այս խորհուրդը Քրիստոս հաստաեց իւր համբարձման ժամանակ՝ տանելով աշակերտներն զիթենեաց լերան վերայ , ինչպէս կ'ասէ Ղուկաս Աւետարանին . “ Եւ ամբարձեալ զձեռո իւր օրհնեաց զնոսա և եղեւ յօրհնելն նորա զնոսա , մեկնեցաւ ՚ի նոցանէ եւ վերանայր յերկինս ։ Ղուկ . ԵՊ . 51 :

Այս խորհուրդն ընդունողներու պարտականութիւնն է քարոզել և ուսուցանել աստուածային ճշմարտութիւններն և զայնս կատարելն . Ուսուցանել ոչ միայն խօսքով , այլ և գործքով և բարի օրինակով լինել արժանաւոր սպասաւոր Եկեղեցւոյ սուրբ խորհուրդները մատարելու համար և լինել հաշտարար մեղաւորաց ընդ Աստուծոյ : “ Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել , այլ աւետարանել . . . : Զի եթէ աւետարանեմ ոչ ինչ են ինձ պարծանք , քանզի հարի ՚ի վերայ կայ .

բայց վայ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ, ա. կորն. Ա. 17. — թ. 16.

Եօթեւերդ խորհուրդ Եկեղեցւոյ է օծութն Հոգևորութեաց, որով հիւանդը կը զօրանայ յուստվ՝ գտնելով իւր մարմար հիւանդութիւնէն ազատութիւն, բժշկութիւն և թողութիւն մեղաց: « Հիւանդանացէ ոք ՚ի ձէնջ, կ'ասէ Յակոբոս Առաքեալն, կաշուցեն զերիցունս Եկեղեցւոյ և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս, օծեն իւղով յանուն Տեառն և աղօթքն հաւատով փրկեացէ ղաջնատեալն և յարուսցէ զնա Տէր և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա ո: Յակ. Ե. 14—15.

Մեր Հայաստանեայց Եկեղեցին կը կատարէ այս խորհուրդը կամ խորհրդաւոր արարողութիւնը հիւանդաց վերայ այսպէս. — Քահանայն Խաչիւ և Աւետարանաւ կը կարդայ այն սաղմոնները, ընթերցուածները, աւետարանները, աղօթքները և շարականները, որ ՚ի հնուց սահմանած են Մաշտոցի մէջ. որովհետեւ աղօթից մէջ կը բովանդակի խորհրդաւոր զօրութիւնն, ինչպէս կ'ասէ Յակոբոս Առաքեալն. « Աղօթք ընդ հաւատոյ Ծորդեալ առողջութիւն տայցէ հիւանդին և

Տերն կազդուրեսցէ զնա ո : Եւ ինչպէս  
կ'առէ Սարգիս Շնորհալին, “Ոչ իւղն տայր  
տռառջութիւն հիւանդին, այլ անուն  
Տեառն ո : ”

Հաւատաշ ՚ի յարութիւն մեռեցոց, որ  
կը յիշուի Հանգանակի մէջ, կը նշանակէ .  
որ մէք կը հաւատամք, թէ երբ մէր հոգին  
հեռանայ մարմինն եւ մարմինը մեռնի  
և դառնայ հող, կը կանչուի մի օր դէպ  
՚ի կեանք և կը միանայ հոգւոյ հետ, զոր  
նա ունէր յառաջ :

Յարութիւնն առնի իւր մէջ երկու  
ճշմարտութիւն - Անմահութիւնն հոգւոյ և  
Յարութիւն մարմնոյ : Մեր կրօնը կը խոս-  
առվանի այս երկու ճշմարտութիւնը :  
Հին Կտակարանը՝ Ենովքի և Եղիայի համ-  
բառնալովն՝ կը հասկացնէ թէ՝ կայ մի այլ  
աշխարհ, որ տեղ պատրաստուած է հա-  
տուցումն բարի և չար մարդկանց : “Նա՝  
աւանիկ ավետականի իմն ցանկացեալ  
են, այսինքն է երկնաւորին, վասն որոյ ոչ  
ամօթ համարի Առոտւած կոչիլ նոցա Առ-  
տուած . քանզի պատրաստեաց նոցա քա-  
ղաք ո : Եբբ . ԺԱ . 16 :

Ինչ ժամանակ կ'առէ, Ես եմ Աբրա-  
համու Աստուած, Խասիակայ և Յակոբայ

Աստուած, սովոր պարզ ցոյց կը տայ մեզ,  
որ սուրբ մարդիկը կը բնակին նորա մօտ  
և նորա ողորմութեամբ կ'ուրախանան,  
ինչպէս կ'առէ Քրիստոս . “ Ա. Ա. զի յառ-  
նեն մեռեալք և Մովսէս գուշակեաց ՚ի  
մօրենողն , որպէս առէ զջեառնէ Աս-  
տուծոյ Աքրահամու , և զԱստուծոյ Ի-  
սուհակայ եւ զԱստուծոյ Յակոբայ : Եւ  
Աստուած չ'է մեռելոց , այլ կենդանեաց .  
զի ամեներին նմա կենդանի են ” : Ղոկ .  
Խ . 37-38 : Մովսիսէն յետոյ եկած մար-  
դարէներն եւս կը հաստատեն այս Ճշմար-  
տութիւնը . “ Եւ դարձի հոգի յերկիր ,  
որպէս և էրն , և հոգին դարձի առ Աս-  
տուած , որ ետ զնա ” : Ժող . ԺԲ . 7 :  
Բայց միայն Յիսուս Քրիստոս տուաւ կա-  
տարեալ յայտնութիւն այս Ճշմարտու-  
թեան . “ Բայց յայտնեցաւ այժմիկ՝ յե-  
րեւիլ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ,  
որ խափանեաց զմահ և լուսաւոր արար-  
վկեանս և զանեղծութիւն ՚ի ձեռն աւե-  
տարանին ” : Ա . Տիմ . Ա . 19 :

Այս Ճշմարտութիւնները պարզ կը  
յայտնէ Նոր Կոտակարանը . “ Եւ մի եր-  
կընչեք յայնցանէ , որք սպանանեն զմար-  
մին և զհոգի ոչ կարեն սպանանել : Ա. Ա.

երկերաւէք դուք առաւել յայնմանէ , որ  
կսրողէ զհոգի և զմարմին կորուսանել  
՚ գեհենի ։ Մատ . Փ . 28 : “ Եւ ասէ  
յնա Յիսուս . Ամէն ամէն ասեմ քեզ ,  
այսօր ընդ իս իցես ’ի դրախտին , : Ղուկ .  
ԽԳ . 43 : “ Նեղեալ եմ յերկոցունց՝ զյան-  
կան ելանել և ընդ Քրիստոսի լինիլ ա-  
ռաւել լաւ համարիմ ” : Փիլ . Ա . 23 :  
Եւ մեք ջերմեռանդութեամբ կը հաւա-  
սամբ Անմահութեան , երբ կը պահեմբ մեր  
կեանքը և զգացողութիւնը սրբութեամբ  
և չեմբ որոներ աշխարհիս վայելքները ,  
այլ աստուածահաճոյ առոքինութիւնները  
“ Զգեցարուք այսուհեաեւ իբրեւ ընտ-  
րեալք Աստուծոյ , սուրբք և սիրեցեալք ,  
զգութ , զողորմութիւն , զքազցրութիւն ,  
զստնարհութիւն , զհեղութիւն , զերկայն-  
մասութիւն , ներել միմեանց . շնորհել ի-  
րերաց , եթէ ուրուք զումեքէ տրտունջ  
ինչ իցէ . որովէս Աստուած Քրիստոսիւ  
շնորհեաց ձեզ , նոյնալէս և դուք ։ Կու .  
Գ . 12 :

Եւ վերջապէս կ’աշխատիմբ օր ըստ օ-  
րէ հարստացնել մեր հոգին բարի զգա-  
ցողութեամբ , որ կարողանամբ արժանա-  
նալ երկնային հայրենեաց և ճաշակել հո-

դւս Երջանկութիւնը :

Յարութենէն յետոյ պէտք է լինի ընդհանուր դատաստան՝ ՚ի կատարածի աշխարհի և այս դատաստանի համար կ'առուի Հանգանակի մէջ . — Գալոց է նովին մարմնովն եւ վատօք Հօր ՚ի դատել զկենդանիս եւ զմեռեալս :

Որովհետեւ Աստօտած ամենասուրբ է, ամենիմաստ, բարի, ամենակարող և կառավարիչ աշխարհի, ուրեմն՝ նա պէտք է թէ շուտ թէ ուշ բաժանէ բարին չարէն : Եւ մեք եւս կը տեսնեմք, ար այս աշխարհի մէջ առարինութիւնը ըլ ստանար իւր հատուցումն, ոչ եւս չարութիւնն՝ իւր պատիմն, ոյլ ընդհակառակն՝ մեղաւորներն կը վայելեն ուրախութիւն և արդարներն՝ չարչարանք : Պէտք է լինի ուրեմն՝ նը շանակուած մի օր՝ որ ամենը կարգի դրուի, առաքինութիւննը ստանայ իւր հատուցումն եւ չարութիւնը՝ իւր պատիմն : Մեր խղճմտաներն եւս նոյնպէս կը վկայէ, որ կայ մի Տէր, յորմէ մեք կախուած եմք և պէտք է ունենամք երկիւղ, որովհետեւ նա վկայ է մեք գործոց, որ կը դատի մի օր, բարիները վարձատրելով յաւխտենական երջանկութեամք և չարեցը պատմե-

լով յաւիտենական տանջանօք և Քրիստոս  
այս ժամանակի համար է որ կ'ասէ . “Եւ  
յորժամեկեսցէ Որդի մարդոյ փառօք իւ-  
րակը եւ ամենայն հրեշտակք ընդ նմա ,  
յայնժամ նոտցի յաթու փառաց իւրոց :  
Եւ ժողովեացին առաջի նորա ամենայն  
աղքք և մեկնեսցէ զնասա ՚ի միմեանց , որ-  
պէս հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց  
և կացուացէ զօդիսն ընդաջմէ իւրմէ , եւ  
զայծիսն ՚ի ձախմէ ո : Մատ . ԻԵ . 31-33 :

Բարի մարդիկ կը դատուին իրենց  
հաւատով և իրենց գործքով : Որովհեաեւ  
մեշպէս միաբը և հոգին պէտք է հնազան-  
գին հաւատով՝ յայտնուած ճշմարտու-  
թեանց , նոյնալէս եւս սիրտը և կամքը սի-  
րով և հնազանդութեամբ : Ուրեմն՝ մեր  
եւս պէտք է հաւատամք ամեն բանի , ինչ  
որ նա կը պատուիրէ մեզ , վասն զի՞ ան-  
հաւատութիւնը կը դառնայ մեզ համար  
գտառապարտութիւն : “Որ հաւատայ ՚ի  
նա ոչ դատապարտեացի և որ ոչն հաւա-  
տայ ՚ի նա , արդէն իսկ դատապարտեալ  
է , զի ոչ հաւատաց յանուն Արածնի Որ-  
դւոյն Աստուծոյ ո : Յով . Դ . 18 :

Դատաստան պիտի լինի ոչ թէ միայն  
կատարաւած դործոց վերայ , ոյլ և ամեն

մեր մտածմանց և բանից վերայ, զոր ու  
նեցած եմք : « Այսուհետեւ մի յառաջ  
քան դժամանակն դատիք . մինչեւ եկեղեցէ  
Տէր, որ լուսաւոր առնիցէ դգաղտնիա  
խաւարի և յայտնիցէ վլսորհուրդս սրտից  
և ապա իւրաքանչիւրոյ գովութիւն եղիցի  
յԱստուծոյ » . Ա . Կորն . Դ . 5 : « Զի ՚ի  
բանից քոց արդարացիս և ՚ի բանից քոց  
դատապարտեսցիս » : Մատ . ԺԲ . 37 :  
Բայց այս դատաստանի օրն խորհուրդ է  
մեղ համար, ոչ ոք չգիտէ, նա խորհուրդ  
է որ պատրաստ պահէ զմեղ ամեն օր եւ  
ըլինիմք յիմար կոյսերու նման, որք քնով  
անցուցին իրենց ժամանակն փեսայի ա-  
ռաջ դուրս գալու ժամին . « Արթուն  
կացէք, զի ոչ գիտէք զօրն եւ զժամ » :  
Մատ . ԻԵ , 13 : Այս վերջին դատաստա-  
նէն յետոյ պէտք է կատարուի Աստուծոյ  
հրամանը, այսինքն արդարներուն յաւի-  
տենական կեանք, իսկ մեղաւորներուն յա-  
ւիտենական տանջանք : « Եւ երթիցեն նո-  
քա մեղաւորքն ՚ի տանջանս յաւիտենա-  
կանս, եւ արդարքն ՚ի կեանս յաւիտե-  
նականս » :



# Ա Պ Օ Բ Ք Ի Վ Ե Բ Ա Յ

## Ա Ռ Հ Ա Ս Ա Ր Ա Կ

Ա շօթքն ունի երկու նշանակութիւն  
— Ընդհանուր և Յատուկ : Ընդհանուր նկա-  
զանակութեամբ աղօթքն է կապակցու-  
թիւն մարդոյ ընդ Աստուծոյ : Աղօթքով  
մեր կը ցանկամբ մօռենալ Աստուծոյ եւ  
խօսիլ նորա հետ : Այս նշանակութեամբ  
Աղօթքն կը բովանդակէ իւր մեջ աստուած-  
ովաշտութեան ամեն տեսակ գործքեր :  
Յատուկ նշանակութեամբ Աղօթքն է կո-  
չումն առ Աստուած և խնդրուածք ըստ  
կարօտութեան մեր վիճակի : Այս խըն-  
գրուածոց հետ պէտք է կապակցեալ լինին  
այն զգացողութիւններն , զոր պարտիմբ  
ունենալ առ Աստուած եւ մեր սիրաք  
պէտք է լինի կենդանի շնորհակալութեամբ  
պատահ նորա շնորհաց համար , զոր ստա-  
ցած եմք : “Մի ինչ հոգայք , այլ ամենայն  
աղօթիւք և խնդրուածովք գոհութեամբ  
խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստ-  
ուած ։ Փիջ . Դ . 6 :

**Աղօթքը մեծ բան է մարդոց համար :**  
 Նա է միայնակ եսկան պարաւառութիւնը  
 մարդոց առ Աստուած : Նա է միայնակ  
 նանապարհ աստուածային հարկաւոր եւ  
 թանկագին շնորհքներն ստանալու համար :  
 Նա է փառաւոր իրաւունք, որով կը ըս-  
 տանաւիք սրբութիւնն և մխիթարութիւնն :  
 Նա է եսկան պարաւառութիւն, այսինքն  
 դիսաւոր մասն շնորհակաբւթեան, զոր  
 Աստուած կը սպահանջէ մեղմէն մեր վրբու-  
 կութեան համար : Երբ կը խնդրեմք Աս-  
 տուծմէ այն ամենայն՝ ինչ որ մեզ հարկա-  
 ւոր է, այսու մեք կը խոստավանիմք, որ  
 նա է մեր Աստուածն, մեր Բարեբարն և  
 մեր Հայրն : Ինմանէ ունիմք մեր կախումն :  
 Ի նմանէ ստացած և մք ամենայն բանութիւ-  
 նաս կը սիրեմք իրբեւ Աղքիւր Բարութեան :  
 Նորա վերայ է մեր վատահութիւնը . Նորա  
 կատարելութիւններն կը փառաւորեմք ա-  
 զօնքով և մանաւանդ . Նորու ամենաքա-  
 րութիւննը :

**Աղօթքն է ձանասրարին ասաստածայինն**  
 շնորհքներն ստանալու : Մարդս ունի ան-  
 թիւ կարօտութիւններ, ինչպէս մարմնա-  
 կան, նոյնպէս և հոգեկան, այնպիսի կո-  
 րառութիւններ, զոր մեք ինքնին չեմք կո-

բող բաւարկանացնել։ Սուրբ Գիրքը կ'ու-  
սուցանէ մեղ, որ միայն Աստուծոց հոգին  
կարողէ վտիսել մեր օիրալ և զգացնել մեղ  
մեր մեղքը և շարժել զմեղ դէպ ՚ի թո-  
ղութիւն և փրկութիւն։ Նա միայն կա-  
րող է առջ մեղ զօրութիւն ընդդիմանալ  
ամենացն փորձութեանց։ Նա միայն կը  
տայ մեղ զօրութիւն Աստուծոց խօսքը  
հասկանալ և դործ դնել։ Նորա նախախ-  
նամութիւնն է, որ աճումն կը տայ մեր  
օգտաւէտ դործոց և կը հեռացնէ զմեղ  
ամեն կորստական ճանապարհէն։ Նա է որ  
կ'ուղղէ մեր ձեռաց դործքերը և կը յա-  
ջողէ մեր հոգացողութիւնները մեր կեանե-  
քը սղահպաննելու համար։ Աստուծ միշտ  
սղապատճառ է տալ այս ողորմութիւններն  
և կը խոստանայ տալ ամենուն, որք կը  
զգան այս ողորմութեան կարօտութիւնը  
եւ կը խնդրեն ՚ի նմանէ։ « Կարդասցես  
առ իս յաւուր նեղութեան քս, ես փրկե-  
ցից զքեղ և դու փառաւորեսցես զիս ո։  
Սադ. Խթ. 15. ա Խնդրեցէք և տացի ձեղ,  
հայցեցէք և գաջիք բաղսեցէք և բացցի  
ձեղո։ Մատ. է. 7. »

Ուրեմն չը կամենալ աղօթել կը նշա-  
նակէ չը կամենալ այն ամեն աստուծածային

ազորմութիւններն , որք ստած են մեզ ՚ի  
ձեռն Յիսուսի Քրիստոսի : Կը նշանակե-  
մուանալ , որ Հարկաւոր են նոքտ ինչպէս  
մարդոց հոգւոյն , նոյնավես եւ մարմնոյն :  
Առանց ազօթելու ևս մարդ կարող է մաս-  
նակից լինել այն ժամանակաւոր ողորմու-  
թեանն , զոր Աստուած կը սփռէ առ հա-  
սարակ բարիներու եւ չարերու վերայ .  
բայց կը զթիռի ամենէն երեւելի և թան-  
կագին սղղամութիւններէն , սցովնիքն հո-  
գեւորէն :

Աստուած սահմանեց ազօթքն ինչպէս  
Պայման իրմէն ողորմութիւն ստանալու :  
Աչ թէ այն պատճառաւ , որ նա չը գիտէ  
մեր հարկաւորութիւններն եւ կարօտ է  
մեր խնդրուածոց : ոչ , այլ այն պատճա-  
ռաւ սահմանեց : որ մեք ինքնին զգանիք  
մեր պիտոյքք : Աչ թէ մեք ինդիքքով Աս-  
տուած կը փոխէ իւր միարը աշխարհս  
կոռագիարելու համար . ոչ թէ մեք ազօթ-  
քով Աստուած նոր ընդունակ կը լինի մեզ  
բարութիւն առնելու և կամ կ'աւելացնե  
իւր բարութիւնը , ոչ , այլ այն պատճա-  
ռաւ սահմանեց ազօթքն ինչպէս պայման .  
որ մեք լաւ զգանիք նորա ողորմութեան  
կարեւորութիւնն եւ գործադրութիւնը :

Եթէ Աստուած միայն խնդրողաց կը տաց  
իւր հոգեւոր ողբամութիւններն , այս չը  
նշանակեր թէ պակաս է նորա բարու-  
թիւնը , կարողութիւնը եւ ճանաչողու-  
թիւնը , ոչ , այլ պատճառն այն է , որ  
խնդրազները միայն կը զգան Աստուծոյ ո-  
ղբամութեան հարկաւորութիւնը , կը ճա-  
նաչեն նորա շնորհաց գինը և ջերմեռան-  
դութեամբ կը ցանկան ստանալ և գործ  
դնել :

Ազօթքն է մեզ համար Փառաւոր ի-  
րաւոնք : Ազօթքով մեք իրաւունք կը  
տուանամբ մօտենալ Թագաւորին թագաւ-  
որաց , Արարջին ամենայն աշխարհի , խօ-  
սկ նորա հետ , ինչպէս մեր Հօր և Բա-  
րերարի հետ : Ազօթքն է մեզ համար  
Սրբութեան նանապարհ , որ կը հեռացնէ  
աշխարհայիններէն և կը տանի դէպ ՚ի հո-  
գեւորներն : Ազօթքով մեք կը ներկայա-  
նամբ Աստուծոյ , կը տեսնեմբ նորա կա-  
տարելութիւններն , և կը ստանամբ հե-  
ղութիւնն , որ ամենայն առաքինութեանց  
Հիմն է : Ազօթքով մեք կը զգամբ մեր  
ոչնչութիւնը Աստուծոյ առաջ և կիմա-  
նամբ մեր տկարութիւնը և անզօրութիւ-  
նը : Ազօթքն է մեզ համար հնարք միու-

Թարութեան տանջանաց և չարչարանաց  
մէջ։ Նա է մեզ համար հանգստութիւն,  
ինչպէս կ'ասէ Քրիստոս, «Եկայք առ իս  
ամենայն վաստակեալք և բեռնաւորք և  
եռ հանգուցից զձեղ»։ Մատ. ԺԱ. 29։  
Մի խօսքով՝ աղօթքն է միմիայն ճանա-  
նապարհ, որով մարդ առկաւին աշխար-  
հիս մէջ կարող է մօտենալ Աստուծոյ։  
Նա է կրօնի նպատակն և տուող գլուա-  
ւոր բարութեան։ Եթէ մարդոյ աղօթքն  
անպատուղ կը մնայ պատճառն այն է, որ  
մարդ չ'աղօթեր այնպէս, ինչպէս հարկն  
է։ «Խնդրէք և ոչ առնուք, վասն զի չո-  
րաշար խնդրէք»։ Յակ. Պ. 3։

Ուրեմն՝ մեր աղօթքն արժանաւոր լի-  
նելու համար պէսք է ունենաց այն զգա-  
ցողութիւններն և պայմաններն, ոք հար-  
կաւոր են աղօթքին։

Աղօթքը պէտք է առուի առ Հայր,  
առ Որդին և առ Հոգին Սուրբ, այն սպառ-  
ճառաւ, որ Աստուծո ունի ամեն հար-  
կաւոր կատարելութիւններ եւ կարող է  
մեզ լսել։ Նա է յախտենական անահե-  
ման Հոգի, որ կարող է լինիլ ամեն ժա-  
մանակ, ամեն մարդոյ մօտ, ճանաչել ամեն  
հարկաւորաւթիւն և լսել ամենայն աղօթք։

Նա է ամենաբարի , որ կարող է ունենալ  
գլխութիւն բոլոր մարդկանց վերայ : Նա  
է ամենակարող , որ կարող է լցնել բա-  
ւականացնել մեր կարօտութիւնը թէ հո-  
գեւոր՝ և թէ մարմնաւոր : Վերջապէս նա  
է ամենիմաստ , որ կը ճանաչէ թէ ինչ է  
հարկաւոր ամեն մարդոյ , գիտէ ժամա-  
նակը և օդնութեան ձեւը : Ուստի՝ Սուրբ  
Գիրքը կը հրամայէ Ճանաշել մի Աստուած ,  
Արարիչ Երկնի և Երկրի և ծառայել նր-  
մա : « Տեառն Աստուծոյ քում Երկիր-  
պագցես և զնա միայն պաշտեսցես Յառ.  
Դ . 10 :

Աղօթքը պէտք է լինի առ Քրիստո ,  
վասն զի նա մի է ընդ Հօր Աստուծոյ և  
շատ օրինակ կը տեսնեմք Աւետարանի  
մէջ , որ աղօթքն կ'ասուի առ Քրիստո :  
« Եւ քարկոծ առնեին զԱտեփաննոս , որ  
կարդայր և ասէր , Տէր Յիսուս . ընկալ  
զնոգի իմ : Գործ . է . 53 : « Զի ամենեւ-  
քեան պատուեսցեն զԱրդի , որպէս պատ-  
ուեն զշայրն ո : Յով . է , 23 :

Մեր աղօթքն առ Հայր պէտք է լինի  
Քրիստոսի անուամբ , այսինքն նորա ար-  
ժանաւորութեամբ և միջնորդութեամբ ,  
վասն զի նովաւ ստացանք Աստուծոյ աւ

ուաս ողօրմութիւնը : “ Զի նովաւ ունիմք զնուածումն երկորբին միով հոգւով առ Հայր ” : Եվես . Բ . 18 : “ Ասէ ցնա Յի տու , ես եմ Ճանապարհ , Ճշմարտու . Թիւն և կեանք , ոչ ոք գայ առ Հայր , եթէ ոչ ինեւ ” , Յով . ԺԴ . 6 : “ Ամէն , ամէն ասեմ ձեզ , զի զոր ինչ խնդրեցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ տացէ ձեզ ” : Յով . ԺԶ . 23 . Աղօթքով մեք կը յայտնեմք մեր հաւատոյ մեծ գործքը և Քրիստոսին կը տամք իւր արժանի պաշտօնը և ցոյց կը տամք մեր հեղութիւնը , որով եւ կը յայտնեմք թէ մեք անարժան եմք Աստուծոյ մօտենալու և ինքնին ստանալու այն ամենայն , ինչ որ կը խնդրեմք Աստուծմէ : Ուրեմն՝ այս աղօթքն Քրիստոսի անուամք է առաջին միջոց , որով Աստած կը լսէ մեզ :

**Աղօթքը պէտք է լինի բարի սրտով ,**  
յորմէ և կախուած են բոլոր զգացողութիւններն և պէտք է լինի ոչ թէ հարկադրութեամք և ճանձրութեամք , այլ ոգատութեամք և ուրախութեամք , որովհետեւ մեք կը կատարեմք մի միմիթարական պարտաւորութիւն : **Աղօթքը պէտք է լինի սիրով ,** որովհետեւ մեք կը մօտենամք Հօր

Աստուծոյ, որ կը սիրէ զմեղ և մեք եւս  
սպարտական եմք սիրել վնա ամեն բանէ  
առաւել, Ազօթքն պէտք է լինի ջերմե-  
ռանդութեամբ և ճշմարիտ ցանկութեամբ,  
որ ստանամք Աստուծմէ մեր խնդրուածքն  
Այս տեսակ աղօթքը ընդդէմ է մարդ-  
կանց կեղծաւորութեան և ուստ բարե-  
պաշտութեան, որք միայն չըթունքով կը  
պաշտեն զԱստուած և չունին ջերմեռան-  
դութիւն առ Աստուած։ Երբ կ'աղօթէմք,  
պէտք է մեր կողմէն եւս աշխատիմք գործ  
դնել այն միջոցներն, զոր Աստուած մեզ  
կը տայ, որպէս զի մեր գործքը և կեսնքը  
համաձայն լինին մեր աղօթքին։

Ազօթքն պէտք է լինի մեծ ուշադրու-  
թեամբ, վասն զի՞ մեք Աստուծոյ հետ կը  
խօսիմք։ Ազօթքը պէտք է լինի հնագան-  
դութեամբ և խոնարհութեամբ, ինչ վիճա-  
կի մէջ որ գտնուի մարդ։ « Հայր Խո-  
եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն,   
բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս  
դու »։ Մատ. 12. 39։ Ազօթքը պէտք է  
լինի պատուով եւ հեզութեամբ, ինչպէս  
կ'ասէ Դաւիթ մարգարէն։ « Օրհնեցէք  
և սազմոս ասացէք նմա, պատմեցէք զա-  
մենայն պրանչելիս նորա »։ Մատ. Ճ. 2.

Ազօթքը պէտք է լինի հաւատարմութեամբ,  
այսինքն անկասկած հաւատալով, որ Առ  
առածած չը նայելով մեր անարժանութեան  
անսպատճառ կը լսէ մեզ Քրիստոսի սիրոց  
համար, ինչպէս ինքն խոստացաւ Սուրբ  
Գրոց մէջ : “ Ապա թէ ոք ’ի ձէնջ իցէ նր-  
ւագեալ յիմաստութենէ, ինդրեսցէ յԱռ  
առածոց, որ տայն ամենայնի առատապէս  
և ոչ նախառէ և տացի նմա : Բայց խընդ-  
րեսցէ հաւատավք եւ մի երկմտեսցէ ” :  
Յակ. Ա . 5\_6 : Այս վատահութիւնը ընդ-  
դէմ չ'է հեզութեան և խոնարհութեան,  
վասն զի՞ հիմնուած չ'է մեր վերայ և մեր  
արժանաւորութեան վերայ, այլ Աստու-  
ծոց բարութեան վերայ եւ նորա Որդւոց  
արժանաւորութեան վերայ :

**Վ** երջապէս աղօթելու ժամանակ պէտք  
է շարժուած լինիմք Ճշմարիտ սիրով առ  
Աստուած և առ մարդ եւ ցանկամք ի-  
մաստութեան : Առանց այս պայմաններուն  
մեք կարող չ'եմք այնպիսի բան ինդրել,  
որ իստոք լինի Աստուծոյ, բարի ընկերին  
և համաձայն մեր փրկութեան : “ Յիսուս  
ամբարձ զազ իւր ’ի վեր և ասէ . Հայր,  
գոհանամ զքէն զի լուար ինձ ” : Յով.  
ԺԱ . 14 :

Աղօթքի Նիւթը մարդոց կամքէն կա-  
խուած չէ, վասն զի՞ մարդ կարող է մո-  
լուստիլ գոնազան ցանկութիւնց մէջ, և  
ինդքել այնալիսի բան, որ անպատճռու-  
թիւն լինի Աստռածութիւնն եւ վեառ  
մարդկային կոչման : Աստռածոց կամքը  
պէտք է ուղղիչ լինի մեր խնդիրներուն և  
ոչ մի բան պէտք չէ ինսգրեմք հակառակ  
նորա կամաց : “Եւ այն է համորձակու-  
թիւնն զոր ունիմք մեր առ նա, զի՞ զոր  
ինչ հացցեսցուք ըստ կամաց նորա, լոկ  
մեղ” : Ա. Յով. Ե. 14:

Որովհետեւ մեք այս աշխարհի մէջ  
ճանապարհորդ եմք, եւ կը քնակիմք առ-  
ժամանակ և ոչ թէ յախուեան, և պէտք  
է մահով անցնիմք այս աշխարհէն միւս  
աշխարհն, ուր կը սպառէ մեզ՝ երջա-  
նիկ կամ ապերջանիկ վիճակ մեր այս ոեզ  
արած գործոց համեմատ : Աւսոփի մեր  
խնդրուածոց առաջնին պէտք է լինի  
այն ողբրմութիւնն եւ շնորհքը, յորմէ  
կախուած է մեր փրկութիւնն և երջան-  
կութիւնն ապառնի կենաց մէջ, ինչպէս  
կ'ուստցանէ մեզ Քրիստոս . “Խնդրեցէք  
նախ զարքայութիւնն Աստռածոց եւ զար-  
դարութիւնն նորա և այդ ամենայն յաւել-

ցի ձեզ ։ Մատ . 2 . 33 : Խակ միւս ոլորտ  
մութիւններն , որք ներկայ կենաց կը  
սպատկանեին , պէտք է մեր խնդրուածոց  
մէջ երկրորդական լինին և այն եւս չու-  
փաւորութեամբ : Պէտք է խնդրել Աս-  
տուծոյ հովանաւորութիւնը մեր կենաց  
համար , վասն վի՛ շատ անդամ մեք չը գիւ-  
տեմք՝ թէ ի՞նչ է ամենէն լուն մեզ հա-  
մար : Մեր հաւատոր կը լուսաւորէ մեր  
միտքը և կը բարձրացնէ մեր հողին դէստ  
՚ի անմահական բարութիւններն : Աւե-  
տարանը կը ողատաւիրէ , որ մեք ճանո-  
սպարհորդ ճանաչնմք զմեզ այս աշխարհի  
մէջ : Աստուծոյ խոսաւումներն , որք միշտ  
հոգեւոր են և հոգեւոր բարութեան կը  
վերաբերին , պարզ կը յայտնեն մեզ՝ թէ  
ի՞նչ կամի Աստուծած , որ մեք խնդրեմք իր-  
մէն : Մեր Փրկչի տուած աղօթքը գեղե-  
ցիկ օրինակ է մեզ համար՝ թէ ի՞նչ եւ  
ի՞նչպէս պէտք է լինի մեր աղօթքն :

**Մարդ** պէտք է կրկնէ իւր աղօթքը ,  
երբ Աստուծած չը կատարեր նորա առաջին  
խնդրուածքը , մանաւանդ այն ժամանակ ,  
երբ նորա խնդրուածներն հոգեւոր են-  
“ Յուսով խնդրացեք , նեղութեան համ-  
բերեցէք , աղօթից առէս կացէք ” : Հորով .

ԺԲ. 12 : Քրիստոս տնիքաւ դատաւորի և  
բարեկամի առակներավ Երկու օրինակ ար-  
ւաւ մեզ աղօթքն կրկնելու համար : Ղուկ.  
ԺԱ. 5\_11 : — ԺԸ. 2\_9 :

Որովհետեւ աղօթքն է մեծ պարուա-  
ւարութիւնն և խրառութիւնը մեզ համար , այս  
պատճառաւ պէտք է լինի նա ամեն ժա-  
մանակ , ամեն պատահմանց մէջ : Անդա-  
դար մարդ պէտք է բարձրացնէ իւր սիր-  
ողն առ Աստուած , ինչպէս կ'ասէ Պօղոս  
Առաքեալն . « Անդադար աղօթս արա-  
բէք » . Ա . Թես . Ե . 17 : « Ամենայն ա-  
ղօթիւք և խնդրուածովք աղօթս առնել  
ամենայն ժամանակի հոգւով եւ ՚ի նոյն  
աքնեսջիք յամենայն ժուժկալութեամբ և  
խնդրուածովք » : Եփես . Զ . 18 : Անդա-  
դար աղօթելլ կարող չէ լինիլ ձայնով ,  
պատճառն որ՝ անդադար աղօթքն ոչ այլ  
ինչ է , եթէ ոչ չարժուան հոգւոյ առ . Աս-  
տուած : Անդադար աղօթելով՝ մարդ ցոյց  
կը տայ իւր շնորհակալութիւնն Աստուծոյ  
և կ'ընծայէ նմա իւր կեանքն եւ կը լինի  
Աստուծոյ աշաց առջեւ : Աս է խակ եւ  
Ճշմարիս աղօթքն առ Աստուած :

Մարդասիրութիւնը կը պահանջէ մեզ  
մէն աղօթել , ինչպէս մեզ համար , նոյն

սիս և մեր լնկերներու համար : Առոք  
Գիրքը նոյնն կ'ուսուցանէ մեզ : Քրիստոս  
Տէրունական աղօթքի մէջ կը պատուիրէ  
մեզ միմեանց համար աղօթել, նաև թըշ  
նամեաց համար : « Արեցէք զժշնամիտ  
ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի ա-  
րարէք ատելեաց ձերոց եւ աղօթս արա-  
րարէք ՚ի վերայ այնոցիկ, որք լիկեն զձեզ  
և հալածեն » : Մատ . Ե . 44 : « Եւ արդ՝  
աղաչեմ նախ քան զամենայն, առնել ա-  
ղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհու-  
թիւնս վասն ամենայն մարդկան » : Տիմ.  
Բ . 1 :



## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱԴՅԹՔ

ՀԵ՞ Ժամանակի իմաստուները սովորութիւն ունեին իրենց աշակերտաց տալմիքանի համառօտ խօսքեր , որոց մէջ կը պարունակուեին այն ամենակարեւոր բաներն , զոր մարդ սկզբ է որսներ այս աշխարհիս մէջ : Այսպէս եւս Քրիստոսի աշակերտաները խնդրեցին իրմէն ուսուցանել աղօթք , ինչպէս Յովհաննեսն ուսուցած էր իւր աշակերտաց : Քրիստոս տուաւնոցա այս կարծառօտ աղօթքն , որ կ'անուանի ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱԴՅԹՔ :

“ Հայր մեր որ յերկինս ես,  
ոռւրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկլի . զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր , և թող մեզ զպարտիս մեր , որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց . և մի՛ տանիր զմեզ՝ ի փորձութիւն . այլ վրկեա՛ ըզ-

մեզ՝ի չարէն . զի քո է արքա  
յութիւն և զօրութիւն եւ  
փառք յաւիտեանս . ամեն „ :

Բայց ՚ի Տէրունական աղօթքէն մարդ  
կարող է ունենալ և այլ աղօթքներ , իւր  
զմնազան գրութեան համեմատ , ինչպէս  
կը տեսնեմք Սուրբ Գրոց մէջ : Բայց ամեն  
աղօթք պէտք է Տէրունական աղօթքի հո  
գւով լինի , նորա պէս կարձառօտ և պարզ  
Տէրունական աղօթքը գերազանց է ամեն  
աղօթքներէ , որովհետեւ զայն տուած է  
մեր Տէր Յիսուս Քրիստոսն , և ոչ մի աղօթք  
կարող չեմք այնպէս վստահութեամբ ասել :

Տէրունական աղօթքը կը բաժանի եւ  
բեր մասն – Յառաջաբան , Խնդրուածք և  
Վերջաբան : Խնդրուածքներն կը բաժա  
նին վեց : Առաջին երեքն հոգեւոր են , որք  
կը վերաբերին Աստուծոց փառաց , մարդոց  
գլխաւոր բարութեանն և հոգեւոր կեանե  
քին . իսկ վերջին երեքն այն բաներուն կը  
վերաբերին , որք յատուկ մեզ հարկաւոր  
են մեր գլխաւոր բարութեանը հասնելու՝  
սյսինքն շափաւորութիւն աշխարհի վա  
յելութեանց մէջ , ներողութիւն ընկերին  
և աղաստութիւն ՚ի մեղաց :

Աղաստակին ՑԱՌԱՋԱԲԱՆԻ, որ կը սկսուի  
— Հայր մեր որ յերկինս ես, — Ե ծնանիլ  
մեր մէջ այն զգացողութիւններն, որով  
մեր աղօթքը հաճոյ լինի Աստուծոյ և մեր  
կարողանամք կատարեալ չերմեռանգու-  
թեամբ մատուցանել Աստուծոյ մեր վեց  
ինդրուտօնքը :

Յիսուս Քրիստոս իրաւունք առւաւ մեզ  
Հայր անսւանել զԱստուծուած, որ այս քայլ  
ցրու անուամբ ՚ի սկսով մեր աղօթքի ծր-  
նուի մեր մէջ որդիսական պատիւ առ-  
Հայր : Որովէս զի՞ մեր ինչովէս որդիք սի-  
րեմք այն ամենայն, ինչ որ փառք է մեր  
երկնաւոր Հօր համար, հնագանդիմք նո-  
րա կամաց եւ վասահութեամբ ապաւի-  
նիմք միայն նորա օգնութեանը :

Այս որդիսութիւնը մեք կը ստանամք  
հաւատով ՚ի Յիսուս Քրիստոս : Որովհե-  
տեւ առանց Քրիստոսի մեք համարձա-  
կութիւն չունիմք զԱստուծուած Հայր ան-  
ուանել . վասն զի՞ մեր մեղքով արժանա-  
ցած եմք նորու բարկութեանը և արդար  
պատժոյն : Հայր բառին վերայ աւելցնելով  
մեր՝ Քրիստոս կը պատահիրէ մեզ աղօթել  
ինչովէս մեզ համար, նոյնպէս եւ ամեն  
մարդոյ համար : Կամի ծնանել մեր մէջ

մարդասկզբան թեան եւ բարութեան դժայց-  
մունք, որ սցըսց օդտի համար եւս այնպէս  
վտուած լինիմք, ինչպէս մեր օդտի հա-  
մար և մեր բաղդասրութիւնը չը հիմ-  
նեմք այլոց ապաբազրութեան մերայ:

**Քաղաքառական Հայր մեր ասելին յետոց.**  
Կաւելցնէ որ յերկինս ես, ոչ թէ այն պատ-  
ճառաւ որ Աստուած մխայն երկինքն է,   
ոչ վասն զի Աստուած ամենաւթեք է. այլ այն  
պատճառաւ, որ աշխարհէս խիչ և բարձ-  
րացնէ մեր հոգին դէպի ի մեր երկնաւոր Հօր-  
մեծութիւնը, վետոքը և ամենակարողու-  
թիւնը, պուտքանէ մեր հոգին այնքան մեծ և  
բարձր պատուալ, ինչքան մեծ և բարձր է  
երկինքը երկրէս Երկնից երեսը կը տեսնեմք  
Աստուծոյ մեծութեան և փառաց երեւե-  
լի նշաններն. ինչպէս են երկնային լուսա-  
ւոր մարմններն, արեգակն, լուսին եւ  
ասաեղբ: Երկնիքի մէջ կը տեսնեմք հրեշտակ-  
ներն և Աստուծոյ հշմարիս պաշտողներն  
փառաւորուած և պատեռած: Նորա սիրով:  
**Այս մտածութիւնն է, որ կը խիչ մեր**  
սէրը և մեր մխարը աշխարհի կապակցու-  
թիւններէն եւ կը փառէ մեր հոգին այն  
երկնային փառաւոր և անանց երջանկու-  
թեան եռանդով. զոր պատրաստած է

մազ համար մեր երկնաւոր Հայրն . ուստի  
և կ'ասեմք . — Հայր մեր , որ յերկինս ես :

Առնաշտուն Խորբութեաքն է — Առքը եւ  
պիցի անոնն քո : Անոնն բառը Երբեմն կը  
նշանակէ զօրութիւնն , պատուիրանք , հնա-  
գանդութիւնն եւ ասոուածպաշտութիւնն :  
Այս նշանակութեամք գործ կ'ածուի մը  
կըբառութեան ժամանակ : Երբեմն կը նր-  
շանակէ նաւասարմութիւնն առ Աստուած:  
Այս նշանակութեամք կ'ասէ Գաւիրմ Գու-  
զիաթին . « Դու գաս ՚ի վերայ իմ՝ սրով  
և գեղարդեամք և ասպարաւ եւ ես գամ  
՚ի վերայ քս անաւամք Տեառն զօրութեանց  
ճակատուց Խորայելի » : Ա . Թագ . ԺԷ . 45:  
Բայց բառ մէծի մասին անոնն բառն կը  
նշանակէ Ասոուած և նորու կատարելու-  
թիւններն : Այս մոքավ գործ կ'ածուի  
շատ ուշ Առքը Գրոց մէջ — Կոչել զանոնն  
Տեառն : Այս վերջին նշանակութեամք  
գործ կ'ածուի եւ Տէրունական աղօթքի  
մէջ :

Առքը բառն Երբեմն կը նշանակէ սուրբ  
առնել , ինչպէս կ'ասէ . « Հոգին սրբէ  
զմարդ » : Երբեմն կը նշանակէ սուրբ պա-  
հել : Այս մոքավ կ'ասուի . — « Սրբեան զօր  
շաքաթօռն » : Երբեմն կը նշանակէ նամա-

չեց և պատուել ինչպէս սուրբ : Խնդրել  
 Աստուծմէ , որ նորա անունը սուրբ լինի ,  
 կը նշանակէ խնդրել իրմէն շնորհք ճանա-  
 չել զինքն , ունենալ ճշմարիտ դատավո-  
 թիւն նորա կատարելութեսնց վերայ ,  
 փառաւորել և ծառայել նմա ինչպէս ար-  
 ժանէ , նորագել մեր մէջ նորա պատկերը  
 և նմանութիւնը և ընծայել նմա մեր հո-  
 գւոյ բոլոր զօրութիւնները : Այնպէս որ  
 նորա անունը անպատիւ չը լինի մեր պատ-  
 ճառաւ , այլ գոյլուի եւ փուռաւորուի  
 մեղմով և մեր կեանիքով : Այս խնդրուած-  
 քը պէտք է առնեմք մեք ինչպէս նորա  
 փառաց և սիրոյ համար , նոյնպէս և մեր  
 բոլոր ընկերներու փրկութեան համար :  
 Եթէ մեք այս խնդրուածքը կ'առնեմք  
 ջերմեռանդութետմք՝ պէտք է մեր կողմէն  
 եւս գործ ածեմք զԱստուած ճանաչելու  
 համար մեզ տուած բոլոր հնարքները ,  
 հնազանդ լինիմք նորա խօսքին եւ նորա  
 Սուրբ Հոգւոյ ազդեցութեանը , աշխա-  
 տիմք հաղորդել մարդկանց մեր լոյսը եւ  
 մեր զգացողութիւնները , ոչ թէ միայն  
 խօսքով , այլ և մեր բոլոր կեանիքով : Եթէ  
 մեք սուրբ չը պահեմք Աստուծոյ անունը ,  
 նա իմքն Սուրբ կը պահէ իւր անունն զոր-

Հուրելի և ահալի ձեւով, այն է անհնաշ զանդներն և խստասիրտներն պատմելով, ինչպէս պատմեց զՓարուռն . “Եւ վասն սյնօրիկ պահեցար, զի՞ քեզ ցուցից ըստ զօրութիւն իմ եւ զի պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր” : Ելից . թ . 16 :

**Երկրորդ Խնդրուածքն է – Եկեսցէ արքայութիւնն քռ :** Ասելով Եկեսցէ արքայութիւնն քռ, ողէոք չէ իմանամք Աստուծոց արքայութիւնը կամ Թագաւորութիւնը աշխարհի վերայ, որ կը կառավավորութիւնը նախախնամութեամք : Այս նախախնամութեան Թագաւորութեան համար կարելի չէ ասել – Եկեսցէ արքայութիւնն քռ. վասն զի, Արտօրչի Թագաւորութիւնն իւր արարածոց վերայ միշտ կայ և կատարեալ է թէ ճանաչեն և հնագանդին նմա իրենց աղատութեամք և թէ չը ճանաչեն : Այլ ասելով՝ Եկեսցէ արքայութիւնն քռ, ողէոք է հասկանալ նորա բարոյական թագաւորութիւնն, նորա ջնորհաց արքայութիւնն, զոր Աստուծած ունի իւր ճշմարիտ պաշտողաց վերայ Յիսուսիւ Քրիստոսիւ և որ Աւետարանի մէջ կ'անուանէ Արքայութիւնն Աստուծոյ, Արքայութիւնն երկնից :

**Այս արքայութիւնը սկսաւ Քրիստոս**

նեական կրօնի հաստատութեամբ , երբ  
մարդիկ լուսաւորուեցան Աւետարանաւ  
և հնագանդեցան Քրիստոսի , նովաւ ե-  
կան դէպ ՚ի ճանաչողութիւն և ծառայու-  
թիւն ճշմարիտ Աստուծաց : Այս արքա-  
յութիւնը կը պահանջէ կամառը հնա-  
զանդութիւն , բարեհան ազգ , եւ սէր հր-  
պատակներէն : Բայց երկու արքելք կան,  
որք կը գժուարացնեն այս արքայութեան  
գալուստը և տարածումն : Այս արքելք-  
ներն են – տգիտութիւն մարդկան և չարու-  
թիւն : Ուստի՝ ասելով Եկեղէ արքայու-  
թիւն քո մեք կը խնդրեմք Աստուծմէ , որ  
հեռացնէ այս արքելքները և աւելի մօ-  
տեցնէ մեղ Աւետարանի պարզ ճանաչո-  
ղութեան և տայ մեղ շնորհք հնագան-  
դիլ նմա , որ թագաւորէ մեք սրտի վերաց  
սիրով , այնպէս որ՝ մեք գառնալով նորա  
հաւատարիմ՝ կարողոնամք հասնիլ փա-  
ռաւոր անմահութեան , ուր կը կոչէ ըլ-  
մեղ իւր Որդւով :

**Եթէ մեք ջերմեռանդութեամբ կ'ա-**  
**սեմք այս խնդրուածքը՝ պէտք է աշխա-**  
**տիմք հեռանալ ամեն բանէ , ինչ որ կա-**  
**րովէ գժուարացնել և ուշացնել Աստու-**  
**ծաց թագաւորութեան գալուստն թէ մեք**

մէջ և թէ այլոց : Ելմէ չերմեռանդ է մեր  
խնդրուածքը՝ մէք կը ջանամք գործ դնել  
ամեն հնարք , որ կարող է առաջացնել  
սյա թագաւորութիւնը և կը պատուեմք  
ամեն բանով մէք Փրկչի Աւետարանն և  
նորա կամքն ասելով – Եղիցին կամք քո :

**Ասելով՝** այս ԵՐԵՌԴԻ ԽՆԴՐՈՒԱԾՔԸ –  
Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և, յերկի-  
րի՝ մէք կը խնդրեմք Աստուծմէ , որ տայ  
մեզ շնորհը ամեն բանով հնազանդիլ նո-  
րա կամաց , թէ չարչարանօք և թէ համ-  
բերութեամք : Կը խնդրեմք Աստուծմէ ,  
որ տայ մեզ շնորհը հնազանդիլ նմա , պա-  
հել նորա պատուիրանքներն եւ ընծայել  
նմա մեր կեանքը ամեն պատահմանց մէջ :  
Այս խննարհութիւնն , որ երրորդ խըն-  
դրուածքի նիւթն է , պէտք է լինի չեր-  
մեռանդ սրտով , ընդհանուր , հաստատ ,  
և ուրախութեամք եւ չերմեռանդու-  
թեամք , ինչպէս ունին հրեշտակներն Աս-  
տուծոյ համար երկնքի մէջ , զորս օրինակ կը  
տայ մեզ Քրիստոս Տէրունական աղօթից  
մէջ ասելով՝ որպէս յերկինս :

**Հրեշտակաց** հնազանդութիւնը ար-  
ուած է մեզ օրինակ , որ մէք հնազանդու-  
թեամք աշխատիմք նմանիլ նոցա կատա-

բեալ հնազանդութեանն , որով կը հասա-  
աստուի մարդկութեան մէջ կարդ , հա-  
ւատարմութիւն , երջանկութիւն և այնու-  
կ'առնումք այն մեծ երջանկութեան ճա-  
շակը , զոր Աստուած պատրաստած է խր-  
կամքը կատարողաց համար : Այն ժամա-  
նակ մեք կարող եմք կատարել Աստուծոյ  
կամքը , երբ հեռանամք մեր կամքէն եւ  
միայն նորա կամքը ճանաչեմք արդար , բա-  
րի , կատարեալ , այն բարի կամքը , որ կը  
տայ մեզ երջանկութիւն և սորա համար  
կը խնդրեմք Աստուծմէ լուսաւորել զմեզ  
խր գեղեցիկ պատուիրաններով , որ մեք  
կարողանամք կատարելապէս իրեն հնա-  
զանդիլ :

Քրիստոս՝ բարձրացնելով մեր միաբը  
և մեր հոգին գէալ 'ի մարդոց գլխաւոր եր-  
ջանկութիւնն , որ է Աստուած , կը պատ-  
ուիրէ մեզ խնդրել այն ամենայն , ինչ որ  
հարկաւոր է այս գլխաւոր երջանկութեա-  
նը հասնելու համար : Եւ որամբնետեւ՝ ոչ  
ինչ այնքան արգելք չ'է , ինչքան աշխար-  
հիս անշափաւոր հոգսերն և հոգին հա-  
րսաւութեան և վայելքութեան աշխարհի ,  
այս պատճառաւ Քրիստոս այս արգելք-  
ները հեռացնելու համար կը պատուիրէ

խնդրել Աստուծմէ ամենօրեայ հաց՝ ասելով՝ Զհաց մեր հաճազորդ՝ տուր մեզ այսը՝ որ է ԶՈՐՅՈՒԹԻՒՆԴՔ :

**Ա**յս խնդրած հացը կը բավանդակէ իւր մէջ այն ամենայն, ինչ որ հարկաւոր է մեր կեանքին ամեն դրութեան մէջ՝ Քրիստոս այսու կ'ուստւցանէ մեղ, որ մեք պէտք չէ ցանկամք և խնդրեմք մեր պիտոյքին աւելի հարստութիւն : « Այլ ունիմք կերակուր եւ հանդերձա՛ այնու շատասցուք ու Ա. Տիմ . 2. 8 : Աստուծմէ կը տայ մեղ օրինաւոր ճանապարհաւ հարստութիւն, բայց մարդ պէտք չ'է ինքն իւր հոգին մաշէ հարստութեան ցանկութեամբ :

**Ա**սելով՝ Տնար մեզ՝ Քրիստոս մեր միան կը բերէ, որ ամեն բարութեանց առաջին պատճառն Աստուծմէ է : Նա կը տայ մեղ ամեն բարութիւն, ինչ որ մեք ինքնին չեմք կարող ստանալ, ոչ մեր հոգալով, ոչ մեր աշխատանքով, առանց նորա, ինչ որ հարկաւոր է մեղ այս աշխարհի մէջ կենալու կամ ապրելու համար : « Եթէ ոչ Տէր շնէ զտուն, ՚ինանիր վառակին շինողք նորա : Եթէ ոչ Տէր պահէ զբաղաբ՝ ընդունայն տքնին պահապահք

նորա „: Սաղ. ձիջ. 1—2: “Ես անկեցի,  
Ապօզոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց:  
Այսուհետեւ ոչ այն որ ինչ է, որ արե-  
կեացն, և ոչ այն՝ որ ջուրն ետ, այլ որ  
աճեցոյցն Աստուած” : Ա. Կոլն. Գ.  
6—7:

**Այս** հացք ոչ թէ միայն աղքատներն  
և չքաւորները պէտք է խնդրեն, այլ եւ  
հարուսաները, վասն զի՞ Աստուածոց Նա-  
խախնամութիւնն է, որ կը տայ հարրա-  
տութիւնն և երբ կամենայ կը խլէ : Նա  
կը տայ կեանք, առողջութիւն, որ ուրա-  
խանամք այս տուած կեանիքով. Խմաստու-  
թիւն, որ բարութեամք անցնեմք մեր  
կեանիքը : “Եւ ասէ ցնոսա, տեսէք և ըզ-  
գոշ լերուք յամենայն ագահութենէ, զի՞  
ոչ եթէ ՚ի մթերից ընչեց ուրուք իցեն  
կեանիք նորա „: Ղոկ. ԺԲ. 15:

**Որովհետեւ մարդոց կեանիքը խւր կամ-**  
**քէն չէ կախուած,** ուրեմն՝ պէտք է որ  
Աստուած տայ առողջութիւնն, հանդրա-  
տութիւնն և չափաւորութիւնն, որ մեք կա-  
րողանամք ուրախ անցնել մեր կեանիքը :

**Մեք որ կը խնդրեմք մեր հացն Աստուա-**  
**ծէ,** չեմք խնդրեր, որ այս հացը մեզ տայ  
անընդմիջապէս հրաշքով կամ սքանչելի

ձեւով, այլ կը խնդրեմք, որ օրհնե՛ նտիւր Նախախնամութեամբ ամեն մեր բընտկան եւ օրինաւոր ճանապարհներն, որով կամիմք պահել մեր կեանքը, ինչպէս են աշխատանք, կարգ, հոգի ողովմութեան և սիրոյ: Քրիստոս կ'ասէ մեզ. “Տուք և տացի ձեզ. չափ բարւոք, թաթաղուն, շարժուն, զեղուն՝ տացին ՚ի գոգս ձեր, նովին չափով, որով չափէք, չափեացի ձեզ” Ղուկ. ջ. 38:

**Ասելով զհաց մեր՝ կամի Քրիստոս մեզ պարզ ուսուցանել,** որ այս հացը պէտք է լինի մերը, այսինքն մեր օրինաւոր աշխատանքով, մեր ջանքով եւ մեր արդարութեամբ ճարած, առանց վեասելու և զրկելու դաշլ. ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն: “Քանիզի մինչ առ ձեզ էաք՝ զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել եւ կերիցէ մի: Արդ՝ լսեմք զոմանց ՚ի ձէնչ, թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալ հետսպըքիր շըջին, այնպիսեացն պատուէր տամք և տղաջեմք ՚ի Տէր Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեացեն եւ իւրեանց հաց կերիցեն”:  
Ա. Թես. Գ. 10—12:

**Ասելով** հաց հանարազորդ՝ Քրիստոս  
 մեղ կը յայտնէ , որ ինչպէս օրական մշա-  
 կը իւր աշխատանքով կը ստանայ իւր օ-  
 րական վարձը , նոյնպէս եւ ամեն մարդ  
 պէտք է խնդրէ Աստուծմէ ամենօրեայ հաց  
 և կը ստանայ , քանի որ Աստուծոյ ծառա-  
 յութեան մէջ է : Ինչպէս Եբրայեցիք ա-  
 նապատի մէջ կը ստանային ամեն օր մա-  
 նանայ , որքան հարկաւոր էր ամեն տան  
 կերակրուելու . , այն չափաւորութեամբ  
 պէտք է լինի մեր խնդրած հացն : Միայն  
 շաբաթ օրն Եբրայեցիք չեն հաւաքեր մա-  
 նանայ : Մեր Փրկիչն պատուիրելով՝ որ  
 ամենօրեայ հաց խնդրեմք , կը պատուիրէ  
 միանգամայն , որ այս խնդրուածքով իմա-  
 նամք որ ամեն օր կախումն ունիմք Աս-  
 տուծմէ , ամեն օր պարտական եմք չնոր-  
 հակալ լինիլ նորա սուրած ողբրմութիւն-  
 ներէն և չնորհքներէն : Կամի մեր միաքը  
 բերել մեր կենաց սնասուգութիւնը , որ  
 ոչ մի մարդ կարող չէ հաստատ յուսալ  
 թէ կապրի արդեօք վազուան օրն՝ թէ ոչ-  
 կամի հեռացնել զմեղ մեր այս կենաց ա-  
 պագայ անչափաւոր հոգերէն , որք ՚ի զուր  
 կը մաշեն մարդոյ հոգին : Արդարեւ կան  
 այլ և այլ հարկաւոր և օրինաւոր հոգսեր ,

որք հետեւանք են մարդոյ նախահոգութեանց, օրինակի համար . Երկրագործը կը ցանէ, վաճառականը ապրանք կը պատրաստէ : Այսպիսի հոգսերը օրինաւոր են, եթէ ունենան իրենց մէջ չափաւորութիւն եւ համաձայն լինին Աստուծոյ կամաց : Այն հոգսերէն Քրիստոս զմեղ կրզքուշացրնէ, որք կը վերաբերին հեռու ժամանակներու և ծնունդ են ագահութեան և աշխարհային վայելքասիրութեան և որոց հասնելու համար գործ կը դրուին չար հնարքներ : “ Մի այսուհետեւ հոգայցէք վասն վաղուին, զի վաղիւն վասն իւր հոգասցի, շատ է աւուրն չար իւր ” : Մատ. 2. 34 :

Մեր Փրկիչն ուսուցանելով մեզ այս խնդրուածքով, որ խնդրեմք մեր կենաց ամենահարկաւոր պիտոյքը՝ կ'ուսուցանէ՛ միանդամայն չափաւորութիւն և հեռանալ աշխարհային վայելքասիրութենէ : Եւ երբ մարդ կը հասնի այս երջանիկ դրութեան, որ ամեն բան Աստուծմէ կը լսալիասէ եւ բաւական կը համարի, ինչ որ Աստուծած օրուան մէջ կը տայ, այն ժամանակ աղաստութեամք կը բարձրացնէ իւր սիրան առ Աստուծած և կ'ընծայէ նմա ա-

**ԱԵԼՈՎԸ** — Թող մեզ զարդարիս մեր:

**ԱԱԵԼՈՎԸ** — Թոնի մեզ զարդարիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապահաց — որ է հանգերորդ Խնդրուածաբ, մեք կը խնդրեմք Աստուծմէ, որ մեզ չը պատմէ մեր մեղաց համեմատ : Կը խոստովանիսք մի և նոյն ժամանակ, որ մեք չ'եմք կտրող մասնակից լինիլ նորա ողորմութեան, եթէ չը թողումք մեր պարտապահաց պարտքը, որք զմեզ վշտացուցած և նեղած են : Ամեն մարդ պէտք է խնդրէ այս թողութիւնը Աստուծմէ, որովհետեւ ամենքս մեղաւոր եմք Աստուծոյ առաջ : Նա և Աստուծոյ որդիներն, թէպէտ և հաշտուած են եւ արդարացած Քրիստոսիւ, բայց նոքա եւս պէտք է նոյնապէս խնդրեն թողութիւն, ոչ թէ միայն իրենց մեղքը միոք բերելու, հեղութեան մէջ մնալու և ճանաչելու համար, որ վրկուած են Աստուծոյ ողորմութեամք, այլ և այն պատճառաւ, որ նոքա եւս այլոց պէս կարող են շատ անգամ մեղաց մէջ ընկնիլ : Այս թողութիւնը ստանալու համար պէտք է խնդրեմք Աստուծոյ օգնութիւնը Քրիստոսի անունով, ճշմարիտ հաւատով եւ ջերմեռանդն ապաշխարութեամք :

Փրկիչն յատուկ մեղ կ'ուսուցանէ  
 այս աղօթքով, որ ինչպէս մեք կամիմք,  
 որ Աստուած մեղ թողութիւն տայ. նոյն  
 պէս և մեք սլէտք է թողութիւն տամք  
 այլոց: Այս պատուիրանքը արդար է, կա-  
 տարեալ է և համաձայն է տրդարութեան  
 և սիրոյ: Մեք աւելի պարտաւոր եմք մի-  
 մեանց յանցանքն թողուլ քան թէ Աստ-  
 ուած մերը, որովհետեւ մեր անհնազան-  
 գութիւնը անթիւ է և տւելի մեծ Առ-  
 առւծոյ առաջ, քան այլ մարդկանցը մեր  
 առաջ և մանաւանդ որ շատ անգամ մեք  
 իմքնին պատճառ եմք այլոց յանցաւորու-  
 թեան: Մեծ կուրութիւն է ինդրել Աս-  
 տուծմէ ողօրմռութիւն և թողութիւն մեր  
 մեղաց համար և մի և նոյն ժամանակ ան-  
 ողօրմ եւ խատասիրտ լինիլ մեր եղբարց  
 գէմ և ըսթողուլ նոցա յանցանքն: Քրիս-  
 տոս այս գեղեցիկ առակով օրինակ կը տայ  
 մեղ. “Վասն այսորիկ նմանեցաւ աբքա-  
 յութիւն երկնից առն թագտւորի, որ կա-  
 մեցաւ համար առնուլ ՚ի մէջ ծառայից  
 իւրաց: Եւ իբրեւ սկսաւ առնուլ մատու-  
 ցաւ առ նա պարապան մի բիւր քան-  
 քարոյ: Իբրեւ ոչ ունէր հատուցանել,  
 հրամայեաց զնա վաճառել աէր նորա ըդ

կին նորա և զորդիս նորա և զամենայն որ  
 ինչ և ունիցի՝ և հատուցանել։ Եւ ան-  
 կեալ ծառայն երկիրպագանէր նմա՝ և ա-  
 սէր։ Երկայնամիտ լեր առ իս և զամենայն  
 հատուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային  
 այնորիկ՝ եւ արձակեաց զնա : Եւ ելեալ  
 ծառայն և եդիս զմի ՚ի ծառայակցաց իւ-  
 րոց, որ պարտ էր նմա հարիւր դահեկան։  
 և կալեալ զնա խեղդէր զնա և ասէր։ հա-  
 տոն ինձ զոր պարտիս։ Արդ անկեալ ծա-  
 ռայակցին՝ առ ստո նորա աղաջէր զնա և  
 ասէր։ Երկայնամիտ լեր առ իս եւ հա-  
 տուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր, այլ ը-  
 գաւ արկ զնա ՚ի բանտ, մինչեւ հատուց-  
 ի զպարտան։ Իբրեւ տեսին ծառայա-  
 կիցքն նորա որ ինչ եղեւն տրտմեցան յոյժ  
 և անկեալ ցուցին աեասն իւրեանց զա-  
 մենայն որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց  
 զնա տէրն իւր և ասէ՝ Ծառայ չար, զա-  
 մենայն զպարտան թողի քեզ վասն զի ա-  
 զաջեցեր զիս։ Իսկ արդ՝ ոչ էր պարտ և  
 քեզ՝ ողորմիլ ծառայակցին քում, որպէս  
 և ես քեզ սղորմեցի։ Եւ բարկացեալ տէ-  
 րըն նորա մատնեաց զնա դահճին, մինչեւ  
 հատուցի զամենայն զպարտան։ Նոյնպէս  
 և Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ,

Եթէ ոչ թռղուցուք իւրաքանչիւր եղբօր  
իւրում ՚ի սրտէ ձեր զյանցանա նոցա ու ։  
Մաս . Ժ. 23—35 :

Այս առակը պարզ մեկնութիւն է  
հիմնգերորդ խնդրուածոց , որոց մէջ ուրիշ  
ներու մեղքը մեր առաջն է դրուած իր-  
քեւ պարտք : Ով որ այս աղօթքը կ'ասէ  
առանց թռղնելու այլոց յանցանքը , նա  
յնքն իրեն հակառակ է : Արտիհետեւ ա-  
ռելով — թռող մեզ , մեք ոչ թէ միայն մեր  
անձին համար կը խնդրեմք , այլ և ամեւ-  
նուն համար , որոց մէջ են ուրեմն և մեր  
պարտապաններն : Աստուած թռղութիւն  
ըստար ոյն մարդկանց , որք իրենց եղբարց  
յանցանքը չ'են թռղուր : Ասելով այս ա-  
ղօթքը մեք ոչ թէ միայն կը պարտաւորիմք  
թռղութիւն տալ այլոց , այլ և կը պար-  
տաւորիմք այնքան անգամ թռղութիւն  
տալ , որքան կամիմք , որ Աստուած թռ-  
ղութիւն տայ մեր յանցանաց : Արտիհետեւ  
մեք կը ցանկամք , որ Աստուած ներէ մեք  
բոլոր մեղքերը և յանցանքները . ուրեմն  
մեք ևս պէսք է ծածկեմք մեք սիրով այ-  
լոց մեղքը և յանցանքը : Պէտք է ներեմք  
մինչեւ ցեօթանանանելին եօթն անգամ ,  
այսինքն անթիւ , ինչպէս կ'ասէ Քրիստոս .

“ Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և  
ասէ . Տէր , քանիցս անդամ եթէ մեղիցէ  
ինձ եղայր իմ եւ թողից նմա , մինչեւ  
ցեօթն անդամ : Ասէ յնա Յիսուս , ոչ ա-  
սեմ քեզ թէ մինչեւ ցեօթն անդամ . այլ  
մինչեւ ցեօթանասնեկին եօթն անդամ ” :  
Մատ . ԺԷ . 21—22 :

Ինչպէս կամիմք , որ Աստուած թռ  
զութիւն տայ մեղ կաստարելապէս , ոչ  
թէ միայն պատմէն աղասելով՝ այլ և  
կրկին տարով մեղ իւր սղորմութիւնն եւ  
սէրը , նոյնպէս եւ ամենայն Քրիստոնեաց  
ովէտք է թողու իւր պարտապանի յան-  
ցանքը և կրկին սիրէ զնա և այսպէս կա-  
տարէ իւր մարդասիրութեան պարտքը :

Վեջերուն ԽՆԴՐԻԱԾՔՆ է – Ես մի՛  
տանիր զմեզ ’ի փորձութիւն , այս փրկեա  
զմեզ ’ի չարէն : Ասելով – Մի՛ տանիր զմեզ  
’ի փորձութիւն – սքէտք է իմանալ , որ կաց  
երկու տեսակ փորձութիւն : Մի փորձու-  
թիւնը կը տայ մեղ Աստուած , որ երեւ-  
ցընէ մեր սէրը , մեր հաւատը եւ մեր  
համբերութիւնը այլ մարդկանց : Այս  
փորձութեամբ կը փորձուէին առաքինք  
եւ աստուածապաշտ մարդիկ , որ նոյա  
հաւատը , սէրը և համբերութիւնը օրի-

նակ դառնայ սոյրոց : Այսպէս փորձուեցաւ Յովակի և օրինակ դարձաւ Ողջախոհութեան : Այսպէս փորձուեցաւ Յովլեւ անուանեցաւ Հայր համբերութեան : Իսկ միւս փորձութիւնն է բոլորովին հակառակ Աստուծոց կամաց և կը տանի դէպ ՚ի մեղքը : Առաջին փորձութիւնը կը գայ մեղ Աստուծմէ, որ կամի փորձել մեր խոնարհութիւնը, մեր հաւատը, մեր սէրը և մեր համբերութիւնը, երբեմն բաղդաւորութեան մէջ և երբեմն ապաբաշդութեան, երբեմն զանազան պատահամանց մէջ և երբեմն կոչելով զմեղ, որ մեք մեր անձնապահութեամբ կատարեմք մեր մեծ պարաւաւորութիւնն առ Աստուծ և առ մարդ : Վերջապէս Աստուծած տալով մարդոցն անձնիշխանութիւն՝ կը համբերէ և այն փորձութեանց, որ յառաջ կը գան, ոչ թէ Աստուծոց կամքէն, այլ մեր անձնիշխանութեան չարաշար դործածութենէն և մեր վիճութեան թշնամիէն սատանայէն . ինչպէս կ'ասէ Յակոբոս Առաքեալն . “ իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոցն ցանեկութեանց ձգեալ և պատրեսլ ” : Յակ . Ա . 14 :

**Թօպէտ մէք կ'ասեմք – Մի՛ տանիք**

զմեզ 'ի վորձութիւնն – բայց սյուռ պէտք  
չէ հասկանալ, թէ Աստուած է տանող  
գեղ ՚ի մեղքը կամ վորձութիւնը, « Մի  
որ որ ՚ի վորձութեան իցէ, ասիցէ, թէ  
յԱստուծոյ վորձիմ, զի Աստուած ան  
վորձ է չարաց, վորձէ նա՝ և ոչ զար » :  
Յակ. Ա. 13 : Ընդհակառակն՝ Աստուած  
միշտ կամի հեռացնել զմեղ վորձութենել  
խղճմանքի ձայնով և իւր սուրբ պատ  
ուիրանքներով : Մի՛ տանիր զմեզ 'ի վոր  
ձութիւնն ասելով՝ պէտք է հասկանալ այն  
պէս, ինչպէս արժան է Աստուծոյ բնու  
թեանն և նորա կամսցը, որ միշտ սուրբ  
է, բարի է և արդար առ մարդն : Աս  
տուծոյ համբերութիւնը, Աստուծոյ մաս  
նեն զմարդ իւր անձնիշխան կամաց եւ  
մարդոյ անձնիշխանութեան չարաչար գոր  
ծածութիւնը Սուրբ Գրոց մէջ տեղ տեղ  
կ'ասուի – Խասացոց Աստուած, մաս  
նեաց Աստուած և այն : « Եւ խասացոց  
Տէր զսիրան Փարաւոնի և ոչ լուաւ նո  
ցա, որպէս եւ ասաց Տէր ցՄովսէս » :  
Ելից . Թ. 12 : « Խօսեցաւ Տէր ընդ  
Մովսիսի և ասէ, մնւտ առ Փարաւոն,  
զի ես խասացուցի զսիրա նորա և զսիրա  
ծառայից նորա, զի կարդաւ եկեսցեն նը»

շանքս ՚ի վերայ նորա ՚՚ : Եվից . ֆ . 1 :  
Այս խօսքով պէտք է խմանամք , որ  
Աստուած կը համբերէ այս աշխարհի մէջ  
այն խստութեանն ու թշնամութեանը , որ  
մարդ կ'առնէ ընդգէմ Աստուծոյ :

Ասելալ - Մի՛ տանիք զմեզ ՚ի վոր-  
ձութիւն - չեմք խնդրեր , որ փորձանաց  
մէջ չը լինիմք , որտիշեաեւ ստեղծուած  
եմք ազատ և անձնիշխան և կոչուած եմք  
բարին ջարէն ընտրելու՝ այս փորձութեամբ  
ի աշխարհի մէջ : Չեմք խնդրեր , որ Աս-  
տուած հանէ զմեզ փորձութենէ և յաղ-  
թող առնէ զմեզ փորձաւթեանց՝ առանց  
մեր գործակցութեան և աշխատութեան ,  
վասն զի՞ Աստուած ինքն կամի , որ մէք  
գործակից լինիմք իրեն . “ Զի Աստուծոյ  
գործակից եմք ո , կ'ասէ Պօղոս Առա-  
քեալն . Ա . Կորճ . Գ . 9 : Ա. Ալ կը խընդ-  
րեմք Աստուծմէ , որ յաճախ չը ասյ մեղ  
փորձութիւններ և մեր կարսղութենէն ՚ի  
վեր : Եւ եթէ կամի տալ այնպիսի փոր-  
ձանքներ , չը թողու զմեզ մեր տկարու-  
թեան յուսով , այլ ասյ ողօրմութիւն և  
շնորհը , որ կարողանամք կրել այն փոր-  
ձանքները եւ այսու փառաւորուի Աս-  
տուծոյ անունը և մէք արժանանամք նորա

փրկութեանն : Այս յուսացած սղորմութիւնը կը սաանամք Աստուծմէ , եթէ խնդրեմք բարի եւ հաւատարիմ սրտով . ինչպէս կ'ասէ Պօղոս Առաքեալն . “ Փորձութիւն ՚ի ձեր վերայ ոչ է եկեալ բաց ՚ի մարդկանէ , այլ հաւատարիմ է Ասուած , որ ոչ արկցէ զձեզ ՚ի փորձութիւն առաւելքան զկար ձեր . այլ արասցէ ընդ փորձութեանն եւ զելն , զի համբերել կարասջիք ” : Ա . Կորն . Ժ . 13 :

Այսպէս ուրեմն՝ մեր փորձութեան մէջ մեր յօյն Աստուծոյ վերայ դնելով՝ կը յաւելումք – Այս փրկեա զմեզ ՚ի չարէն – այսինքն այն չար հոգիէն , որ փորձելով կը տանի զմեզ դէպ ՚ի չարութիւն : Կը խնդրեմք Աստուծմէ , որ հանէ զմեզ մեզ զաց իշխանութենէն , որ Սուրբ Գրոց մէջ կ'անուանի զօրութիւն սատանայի . միշտ ազատէ զմեզ մեր փրկութեան թշնամիէն , երբ մեր ապաբազրութիւն կ'ընկնիսք նորա որսգայթի մէջ : Կը խնդրեմք որ Աստուծած տաց մեզ կեանք և զօրութիւն ազատուիլ մեր մէղքէն և դառնալ նորա հաւատարիմ պաշտօնեայ , ինչպէս պարտական եմք :

Այս խնդրուածքը – Այս փրկեա՛ զմեզ ՚ի չարէն – առաջին խնդրուածոց հետեւ

ւանքն է : Եթէ չը խնդրեմք աղատուիլ և  
փրկուիլ այս թշնամու ձեռքէն , կը նշա-  
նակէ որ ջերմեռանդութեամբ չեմք խրնդ-  
րած մեղաց թողութիւն և տակաւին ան-  
զեղջ եմք մեր չարութեան մէջ : Անպտուղ-  
է թողութիւն խնդրելն՝ եթէ չը հեռա-  
նամք չարութենէ և չը մօտենամք առա-  
քինութեան :

**Ուրեմն՝** զգալով մեր տկարութիւնը  
և թերութիւնը , որով կը փորձուիմք մեր  
չորս կողմն պատած թշնամիներէն , աշ-  
խարհի որդիներէն , մէք չեմք կարող դի-  
մանալ , եթէ Աստուած մեզ հետ չը լինի .  
բայց եթէ Աստուած մեզ հետ է , ով է  
մեզ հակառակ :

**Աստուած է ,** որ ներգործութիւն ունի  
բոլոր բնութեան վերայ : Նա է , որ կը  
ներգործէ մեր հոգւոյ և սրտի վերայ տ-  
ռանց խելու մեր աղատութիւնը : Երբ  
կ'աղօթեմք Աստուծոյ՝ պէտք է խոհեմ և  
արթուն լինիմք փորձութիւնը ճանաչելու  
և հեռանալու : Պէտք է գործ դնեմք Աս-  
տուծոյ տուած ամեն օգնութիւններն և  
հնարքները , եւ այնպէս շարժուիմք մեր  
փրկութեան ճանապարհի վերայ , որ ոչ  
թէ միայն Աստուած լինի պատճառ մեր

փրկութեան իւր օգնութեամբ , այլ և  
մեք՝ մեր աշխատութեամբ գործակից լի-  
նելով Աստուծոյ : Այսպէս կը պատուիրէ  
մեղ մեր Փրկիչն ասելով՝ “ Արթուն կա-  
ցէք և աղօթս արարէք , զի մի անկանի-  
ցիք ’ի փորձութիւն ” : Մատ . իջ . 41 :  
Եթէ մեք ջերմեռանդութեամբ կը խընդ-  
րեմք Աստուծմէ , որ փրկէ զմեղ և մեր  
ընկերն ՚ի չարէն՝ պէտք է ուրեմն աշխա-  
տիմք հեռացնել , ինչպէս մեզմէ , նոյնպէս  
և մեր ընկերներէն փորձութեան ամեն  
պատճառներն , որ ոչ մեք ընկնիմք փոր-  
ձութեան մէջ և ոչ նոցա համար կորրո-  
տեան պատճառ լինիմք , փորձելով եւ  
գայթակղեցնելով մեր չար ցանկութեամբ :

**Տերունական աղօթքը** կը վերջանայ  
այս խօսքերով – Զի քո՞ է արքայութիւնն եւ,  
զօրութիւնն եւ , վասոք յափիուեանս յափիու-  
նից , ամէն : Այս Վերջաբառը մեղ կը  
յայտնէ՝ թէ ինչո՞ւ համար և ի՞նչ պատ-  
ճառաւ կ'աղօթեմք Աստուծոյ եւ ինչո՞ւ .  
կ'ասեմք այս աղօթքը պատուիլ , հեզու-  
թեամբ , հաւաստարմութեամբ : Ում կարող  
է ուղղել մարդ իւր աղօթքն և յումմէ  
կարող է սպասել փրկութիւն եւ երջան-  
կութիւն , եթէ ոչ այն ամենակարող էա-

կէն , որ բոլոր տիեզերաց թագաւորն է , որ միայն ունի փառք և իշխանութիւն և որոյ թագաւորութիւնը յաւիտենական է : Միայն նորա ողօրմութիւնը պէտք է որոնեմք աշխարհի մէջ յաւիտեանս յաւիտենից :

Այս երկու Յաւիտեանները կը նշանակեն Աստուծոյ ամենակարողութիւնն աշխարհիս վերայ : Մի Յաւիտեանը կը նըշանակէ աշխարհիս ստեղծուելէն առաջ , իսկ միւան աշխարհի և ժամանակի ստեղծուելէն յետոյ , այսինքն երկրորդ Գալուստն : Այսպէս ուրեմն՝ աշխարհի մի ծայրէն միւս ծայրն Աստուծոյ կը պատկանի Արքայութիւն եւ Զօրութիւն եւ Փառք :

Իսկ ամեն կը նշանակէ ճշմարիտ կամ իսկապէս , երբ կը դրուի նախադասութեան մէջ կամ ՚ի սկիզբն : Բայց եթէ վերջն դրուի , ինչպէս է Տէրունական աշղօթից մէջ , կը նշանակէ կատարեալ հաւասարմութիւն , որ կը լէ Աստուած մեր խնդրուածքը , կը կատարէ մեր ցանկութիւնը և ամենայն ինչ կը դարձնէ ՚ի փառը իւր :

Այս Տէրունական ազօթքը մէծ է և ճշմարիտ աստուածային ազօթք , որովհետեւ իւր մէջ կը բովանդակէ մի քանի խօս-

Քերոսլ պարզ խնդրուածներ , որք կը վերաբերին ամենակարեւոր շնորհաց : Այս խնդրուածոց կարգը և չափը կը տայ մեղաշմարիտ ճանաչողութիւն և կ'ուտաւցանեւորնեւ և խնդրել առաւել այն՝ ինչ որ կը վերաբերի Աստուծոյ փառաց և մեր հոգւայ փրկութեանն : Այս Տէրունական ազօթքը կարճ կը յայտնէ մեղ՝ թէ ինչ պէտք է խնդրել Աստուծմէ և ինչ զգացողութիւն պէտք է ունենալ աղօթելուժամանսիկ :

Այս աղօթքի զանազան մասները մեր աչաց առաջ կը ներկայացնեն հաւատոյ մեծ պատուիրանները և կը կնքեն նորաներգործութիւնը : Մեր միտն կը բերեն Քրիստոնէի գլխաւոր պարտաւորութիւնը — Ան առ, Աստուած եւ, առ, Ծնկերն — և կը տան կենաց գեղեցիկ կանոն :

Եթէ մեք ջերմեռանդութեամբ կ'ասեմբ այս Տէրունական Ազօթքը՝ պէտք է ուրեմն մեր կեանքն ևս վարել համաձայն մեր խնդրուածոց :



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

---

ԿՐՕՆԻ ՎԵՐԱՑ ԱՌՀԱՍՏՐԱԿ

<b>Աշանակութիւն Կրօնի</b>	1
Կարեւորութիւն Կրօնի	2
<b>Հիմն Կրօնի</b>	4
<b>Հաստատութիւն Կրօնի</b>	
" Մաքով . . . . .	4
" Խղճմտանքով . . . . .	6
" Ընդհանուր խոստովա .	
" Նութը ամենայն ազգաց .	9
" Աստուածաշունչ Գրքով .	9
<b>Հիմն և Նոր Կտակարան</b>	14
<b>Աւանդութիւն</b>	17
<b>Սուրբ Գիրքն Աստուածային է .</b>	19
<b>Հարկաւորութիւն ուսման Սուրբ</b>	
Գրոց . . . . .	26

ՀԱՒԱՏՈՅ ՎԵՐԱՑ ԱՌՀԱՍՏՐԱԿ

<b>Աշանակութիւն Հաւատոյ</b>	29
<b>Հիմն Հաւատոյ</b>	30

<b>ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱԽԱՏՈՅ . . . .</b>	<b>39</b>
<b>Առաջին մասն Հանգանակի – Հա-</b>	
<b>ւատամք ’ի մի Աստուած և այլն .</b>	<b>43</b>
<b>Կատարելութիւնք Աստուծոյ . . .</b>	<b>47</b>
<b>Արարչագործութիւնն Աստուծոյ .</b>	<b>58</b>
<b>Եախախնամութիւնն Աստուծոյ .</b>	<b>64</b>
<b>Երկրորդ մասն Հանգանակի – Հա-</b>	
<b>ւատամք եւ, ’ի մի Տէր Յիսուս</b>	
<b>Քրիստոս, և այլն . . . . .</b>	<b>75</b>
<b>Երրորդ մասն Հանգանակի – Հա-</b>	
<b>ւատամք եւ, ’ի Սուրբ Հոգին,</b>	
<b>և այլն . . . . .</b>	<b>101</b>
<b>Չորրորդ մասն Հանգանակի – Հա-</b>	
<b>ւատամք եւ, ’ի մի միայն զնդ-</b>	
<b>հաճրական եւ, առաքելական</b>	
<b>Սուրբ Եկեղեցի, և այլն . . .</b>	<b>113</b>
<b>ԽՈՐՀՈՒԹՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ . .</b>	<b>119</b>
<b>Խորհությ Մկրտութեան . . . .</b>	<b>119</b>
<b>” Դրոշմի . . . . .</b>	<b>126</b>
<b>” Ապաշխարութեան. . . .</b>	<b>128</b>
<b>” Հաղորդութեան . . . .</b>	<b>133</b>
<b>” Ամուսնութեան . . . .</b>	<b>140</b>
<b>” Զեռնադրութե կամ Կարդի</b>	<b>143</b>

„ Օ ԺԱՆ ՀԻՒԱՆԴԱՑ . . . . 144

Ա. Ղ. ՕԹՔԻ ՎԵՐԱՅ Ա. Խ ՀԱՍԱՐԱԿ

Նշանակութիւն աղօթից . . . . .	151
ՏԵՐՈՒՆԱԿԱՆ Ա. Ղ. ՕԹՔ . . . . .	165
Յառաջաբան Տէրունական աղօթից . . . . .	167
Առաջնինդրուածք Սուրբ Եղիշի անուն քո . . . . .	169
Երկրորդ խնդրուածք Եկեսցէ արքայութիւնն քո . . . . .	171
Երրորդ խնդրուածք Եղիշին կամք քո, որպէս յերկինս . . . . .	173
Չորրորդ խնդրուածք Զհաց մեր հանապազորդ . . . . .	175
Հինգերորդ խնդրուածք Եւ թող մեզ զպարտիս մեր . . . . .	180
Վեցերորդ խնդրուածք Եւ միտանիր զմեզ ՚ի վորձութիւն . . . . .	184
Վերջաբան Տէրունական աղօթից Զի քո և արքայութիւնն եւ . . . . .	190



ԵՐԵՄ	ՏՈՂ	ԱԽԱԼ	ՈՒՂԻԴ
2	19	աղասուելու	աղասուելու
5	15	աալ	տալ
7	5	աեսնեմք	տեսնեմք
12	16	Պօղոս	Պօղոս
20	6	կանգնեցող	կանգնեցնող
26	2	հոդւց	հոդւց
41	11	որ	որ
45	2	Դաւի	Դաւի
45	16	երկրարդ	երկրարդ
50	7	տուած	տուած
68	12	ազատութիւնը	ազատութիւնը
70	2	յանդիմանելու	խրատելու
71	12	անշաւնչ:	անշունչ:
84	19	ինչպէս	ինչպէս
85	21	եդ	ետ
91	4	Հանդանակի	Հանդանակի
95	4	Քրիստոփի	Քրիստոսի
145	21	մատարելու	մատակարարելու
144	9	կոչեսցեն	կոչեսցեն
176	16	զի	զի

